

ԸՆՏԱՆԻՔԻ ՆԵՏԱԶՈՏՄԱՆ
ՆԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՀ ԳԱՄ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
«ԱԿՈՒՆՔ» ԷԹՆՈՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ ԳԱՄ «Գիտություն» հրատարակչություն

ԵՐԵՎԱՆ 2001

ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ НАН РА
ЦЕНТР ЭТНОСОЦИОЛОГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ
"АКУНК"

ПРОБЛЕМЫ ИССЛЕДОВАНИЯ СЕМЬИ

Материалы республиканской научной сессии,
посвященной памяти
Эммы Тиграновны Карапетян

ЕРЕВАН 2001


INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY OF
THE NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA
CENTER FOR ETHNOSOCIOLOGICAL STUDIES "AKUNK"

PROBLEMS OF THE STUDY OF FAMILY

Materials of the Republican Conference in Memory of
Emma Karapetian

Yerevan 2001

ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
«ԱԿՈՒՆՔ» ԷԹՆՈՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆ



ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հանրապետական գիտաժողովի նյութեր նվիրված
Էմմա Կարապետյանի հիշատակին

A II
86670



Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի և «Ակունք» էթնոսոցիոլոգիական
հետազոտությունների կենտրոնի որոշմամբ

Պատ. խմբագիրներ՝

Դ.Ս. Վարդումյան

Լ.Ս. Վարդանյան

Ը 585 Ընտանիքի հետազոտման հիմնախնդիրները:
Գիտաժողովի նյութեր (խմբ.՝ Դ.Ս. Վարդումյան, Լ.Ս.
Վարդանյան, - Եր.: «Ակունք» 2001. -116 էջ)

Ընտանիքը որպես հասարակական կարևորագույն հաստատություն, մեր քաղաքայնա-
ցված ժամանակաշրջանում ազգապահպանման գրավականն է: Հենց ընտանիքում են
գոյատևում ժողովրդի էթնիկ առանձնահատկությունները, ազգային ավանդույթներն ու
արժեքները: Շուկայական հարաբերությունների պայմաններում այն նորովի երանգա-
վորումներ և դրսևորում է ստանում:

Հայոց ավանդական և մերօրյա ընտանիքի ուսումնասիրության գործում մեծ է պատմա-
կան գիտությունների դոկտոր Էմմա Կարապետյանի դերը: Վաստակաշատ ազգագրագետի
հիշատակին նվիրված սույն գիտաժողովի նյութերն ընդգրկում են ընտանիքի համա-
կողմանի հետազոտման հիմնախնդիրներն ու մոտեցումները:



ԷՄՄԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
1920-1997

ԷՄՄԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
(գիտնականի բնութագրության փորձ)

Էմմա Կարապետյանի անունն անխզելիորեն կապված է հայ պատմագիտության հետ: Պատմական գիտությունների դոկտորը, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագագույն մասնագետն իր գիտաստեղծագործական կյանքն անմնացորդ նվիրեց հայ ավանդական և արդի ազգագրության կազմակերպմանն ու զարգացմանը:

Էմմա Տիգրանի Կարապետյանը ծնվել է 1920 թ. հուլիսի 10-ին, ՀՀ Արմավիրի մարզի համանուն գյուղում, մանկավարժների ընտանիքում: Միջնակարգ կրթությունն ստացել է Մոսկվայում, ուր տեղափոխված է եղել նրանց ընտանիքը 1930 թ.: 1938 թ. ընդունվել է Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, բայց Հայրենական Մեծ պատերազմն սկսվելու պատճառով, 1941 թ., ընտանիքով տեղափոխվում է Երևան, ուր և շարունակում է կրթությունը Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում, որն էլ ավարտում է 1944 թ.:

1945 թ. է. Կարապետյանն ընդունվում է Հայաստանի ԳԱ Պատմության ինստիտուտի ասպիրանտուրան "հայ ազգագրություն" մասնագիտությամբ և ուղարկվում Մոսկվա՝ ԽՍՀՄ ԳԱ Ազգագրության ինստիտուտ, ուր նրա գիտական ղեկավարն է դառնում հայրենական գիտության ականավոր հետազոտող, պատմական գիտությունների դոկտոր Մարկ Օսիպովիչ Կոսվենը, որպիսի պարագան բախտորոշ նշանակություն է ունենում որպես ազգագրագետ է. Կարապետյանի ձևավորման և հետաքրքրությունների շրջանակը վերջնականապես ճշգրտելու առումով: 1949 թ. հաջողությամբ ավարտելով ասպիրանտուրան, նա պաշտպանում է թեկնածուական ատենախոսությունը "Գլխագինը հայոց հարսանեկան սովորույթներում և դրա սոցիալ-տնտեսական արմատները" թեմայով:

Է. Կարապետյանի շուրջ կեսդարյա արդյունավետ ստեղծագործական գործունեությունն ընթացել է Հայաստանի Գիտությունների ակադեմիայի համակարգում, ուր նա կրտսեր գիտաշխատողից հասել է գլխավոր գիտաշխատողի և բաժնի վարիչի պաշտոնի, պատմական գիտությունների դոկտորի աստիճանի:

Է. Կարապետյանը 1949-1953 թթ. եղել է Հայաստանի պատմության պետական թանգարանի, 1953-1955 թթ.՝ ԳԱ Պատմության ինստիտուտի

գիտաշխատող: Այնուհետև, 1959 թ., գիտահետազոտական նոր կենտրոն՝ ՀԽՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ ստեղծվելու օրից մինչև մահ նրա գիտական հանուր գործունեությունն անքակտելիորեն կապված մնաց այդ հաստատության հետ, որի հիմնադիրներից մեկն էլ ինքն էր:

Է.Կարապետյանի գիտական հետաքրքրություններն ընդգրկում են առավելապես հայոց ընտանիքի և ընտանեկան հարաբերությունների շրջանակը պատմական ետադարձ կտրվածքով, ընդհուպ մինչև նորագույն ժամանակները, որին մեծապես նպաստել է նաև ետպատերազմյան շրջանի կովկասագիտության բուռն վերելքը: Լինելով հիմնավոր ազգագրական կրթություն ստացած ժամանակի հազվագյուտ մասնագետներից մեկը Հայաստանում, նա բազմափորձ դաշտային ազգագրագետի հմտություններն արդյունավետորեն զուգակցել է հետազոտող-տեսաբանի բարձր որակավորման հետ: Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բազմամյա ազգագրական գիտարշավների ընթացքում հավաքած հարուստ դաշտային նյութը, զուգակցած նախախորհրդային շրջանի ազգագրական նյութի և միջնադարյան գրավոր սկզբնաղբյուրների տվյալների մանրազնին քննության հետ, պատմահամեմատական ետադարձ վերլուծության մեթոդի կիրառմամբ, Է.Կարապետյանը լուսաբանել է հայոց ամուսնության, ընտանիքի և ազգակցական հարաբերությունների ձևերն ու էությունը սոցիալ-նորմատիվային մշակույթի և ծիսական ավանդույթների ու արարողակարգի բարդ համապատկերում: Նրա այնպիսի աշխատություններ, որպիսիք են „Գլխագինը հայոց հարսանեկան սովորույթներում և դրա սոցիալ-տնտեսական արմատները“ (1950), „Հայոց ընտանեկան համայնքը“ (1958թ.), „Հայոց արենակցա-ազգակցական „ազգ“ խումբը“ (1966), „Հայոց օժիտը“ (1978) և այլն հիմնարար մենագրություններ եղան ոչ միայն հայ, այլև կովկասագիտական ազգագրության մեջ առհասարակ: Նրա „Հայոց ընտանեկան հարաբերությունները և պատրոնիմիան“ աշխատությունը ներկայացվեց որպես դոկտորական ատենախոսություն և 1967թ. հաջողությամբ պաշտպանվեց Թբիլիսիում:

Է.Կարապետյանի ժառանգությունն ընդգրկում է գիտական այլ առումներ ևս: 1950-1970-ական թթ. հանրապետական և համամիութենական մամուլում նա հանդես է եկել ինչպես հայ ազգագրության կենսական պրոբլեմները լուսաբանող („Խորհրդահայ ազգագրության մի քանի խնդիրներ“ (1952), „Խորհրդային Հայաստանի բանվորների արտադրական կենցաղի ուսումնասիրման փորձ“ (1953)), այնպես էլ անցյալի պատմագիտական հասումներն ընդհանրացնող („Ազգագրական հանդես“ հայերեն պարբերականի 60-ամյակը, 1956) մի շարք հոդվածներով: Է.Կարապետյանն անսալով ժամանակի ծայնին, Դ. Վարդույանի հեղինակցությամբ աշխատասիրեց „Հայաստանի կոլտնտեսականների ընտանիքը և ընտանեկան կենցաղը“ (1963) մենագրությունը: Է.Կարապետյանն ամենագործուն մասնակցություն է ունեցել „Աշխարհի ժողովուրդները“ մատենաշարի „Կովկասի ժողովուրդները“ հատորի (Մոսկ-

վա, 1962) "Չայեր" բաժնի շարադրմանը (Ս. Տ. Երենյանի, Ս. Դ. Լիսիցյանի, Դ. Ս. Վարդումյանի հետ միասին): Նա նաև զգալի գործ արեց Չայաստանի պատմազգագրական ատլասի կազմման ուղղությամբ, գլխավորելով տարագի ու զարդարանքի բաժինը, անձամբ շարադրելով "Չայոց գլխանոցները" գլուխը (քարտեզներով և նկարազարդմամբ):

Է. Կարապետյանի բազմաբնույթ գործունեության մեջ հատուկ տեղ է գրավում էթնոսոցիոլոգիական հետազոտությունների կազմակերպումը Չայաստանում: Չենց նրա ջանքերով էր, որ Չնագիտության և ազգագրության ինստիտուտում ստեղծվեց, նախ, արդիականության ազգագրության խումբը (1974), որը շուտով վերաճեց էթնոսոցիոլոգիայի խմբի (1976), ժամանակի ընթացքում կազմավորվելով որպես էթնոսոցիոլոգիայի բաժին (1981), որը հենց ինքն էլ գլխավորեց շուրջ մեկուկես տասնամյակ: Ըստ էության, Է. Կարապետյանի անվան հետ է կապված էթնոսոցիոլոգիական հետազոտությունների բոլորովին նոր, արդիական ուղղության զարգացումը Չայաստանում, նախկին ԽՍՀՄ-ում դառնալով առաջիններից մեկը (Թաթարստանից և Սոլդովայից հետո): Սկզբնապես ուսումնասիրություններն արվում էին սերտորեն համագործակցած Ռուսաստանի ԳԱ Ազգաբանության և մարդաբանության ինստիտուտի սոցիոլոգիայի բաժնի վարիչ Յու. Վ. Չարոթյունյանի հետ՝ նրա կազմած "ԽՍՀՄ ազգերի զարգացման ու մերձեցման սոցիալ-մշակութային առումները" համամիութենական ծրագրով: Իրեն հատուկ ջանադրությամբ և պահանջկոտությամբ, Է. Կարապետյանը ոչ միայն ղեկավարում էր էթնոսոցիոլոգիական հետազոտությունների կազմակերպումը, այլև ինքն իսկ գործուն մասնակցություն էր բերում որպես ուսումնասիրման նախնական օբյեկտ ընտրած Երևանի բնակիչների հարցմանը: Արդյունքում իր և Յու. Վ. Չարոթյունյանի խմբագրմամբ լույս ընծայվեց "Երևանի բնակչությունը. էթնոսոցիոլոգիական ուսումնասիրություններ" (1986) կոլեկտիվ մենագրությունը (ռուս.), որի կարևոր բաժիններից մեկը՝ "Ընտանիքի էթնիկական յուրահատկությունները", պատկանում է նրա գրչին: Չեղազա տարիներին, Է. Կարապետյանի անմիջական ղեկավարությամբ և եռանդուն գործակցությամբ, իրագործվեցին Չայաստանի զանազան պատմազգագրական մարզերի քաղաքային և գյուղական բնակչության էթնոսոցիոլոգիական հարցումներն ու հետազոտությունը, ինչպես նաև Երևանի բնակչության կրկնակի հարցումը (1992), որի արդյունքը եղավ նրա "Չայոց ընտանիքը և ազգակցական հարաբերությունները" ձեռագիր աշխատանքը:

Չարկ է նշել, որ էթնոսոցիոլոգիայի բաժնի լայնածավալ հետազոտությունների արդյունքները, գիտականից բացի, ունեն կարևոր ճանաչողական կիրառական նշանակություն մեր նորանկախ պետության կերտման գործում:

Է. Կարապետյանը որպես գիտնական, միշտ ունեցել է ակտիվ քաղաքացիական դիրքորոշում: Նա տարիներ ի վեր եղել է Չնագիտության և ազգագրության ինստիտուտի ընթացիկ գիտական խորհրդի անդամ, հնագիտության և ազգագրության մասնագիտացմամբ դոկտո-

րական և թեկնածուական ատենախոսությունների պաշտպանության գիտական խորհրդի փոխնախագահ, ղեկավարել է մի շարք ասպիրանտների ու դիսերտանտների: Երկու անգամ մասնակցել է Սարդաբանների և ազգագրագետների միջազգային գիտաժողովներին՝ 7-րդին (Մոսկվա, 1964) և 11-րդին (Վանկուվեր-Քվեբեկ, 1983), նաև խորհրդավներիկյան "Էթնոսն իր և այլազգի միջավայրում" (Հայաստան, 1987) Միջազգային սիմպոզիումին:

Էմմա Կարապետյանը որպես մասնագետ և մարդ մեծ համարում ուներ ոչ միայն Հայաստանի, այլև Թբիլիսիի, Մոսկվայի, Սանկտ-Պետերբուրգի և մասնագիտական այլ կենտրոնների գործենկերների միջավայրում: Նա սկզբունքային ու նպատակասլաց վառ անհատականություն էր: Թե՛ գիտության մեջ, թե՛ կյանքում կարողանում էր շուրջը համխմբել համախոհների կուռ կոլեկտիվ, որպես քննախույզ հետազոտող վարակելով իր կրտսեր, թե ավագ գործընկերներին:

Էմմա Կարապետյանի գիտական ժառանգությունը մեծ ներդրում է հայ ազգագրության բնագավառում:

Պատմական գիտությունների դոկտոր

Էմմա Տիգրանի Կարապետյան. հիմնական աշխատությունների ՑՈՒՑԱԿ

Выкуп в свадебных обрядах армян и его социально-экономические корни. — "Աշխատություններ" Հայաստանի պետ. պատմական թանգարանի, հ. 3, Եր., 1950:

Свадебные обряды у армян. — Труды Института истории Грузии, т. 2, Тбилиси, 1951.

О некоторых задачах советской этнографии. — "Տեղեկագիր" Հաս.գիտ., Եր., 1952, 1 (համահեղինակ՝ Դ. Վարդունյան):

Опыт изучения производственного быта рабочих Советской Армении. — «Տեղեկագիր», 1953, 12:

К 60-летию армянского этнографического периодического издания "Азгагракан андес". — Советская этнография, 1956, 2.

Տանու ծառաների ինստիտուտը Հայաստանում. — "Տեղեկագիր", 1957, 9:

Армянская семейная община, Ер., 1958.

Армяне. — Народы Кавказа (серия "Народы мира"), т. 2, М., 1962. (в соавт. с С. Д. Лисицианом, С. Т. Еремяном, Д. С. Вардумяном и др.).

Հայաստանի կոլտնտեսականների ընտանիքը և ընտանեկան կենցաղը, Եր., 1963 (համահեղինակ՝ Դ. Վարդումյան):

Պատրոնիմիայի վերապրուկները հայոց մեջ. — "Տեղեկագիր", 1963, 4:

Пережитки патронимических отношений у армян (II пол. XIX - нач. XX в.) — VII МКАЭН. М., 1964.

Survivals of patronimic relations among Armenians (the second half of the XIX and the begining of the XX centure), т. 10, "Труды" МКАЭН, М., 1970.

Об одном персонаже армянской свадьбы. — Պատմա-րանասիրական հանդես, 1965, 2:

Формы собственности семейной общины у армян. — Всесоюзная сессия, посвященная итогам полевых археологических и этнографических исследований в СССР в 1964 г. Тезисы докладов, Баку, 1965.

Кровно-родственная группа "азг" у армян, Ер., 1966.

Семейные отношения и патронимия у армян. Автореферат диссертации на соискание ученой степени доктора исторических наук, Тбилиси, 1967.

Գրախ. Վ. Բղոյան, Հայ ազգագրություն, Եր., 1974. — Պատմա-րանասիրական հանդես, 1975, 1:

Օժիտը հայոց մեջ, Եր., 1978:

Traditions and processes at emansipation in the urban Armenian family. XI CAES, Vancouver-Quebec, 1983. — Studies in Ethnography and anthropology, part I, Moscow, 1983.

Этнические особенности армянской семьи. — Население Еревана, Этносоциологические исследования Ер., 1986.

Ред. Население Еревана. Этносоциологические исследования, Ер., 1986 (совместно с Ю. В. Арутюняном).

Է. Կարապետյան, Ս. Պողոսյան, Հայ ընտանիք. պրոբլեմներ և հեռանկարներ. – Հայաստանի աշխատավորուհի, 1997, 1-3:

Головные уборы у армян (в аспекте историко-этнографического атласа (рукопись).

Современная семья и родственные отношения у армян (опыт этносоциологического исследования) (рукопись).

Սվետլանա Պողոսյան
ՀԱԻ

ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԾ ՏԻԿԻՆԸ. ԴԻՄԱԳԻԾ

Կյանքի 77-ամյակում հավերժի ճանապարհը բռնեց պատմական գիտությունների դոկտոր, ազգագրագետ-էթնոսոցիոլոգ, էթնոցոսիոլոգիական հայ դպրոցի հիմնադիր Էմմա Տիգրանի Կարապետյանը: Նա ապրեց լի, հագեցած ու ստեղծագործ կյանք, դարձավ մեծ մայր, տեսավ թոռնուհու որդուն՝ ծոռին, և արևը բաշխեց ողջերին ... Էմմա Տիգրանովնան լուրջ գիտնական էր, հեղինակ մի շարք աշխատությունների և հոդվածների: Գիտական հետաքրքրությունների հիմնական շրջանակն ընտանեկան, դրացիական և ազգակցական համակարգի, հայոց տարագրի (հատկապես գլխի հարդարանքի) ազգաբանական և էթնոսոցիոլոգիական ուսումնասիրություններն էին: Եվ քանի որ թեկնածուականատենախոսությունս նվիրված պիտի լիներ հայոց տարագրին՝ ինձ գիտական ղեկավար նշանակվեց Էմմա Կարապետյանը: Որպես գիտղեկավար, նա խստապահանջ էր, ցույց էր տալիս ուղին ու ինքդ պիտի հասնեիր դրան: Ատենախոսական աշխատանքի պաշտպանությունից հետո էլ մեր համագործակցությունը շարունակվեց: 1996թ. Էմմա Տիգրանովնայի հետ «Հայաստանի աշխատավորուհի» ամսագրում հատուկ բաժին էինք բացել՝ «Հայ ընտանիքի պրոբլեմները և հեռանկարները» խորագրով (նրա առաջնորդող հիմնադրույթներով):

Է. Կարապետյանը փառահեղ կին էր, տիկին բառիս բուն իմաստով՝ ինքնատիպ աշխարհայացքով, մտածողությամբ, առօրյայով և ազնվականի կեցվածքով: Նա «ամագոնուհի» էր, անգիջում գործընկեր, ուժեղ մրցակցուհի, խիստ ընդդիմախոս, հմուտ ղեկավար ու կամային ուժեղ անհատականություն: Մարդկային ոչինչ խորթ չէր նրան. նա տրամադ-

րության մարդ էր թե՛ գիտական, թե՛ առօրեական հարցերում, համակրությունների և հակակրթությունների մեջ սկզբունքային ու հետևողական: Նրան խորթ չէին յուրայինների, իրեն համակրելի մարդկանց ցավերն ու հոգսերը: Հաճախ մոռացած սեփական ցավը (առողջությունը խաթարված էր), մտահոգ էր մտերիմների կյանքի, առողջության հարցերով: Լինելով հմտալից մասնագետ՝ շատ կարևորում էր ընտանիքի դերը կնոջ, հատկապես գիտնական կնոջ կյանքում: Էմմա Տիգրանովնան նուրբ հոգեբան էր, ուներ հզոր ներգզացողություն, որի շնորհիվ կարող էր նույնիսկ անծանոթ մարդկանց կյանքին, ապագային վերաբերվող ուշագրավ դրվագներ կանխատեսել: Նա հետաքրքիր զրուցակից էր. խոսքը՝ դիպուկ և համեմված սուր հումորով: Միևնույն ժամանակ լավ ունկընդիր էր: Չնայաց առաջացած տարիքին, դիրքին և հեղինակությանը՝ շատ շփվող էր, անմիջական, հավասարը հավասարի վերաբերվելով ամեն մարդու, հաշվի չառնելով դիմացինի կարգավիճակը, դիրքը, կրթական մակարդակը, յուրաքանչյուրին մոտենալով յուրովի, հարգալից: Ազնվական խառնվածք ու կեցվածք ուներ: Իր մասին կատակով ասում էր. *“Я женщина не красивая, но чертовски обаятельная”*. 3. Օրբելին նրա մասին ասել է. *“княгиня кургузюлинская”*: Լուրջ գիտնական լինելով հանդերձ, կանացի էր, սիրում էր անքերի հագնվել, կրել արդուզարդ, և միշտ՝ ճաշակով: Էմմա Տիգրանովնան ուժեղ էր, կենսախիճ, անգամ կյանքի վերջին օրերին: Նույնիսկ հիվանդության սուր պահերին չէր կորցնում գեղեցիկի նկատմամբ բնատուր հակումը: Արդեն մահվան շեմին հիանում էր բուժքրոջ գեղեցկությամբ: Շատ էր գնահատում կյանքը, գեղեցիկը:

Սիրում էր համով ուտելիքներ ու խմորեղեն պատրաստել: Շատ-շատ սիրում էր ծաղիկներ նվիրել՝ մերժելով այլ տեսակի ընծաները: Անչափ սիրում էր կարդալ, սուրճ խմել և ծխախոտ ծխել: Նրա տան ներքին տեսքը, հնաոճ կահույքը և գեղագիտական բարձր արժեքի իրերն ու կտավները, առավել ամբողջական էին դարձնում Էմմա Տիգրանովնայի կերպարը, ընդգծելով նրա բնածին կանացիությունն ու փառահեղությունը:

Էմմա Տիգրանի Կարապետյան լույսի, ջերմության, խելացիության և կանացիության ինքնատիպ զուգակցմամբ միկրոտիեզերք, որի բացակայությունը մշտապես կզգա նրա հետ ի մոտ շփված յուրաքանչյուր մարդ ...

ԱԶԳ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, Թ՞Ե ԸՆՏԱՆԻՔ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆ.
ՀԱՅ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երբ 19-րդ դ. եվրոպայում այսօրվա իմաստով առաջացան nation և nationalism(e) հասկացությունները¹, հայերը, ըստ իրենց լեզվի «թարգմանչական» մոդելի², փորձեցին համապատասխան բառով արտահայտել այդ նոր հասկացությունը: Նախապատվությունը բնականորեն տրվեց *ազգ* բառին, քանզի լատիներեն *natio* բառի նման այն ներառնում էր «ցեղ», «տոհմ», «ժողովուրդ», «կարգ», «դաս» իմաստները: Սակայն, ընդունելով այդ նոր իմաստը³, հայերեն *ազգ* բառը, ի տարբերություն չթարգմանված *nation* օտար բառի, այնուամենայնիվ, չի կորցնում իր սովորական «ցեղային» իմաստը⁴: Հիշենք թեկուզ լայնորեն կիրառվող *ազգանուն* բառը, որը զուրկ է նոր՝ վերացական իմաստի երանգներից և, ընդհակառակը՝ թվում է, հետ է տանում ազգ/ nation հասկացությունը դեպի ցեղային իրողություն: Ընդ որում, «ցեղային» աշխարհայացքը կարծես դեռ ամուր հիմքեր ունի հայերի մեջ և միայն *ազգ* բառի ձգողական ուժով չի պայմանավորված: Հիշենք թե ինչպես ազգասիրական նկատառումներից ելնելով՝ ոմանք համաշխարհային դասին պատկանող քրիստոնեությունից ձգտում են ներփակվել «ցեղակրոնի» սահմաններում:

Թեև *ազգ* բառն անմիջականորեն չունի «ընտանիք» նշանակությունը (հայերենում այդ սեմանտիկ խորշն զբաղեցնում է *գերդաստան* հասկացությունը), այնուամենայնիվ, այն աղերսվում է նույն «մեծ-ընտանիքային» սեմանտիկ դաշտին: Պատահական չէ, որ Երևանի փողոցներում այսօր երիտասարդներն անծանոթ հասակակցին դիմում են «ապեր» («եղբայր») կամ «քույրիկ», իսկ անծանոթ ավագ սերնդի ներկայացուցչին՝ սովորաբար «հոպար» («հորեղբայր») կամ «մորքուր», տարեց կանանց՝ «մայրիկ» անվանելով: Ավելի հազվադեպ է օգտագործվում «հայրիկ» դիմելաձևը, համենայն դեպս «ապեր», «հոպար» օգտագործողնե-

¹ Տե՛ս E.Gellner. Nations and Nationalism. Oxford, 1983; E.Hobsbawm. Nations and Nationalism since 1987. Cambridge, 1990.

² Տե՛ս L.Abrahamian. Mother Tongue: Linguistic Nationalism and the Cult of Translation in Postcommunist Armenia. – Berkeley Program in Soviet and Post-Soviet Studies, Working Paper Series. Summer, 1998.

³ Ստ. Մալխասյանցի Հայերեն բացատրական բառարանում (հ.1, Եր., 1944) այդ նոր իմաստը հիշատակվում է համար 3 կետով (էջ 8):

⁴ «Ազգի» ավանդական այդ նշանակությանն են նվիրված Է.Տ.Կարապետյանի "Армянская семейная община", Եր., 1958 և «Родственная группа «азг» у армян», Եր., 1966, դասական դարձած ուսումնասիրությունները:

րի շրջանում⁵: Ավելի երիտասարդները տարեցներին դիմում են «տա-տի»/«պապի» անվանելով՝ ինչպես ռուսները: Այսինքն, ամբողջ հայ հանրությունը՝ ազգը, մոդելավորվում է ընտանիքի ձևով. զավակներ, ծնողներ՝ հայր, մայր և վերջիններիս եղբայր/քույրեր⁶: *Ազգի* նման «մեծ ընտանիքային» համատեքստը, որը բացակայում է *natio* բառում և դրա-նից սերված բոլոր հասկացություններում, չի կարող որոշակի ընտանե-կան երանգներ չհաղորդել ազգ/ nation և նմանատիպ հայեցի գաղափարներին: Մասնավորապես, այն կարող է բացատրել հայկական ազգ-պետության (nation-state) պարադոքսալ հարումը դեպի «ընտա-նիք-պետություն»: Այսպես, բազմիցս արժարժվող կլանային համակար-գը Հայաստանում ընդգրկում է բոլոր կառույցները՝ բուն ընտանիքից և այսօրվա սակավաթիվ աշխատանքային կոլեկտիվներից՝ մինչև գերա-գույն իշխանություն: Նույնիսկ 1999 թ. հոկտեմբերի 27-ին ազգային ժո-ղովի պատգամավորներին գնդակահարող ահաբեկչական խումբն ար-տահայտված ընտանեկան/կլանային բնույթ ուներ: Նշենք, որ հայերի հաճախ հայտարարվող ինդիվիդուալիզմը՝ անհատապաշտությունը, ներգրավում է նաև ընտանիքը. սովորաբար անհատը հանդես է գալիս ընտանյոք հանդերձ, թեև վերջինս արտաքնապես չի բացահայտվում. այսինքն, կարելի է ասել, որ հայի անհատապաշտությունն իրականում մի յուրահատուկ «ընտանիքապաշտություն» է:

Ընտանիք բառը, որպես *ընտանիքների* ազգականների, տնեցիների բազմություն, իր հերթին, հայ ինքնությանը ցուցում է տան կարևորու-թյունը՝ ազգ-ընտանիքը պատկերացվում է տան մեջ համախմբված: Այս բանալ փաստը՝ հայերի ընտանիքի և տան հանգուցային արժեքը, որ բազմաթիվ ապացույցներ ունի նաև ազգագրական ոլորտում, ի տարբե-րություն ուրիշ լեզուների, հայերենում հավաստվում է նաև ստուգաբա-նորեն⁸: *Տուն* նշանակում է նաև տան բնակիչներ, ազգատոհմ, ցեղ և, ավելի լայն առումով՝ երկիր, աշխարհ⁹: Ընդ որում, ազգագրական նյու-

⁵ Եվ, ընդհակառակը, «հայրիկ» բառով դիմողները սովորաբար չեն օգտագործում «հո-պար» դիմելաձևը: «Մայրիկ»-ի գերակշռումը «հայրիկ»-ի նկատմամբ համեմատելի է «պա-րոնի» նկատմամբ «տիկին» դիմելաձևի «հաղթանակին»՝ նույնիսկ այսօրվա «պարոնի» պաշտոնական արդարացման պարագայում:

⁶ Այն, որ դիմելաձևերի այս համակարգում, որպես կանոն, բացակայում են «հորքուրը» և «քեռին», վկայում է ոչ թե ինչ-որ պատմական փուլերի (հայրիշխանություն / մայրիշխա-նություն) արձագանքների, այլ հենց զավակ, հայր, մայր դասական ընտանեկան եռյակի մասին: «Հուպարը» հանդես է գալիս որպես «ընդլայնված» հայր, իսկ «մորքուրը»՝ որպես «ընդլայնված» մայր: Ռուսական հայրական/մայրական գծերով չտարբերակվող և ավելի վերացական «АЯДЯ» և «ТЕТЯ» դիմելաձևերը մրազնեցնում են ռուս ազգի «ընտանեկան» ի-մաստը:

⁷ Ավանդական ընտանեկան/կլանային կոդմոնորոշումը գյուղում այսօր խոչընդոտում է մի-ջազգային կազմակերպությունների կողմից կիրառվող այն փորձնական ծրագրերը, որոնք հիմնված են համայնական սկզբունքի վրա: Հմմտ. Ռուսաստանում Ստոլիպինի տնտեսա-կան ռեֆորմների հետ, որոնք ուղղված էին, ընդհակառակը, ավանդական գյուղական հա-մայնական կառուցվածքի դեմ:

⁸ Տե՛ս *Չր.Աճառյան*, Հայերեն արձատական բառարան, Դ հատ., Եր., 1979, էջ 427-428:

⁹ Անդ:

թից ելնելով, այդ աշխարհը ոչ միայն աշխարհագրական իմաստ ունի, այլև տիեզերական¹⁰: Այսինքն՝ հայկական ազգ-պետությունը ոչ միայն «ընտանիք-պետություն» է, այլև՝ «տուն-պետություն»:

Եթե անգլիացու համար իր տունն ամրոց է, ապա հայինը՝ տիեզերք, որտեղ նա արարչի դեր է ստանձնում: Որոշ տոների ժամանակ նա ավանդական գլխատան առաստաղին ալյուրով աստղեր է պատկերում (արարում)¹¹, իսկ ժամանակակից բնակարանն ստանալիս, որպես կանոն, հաճախ լիովին ձևափոխում է հատակագիծը՝ իր սեփական տիեզերքն արարելու նպատակով¹²:

Ըստ է.Գելների, ժամանակակից ազգ/ nation գաղափարն ազգ-պետության սահմաններում շարժունակություն է ենթադրում, որն ապահովում է ազգի համասեռությունը: ԱՄՆ-ում այս սկզբունքը լավագույնս իրագործվում է և՛ ընտանիքի, և՛ տան առումով: Դրանով էլ բնորոշվում են ամերիկյան տիպական առանձնատների կառուցման սկզբունքները՝ արագ, թատերական դեկորացիայի նման, յոթ-ութ տարի բնակվելու հեռանկարով: Հայաստանում, սակայն, տուն կառուցելը բոլորովին հակառակ սկզբունքների է ենթարկվում. տունը պետք է կառուցվի հիմնովին՝ միտված հավերժությանը¹³: Դա զարմանալի չի թվա, եթե հաշվի առնենք տան տիեզերական առումը: Խորհրդային շրջանում ընդունված պարտադիր գրանցման սկզբունքն է՛լ ավելի գամեց տունը գետինին՝ հավելյալ հավերժական արժեք պարգևելով դրան:

Բնական է, որ ներկայիս ճգնաժամն ամենազգալի հարվածը հասցնում է հենց ընտանիքին և տանը՝ հայ ինքնության գլխավոր պարադիգմներին: Այսպես, հաշվի առնելով, որ հայի համար տունն այն տիեզերքն է, որից դուրս, ինչպես ժամանակակից տիեզերաբանական տեսություններում, ոչինչ գոյություն չունի, դրա հանդեպ վերաբերմունքի ամեն մի ձևափոխում կարող է վկայել հայ ազգի հոգեբանական լուրջ տեղաշարժերը: Եթե թեկուզ ելնենք «տունդ շեն մնա»/ «տունդ քանդվի» տան հայտնի գաղափարախոսության բանաձևերից, ապա շինանյութ վաճառելու նպատակով սեփական տունը քանդելու վավերագրված փաստերը¹⁴ պետք է ազդարարեն հայոց «տիեզերքի» կործանումը: Ճիշտ է, երկ-

¹⁰ Հմմտ. Հ.Մարությանի «Տունը որպես աշխարհ» գլուխը «Armenian Folk Arts, Culture, and Identity» գրքում (L.Abrahamian, N.Sweezy /eds./, Indianapolis, 2001.):

¹¹ Գլխատան կառուցվածքը տիպաբանորեն համադրելի է տիեզերքի եռամաս կառուցվածքի հետև. օջախ/թոնիր (ներքևի աշխարհ), երդիկ (վերևի աշխարհ), բուն տան տարածք (միջին աշխարհ)՝ իրենց հատուկ «բնակիչներով» ստորգետնյա, երկնային և երկրային: Միջին աշխարհում են բնակվում մարդիկ (ընտանիքը) և կենդանիները (գլխատան համալիրում պահվող անասունը):

¹² Այդ պատճառով, վկայում է խորհրդային ժամանակների անեկդոտը, հայերին «Ռոսիա» հյուրանոցում երեք օրից ավել սենյակ չէին տրամադրում՝ որպեսզի չուշաբանդ չկառուցեին:

¹³ Ճիշտ է, 1988 թ. ավերիչ երկրաշարժը խիստ կասկածի տակ դրեց այդ իդեալական պատկերացումը:

¹⁴ Տե՛ս Հ.Մարության, Փոխվե՛լ են, արդյոք, հայերը. - Պատմություններ աղքատության մասին, Եր., 2001, էջ 400: Շատ գյուղերում շինանյութն ավելի բարձր է գնահատվում, քան դրանով կառուցված տունը:

րից հեռանալու նպատակով սեփական ձեռքով տուն քանդելը գլխավորապես փախստականներին է վերաբերվում, որոնք արդեն կորցրել են իրենց հին տուն-տիեզերքը, իսկ Հայաստանում ձեռք բերած նոր տունը դեռ չի հասցրել «տիեզերական» դառնալ: Հայրենիքը լքող տեղացիները, որոնց բանակը տակավին տագնապալիորեն մեծանում է, կարծես դեռ հակված են պահպանելու տունը, այն որևէ բարեկամի տրամադրելով՝ որպես վերադառնալու նախադրյալ: Գիշտ է, ամերիկյան դեսպանատան մոտակայքում, ուր մշտապես ձգվում է երկիրը լքել ցանկացողների հերթը, անշարժ գույքի վաճառքի մասին 1990-ական թթ. վերջերին ձեռներեց մարդկանց տեղադրած հայտարարության փաստն արդեն իսկ հակառակ միտման վկայությունն է:

Ընտանիքը նույնպես տագնապալի ազդանշաններ է ցուցաբերում: Այստեղ չենք անդրադառնա ընտանիքի կառուցվածքային ձևափոխումը վկայող այնպիսի կարևոր գործոններին, ինչպիսիք են դրա անդամների դերերի փոփոխումը, առանձնապես երբ այդ անդամները ներկայացնում են ավագ (կրտսեր, տղամարդ) կին տիպի հակադրությունների բևեռները: Նման կառուցվածքային հիմնական հակադրությունների ձևափոխումն ու վերափոխման փորձերը խիստ կարևոր է սոցիալական գնահատումներ և կանխագուշակումներ անելու առումով, քանի որ հենց այդ հակադրություններն են ազդարարում հասարակության խորքային ձևափոխումները: Այս հարցը կարոտ է հատուկ ուսումնասիրության, քանի որ գործ ունենք երկարատև գործընթացների հետ¹⁵ (ճգնաժամը և սոցիալիզմից կապիտալիզմ աննախադեպ անցումը չափազանց երկարեց), և նշված հակադրություններից նույնիսկ մի քանիսի ձևափոխումը (օրինակ՝ տղամարդ (կին, մեծ) փոքր, հարուստ/աղքատ) կարող է զգալիորեն ձևափոխել հայ ազգ/ընտանիք-պետությունը:

Սակայն պետք է ասել, որ չնայած նշված և այլ վտանգներին, որոնք իրականում սպառնում են հայոց արդի ընտանիքին, վերջինս հաճախ վտանգված և նույնիսկ անվերադարձ կործանված է համարվում նաև ուսումնասիրողի մոտեցմամբ պայմանավորված երևակայական պատճառներով: Այսպես: Երևանաբնակ բանասացը հայտարարում է, որ ճգնաժամի հետևանքով ընտանեկան կապերը խիստ թուլացել են, այնպես որ իր մորաքույրը հեռավոր գյուղից չի կարողացել գալ՝ ընտանեկան կարևոր տոնին մասնակցելու: Հետազոտողը կարող է եզրակացնել (ինձ հայտնի երկու դեպքում օտարերկրյա ուսումնասիրողն այդպես էլ անում է), որ Հայաստանում ներկա ճգնաժամը հանգեցնում է ընտանիքի զգալի քայքայմանը՝ չճշտելով, թե բանասացն ի՞նչ իմաստով է օգտագործում «ընտանիք» բառը: Իրականում, բանասառը վկայում է ընտանիքի այլ կարգի ձևափոխությունների մասին՝ ճգնաժամը նպաստում է, որ ձևավորվի քաղաքին հատուկ փոքր ընտանիք՝ խզելով գյուղի հետ

¹⁵ Նույն հակադրությունների ուսումնասիրությունը կարճատև ճգնաժամի պարագայում տես *Լ.Արրահամյան*, Քառսը և կոսմոսը ժողովրդական ելույթների կառուցվածքում, - «Մշակույթ», 1990, N 2-3, էջ 14-21:

միաձուլված ավանդական մեծ ընտանիքին բնորոշ կապերը: Կարելի է նույնիսկ ասել, որ ճգնաժամը երևանում արագացնում է քաղաքաշինիչ (ուրբանիստիկ) գործընթացները: Արտառոց ձևով, նույն ճգնաժամն այլ դեպքերում կարող է հանգեցնել միանգամայն հակառակ արդյունքի: Այսպես, նախկինում, էներգետիկ ճգնաժամին դիմակայելու ակնկալիքով՝ փոքր ընտանիքը ստիպված վերաճում էր արհեստական մեծ ընտանիքի՝ ներգրավելով առանձին ապրող ծնողներին կամ ավելի հեռավոր ազգականներին ու բարեկամներին: Չհամապատասխանելով ամերիկյան ստանդարտներին՝ նման ընտանիքները զուրկ են մնում ԱՄՆ-ի տարբեր կառույցների կողմից կազմակերպած օգնությունից: Օգնությունն իր հերթին կարող է ձևափոխել ընտանիքը՝ արհեստականորեն ջլատելով այն օգնության ստանդարտին համապատասխանող միավորների: Նկատենք, որ վերջին երևույթը՝ բարեգործության ականա դերն ընտանիքի ձևափոխման գործում, միայն Հայաստանում չէ հայտնի: Օրինակ, ԱՄՆ-ում կիրառվող աղքատության դեմ ուղղված ծրագրերը նպաստում են չքավոր աֆրո-ամերիկացիների ընտանիքների արհեստական ձևափոխմանը մեծ՝ «մայրիշխանական» տիպի ընտանիքի, քանի որ նպաստ ստանում են միայն աշխատունակ տղամարդկանցից զուրկ ընտանիքները:

Որոշ դեպքերում, քայքայվող ազգակցական կապերի մասին բանասացի գնահատականը կարող է շփոթեցնել ազգագրական նյութին լավ չտիրապետողին: Մի անգամ ես վկա էի, երբ ծնողների (երկրորդ սերնդի ազգականների) մահից հետո երրորդ սերնդի ազգականների հեռացումը մեկնաբանվում էր որպես ճգնաժամի հետևանք, քանի որ այդ բնական գործընթացը համընկավ 1990-ականների ճգնաժամին: Հաշվի առնենք նաև, որ դժվարին ճգնաժամի պայմաններում, երբ պետությունը չի կարողանում հաջողությամբ իրագործել բնակչության տնտեսական ապահովության ծրագիրը, շատերը, այնուամենայնիվ, գոյատևում են հենց ազգակցական կապերի՝ հատկապես երկիրը լքած բարեկամների օգնության շնորհիվ:

Այսինքն, կարելի է ասել, որ թեև հայոց ազգ-պետությունն իր ընտանեկան հատկությունների շնորհիվ նպաստում է, որպեսզի հայոց տիեզերքը դեռ լիովին չքանդվի, այն, այնուամենայնիվ, լրջորեն վտանգված է:

К ВОПРОСУ О НАСЛЕДСТВЕННЫХ ФОРМАХ ПЕРЕДАЧИ "ДАРА" ГАДАНИЯ/ЦЕЛИТЕЛЬСТВА В СЕМЬЕ У АРМЯН

Известный исследователь Мирча Элиаде, рассматривая в своей работе о шаманизме формы передачи дара целительства, выделяет две основные: наследственную и наделяемую способностями к исцелению непосредственно богами и духами¹. У многих архаических народов эти две формы сосуществуют. При этом, из приведенного автором материала очевидно, что наследственная форма передачи дара также может сопровождаться получением способностей от духов через сон или видение.


Исследуя формы передачи "дара" у армянских целителей, мы также можем выделить наследственную форму, при которой дар (гадания, лечения, магического воздействия) передается членам семьи по наследству, из поколения в поколение, иногда чередуя поколения. Во многих случаях дар воспринимается в качестве наследственной семейной традиции. Например, по словам гадалки и целительницы из Гавара дар этот она получила от матери в качестве материнского и родового наследия, которое было передано в свою очередь ее матери еще в старом Баязете. Св. Ованес, покровитель семьи, являлся поочередно во сне как дочери, передав ей дар лечения опухолей молитвами и талисманами, так и матери, которой наказывал передать дар именно младшей дочери "как самой праведной" (ըրիւնի տալիս անսխալ արարի)². Похожая ситуация наблюдалась и в семье гадалки Флоры из с. Арени Ехегнадзорского района, которой от матери передалось в наследство семейное святилище и дар "лить воск"³. Целительница Роза из села Аруч (Аштараковский район), унаследовавшая дар от матери, говорила, что "дар этот наследственный, дается семье свыше и передается из поколения в поколение (տալանքընդ է, արարից արար տալանքընդ)⁴. Гадалка и целительница Кнар из с. Зовашен (Арагатский район) также унаследовала от матери и дар целительства (но в несколько иной форме), и семейных святых, которые последовали за ней из

¹ М. Элиаде, Шаманизм, архаические техники экстаза, Киев, 2000, с.32

² Չ.Միքայելյան, Բշտկություն, գուշակություն և ծիսակատարություն, Կիսիկ, - Архив Института археологии и этнографии, папка 104, с. 1.

³ Полевые этнографические материалы автора (далее - ПЭМ), 1993 г., Ехегнадзорский р-н, с. Арени.

⁴ ПЭМ, 1994 г., Аштараковский р-н, с. Аруч.



материнского дома в дом мужа⁵. В народе бытует представление о том, что способность лечить передается из поколения в поколение и только по женской линии; такие высказывания нам приходилось встречать, например, в Гарни и селах Ехегнадзорского района. Однако передача дара осуществляется не при участии самих домочадцев, а посредством духов-помощников и покровителей, так называемых "святых", которые подобным образом выбирают себе "объект" среди членов данной семьи. Передача дара происходит во сне или в видениях и сопровождается событиями и действиями, в основе которых лежит ряд архетипов, присущих мифологическому мышлению.

Рассказы гадалок и целительниц о своих родителях, предках, также обладавших подобным даром, часто сопровождаются замечаниями о том, насколько сильнее был дар предков по сравнению с их собственным. Их высказывания создают четкое представление об "убывании силы дара" (на что прямо указывают некоторые из гадалок). При этом образ предшественника, в основном матери, при рассказе приобретает мифическую окраску. Ее наделяют всеми человеческими добродетелями, силе ее дара придается особое значение, подчеркивается ее праведность, а также правильность ее ритуального поведения, то есть неукоснительное соблюдение всех обрядов, ритуалов и запретов, связанных со святыми-покровителями. Например, упомянутая Флора из с. Арени представляет свою мать в качестве ангела-хранителя всей семьи и дома, заблаговременно определявшую сглаз и избавлявшую от него. Целительница Роза из с. Аруч и ее дочь изображали свою мать и бабушку как "святую". Роза даже пожелала отдать ее портрет в музей, а дочь, напротив, сочла это святотатством. Мифологичность образов гадалок/целительниц дает возможность подчинить мотивы "убывания" и "возрастания" двум основным схемам. Схема 1, под которую подходит мотив "убывания", является классической, свойственной архаическим обществам и культурным системам. Она в основном родственна мифологическим представлениям о "мифических всемогущих первопредках", "первошамане" и т.п. Этой схеме присущ постулат, что каждое последующее поколение слабее и порочнее предыдущего.

На уровне социума существует и иное восприятие поколений, соответствующее схеме 2 — "возрастанию" дара, его кульминации в современном представителе. Народное выделение исторически значимых периодов XX в. (до революции - после революции, до войны - после войны, до перестройки - после перестройки, до

⁵ ПЭМ, 1999 г., Араратский р-н, с. Зовашен.

независимости — после независимости) определенным образом повлияло и на обозначение поколений. Кроме традиционного стереотипа (предыдущее поколение лучше нынешнего) в советском прошлом в силу идеологического воздействия срабатывал своеобразный стереотип "прогресса", который, усиливая роль современного молодого поколения в развитии нации и страны, тем не менее одновременно искусственно "изымал" его из участия в таких сферах, как верования, гадания, целительство. Именно поэтому долгие годы считалось, что эта сфера — удел бабушек, старушек, то есть поколения, пережившего свой век. Возврат и легализация традиционных культурных ценностей кардинально изменил их статус как "пострадавших" от идеологического давления советского времени, резко повысив их престижность. Область гадательниц, целителей не только существенно "омолодилась", но и появилась тенденция приписывания особой силы молодым ее представителям, причем происходит это в контексте именно социума, тогда как в рамках семьи, рода продолжают сохраняться старые стереотипы.

Среди собранных автором материалов есть целый ряд случаев, когда дар передается целительнице в отсутствие каких-либо прецедентов в данной семье. Становление подобных гадалок обычно проходит физически и морально тяжелее. Они подвергаются, в частности, более тяжелым физическим испытаниям в период, напоминающий "шаманскую болезнь", им труднее свыкнуться с мыслью о том, что теперь им придется осуществлять особую миссию. В данном случае представляет интерес отношение остальных членов семьи к родственнику (-це), наделенного даром, и проявляется в "служении" ему. Сначала, как правило, родные, особенно мужская их часть (муж, сын, свекр, реже — отец) воспринимают появление этих особенностей отрицательно. Например, гадалка Лида из Гюмри, занимаясь этой деятельностью уже много лет, до сих пор боится своего сына, который не одобряет этого занятия⁶. Со временем в большинстве случаев семья принимает дар как данность и посвящает себя "служению" дару, что выражается в приеме клиентов, обустройстве помещения для отправления ритуала, мест ожидания, помощи в подготовке атрибутов ритуала, если таковые необходимы. Члены семьи охотно рассказывают историю становления гадалки/целительницы, у них вырабатываются уже определенные клише рассказа о появлении дара, стиль преподнесения информации, который заранее настраивает клиентов на нужную волну. Такое отношение родных можно

⁶ ПЭМ, 1998 г., г. Гюмри.

объяснить не только верой в истинность дара и боязнью ослушаться святых, но иногда и чисто меркантильными соображениями, так как своим "ремеслом" гадалки часто приносят семье немалый доход, и это становится чем-то вроде семейного бизнеса.

В связи со "служением" стоит коснуться вопроса о семейных духах-покровителях и так называемых "святых" и их почитании. Объем данной работы не позволяет подробнее остановиться на этом явлении. Имеющийся материал показывает, что в доме у гадалок-целительниц места отправления ритуала часто бывают оборудованы в виде святилищ. Святилище обычно является местом почитания святых-покровителей самой гадалки и ее семейства. Святые-покровители переходят из поколения в поколение, и уходом за святилищем занимается тот член семьи, которому передан дар. Это святилище часто идентично так называемому "домашнему святому", однако несколько отличается от него диапазоном функций, одна из которых — личные покровительство и помощь целительнице.

Существует еще одна форма почитания семейных или клановых святых — так же в виде "служения". Но она касается тех случаев, когда семью, не имеющую никого, наделенного даром целительства или гадания (вообще либо на данный момент), духи выбирают для того, чтобы члены ее ухаживали за определенным святилищем. Выбор святыми подобной семьи часто проявляется в обнаружении самого святилища или места для него, находкой какого-либо священного предмета или объекта (обломка хачкара, Евангелия, руин монастыря и т.д.), где и сооружается святилище. Служение также обставляется как дар, то есть передается святыми во сне или посредством видения кому-либо из членов семьи, часто предваряя передачу дара болезнями и страданиями (как и в случае передачи дара целительства). Однако, обязанность ухаживать за святилищем налагается не только на избранного члена, но и на всю семью и его наследников⁷, то есть становится наследственной функцией.

При любой форме передачи дара, в том числе и наследственной, следует учитывать тот факт, что в Армении нет института "ученичества", то есть дар воспринимается как некая абстрактная сила, которая передается по наследству семейными святыми, однако наделение каждой гадалки/целительницы специфическими способностями тем не менее носит индивидуальный характер, так же как индивидуальна и форма проявления дара. Например, мать одной из гадалок исцеляла с помощью манипуляций иглами,

⁷ См. ПЭМ (Ехегнадзорский р-н, Араратский р-н, Котайкский р-н).

сопровождая их полученными в качестве дара молитвами; сама же гадалка льет воск и гадает на кофейной гуще. Информаторы также утверждают, что разглашение гадалками/целителями при жизни их индивидуальной молитвы, переданной во сне святыми, ведет к утрачиванию молитвой магической силы.

Имеющийся материал позволяет предположить существование еще одного способа передачи дара. На эту мысль наводят случаи перекрестной передачи (мужчиной - женщине и наоборот) магических молитв-заговоров (например, на завязывание волчьей пасти), которые при этом не теряют своей магической силы. В Вайоц-дзоре нами зафиксирован интересный материал, когда передача молитвы должна непременно сопровождаться поцелуем. Информатор, рассказывая об этом, очень стеснялся и долго не соглашался произнести само слово "поцелуй" и, в конце концов, решился прошептать его на ухо одному из участников экспедиции, показывая тем самым особую интимность этого действия в собственных глазах и глазах односельчан⁸. Передача людьми дара друг другу, таким образом, связана с определенной формой интимных отношений (выражающейся в данном случае через поцелуй). Отношения между целителем и духами, ему покровительствующими, не оформлены как интимные и настоящее время не воспринимаются в народе как таковые, однако, в литературе имеются упоминания о верованиях, согласно которым люди потенциально могли входить в интимную связь с духами (например, рассказ о подобной связи крестьянина с женским духом гурри-пери у Киракоса Гандзакеци и др.). Не исключено, что с привлечением нового материала данный вопрос получит свое разрешение в контексте целительства.

⁸ ПЭМ, с. Агавнадзор, 1991.

ԿՆՈՋ ԴԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԿԱԿԱՆ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

Վերջին տասնամյակում հայ հասարակությունում կատարված փոփոխություններն ազդեցություն են ունեցել գյուղի, այդտեղ ամրագրված տնտեսական, հասարակական, մշակութային հարաբերությունների վրա:

Գյուղական ընտանիքը նույնպես ենթարկվել է որոշ փոփոխությունների: Բնական է, որ դրանք ազդել են կնոջ կարգավիճակի, հիմնական գործառույթների վրա, որոնցում այդ երևույթները պետք է դիտարկվեն նորին անցման ենթատեքստում:

Նորը կնոջ գործառույթներում և կարգավիճակում բնորոշվում է հակասական գործոններով: Խորհրդային շրջանում ձևավորված բազմաթիվ իրողություններն այսօր էլ շարունակում են կարևոր դեր խաղալ (նոր սոցիալ-մասնագիտական խմբերի ու ենթախմբերի ձևավորումը 1970-80-ական թթ. հանգեցրել էր կանանց որոշ մասի մասնակի օտարմանը գյուղատնտեսական զբաղմունքներից: Նրանք ընդգրկվում էին արդյունաբերական, կրթամշակութային, կենցաղ-սպասարկման հիմնարկություններում, ստանում նոր մասնագիտություն, աշխատավարձով մասնակից դառնում ընտանիքի բյուջեի ձևավորմանը և այլն):

Խորհրդային շրջանում կատարված տեղաշարժերը դառնում են պատճառ, որ գյուղական միջավայրում կնոջ կարգավիճակի, գործառույթների փոփոխություններին այսօր տրվում են տարբեր, հաճախ՝ հակասական ու իրարամերժ գնահատականներ: Գրառված նյութերն ընթեռնում են դրանք ըստ նախկինում ունեցած հիմնական զբաղմունքների դասակարգելու հնարավորություն՝ ա) գյուղատնտեսությունում և արդյունաբերական ձեռնարկություններում, բ) կրթամշակութային հիմնարկություններում, գ) այլ հաստատություններում ընդգրկված կանայք: Ըստ սույն հիմնական զբաղմունքների, տրվում են նաև գնահատականները: Մասնավորապես, նախկինում գյուղատնտեսական տարբեր ձեռնարկություններում ընդգրկված կանանց մասին նշվում է, որ «նրանք շատ էին տանջվում: Եթե միայնակ կանանց չհաշվենք, տնտեսությունում աշխատող կանանց գործը թեթևացել է, չնայած թոշակառուն էլ, երիտասարդն էլ հող են մշակում»: Մեջբերումից երևում է, որ խոսքը տվյալ դեպքում նախկինում զուտ գյուղատնտեսական զբաղմունքներ ունեցած կանանց մասին է: Սակայն սա փոփոխությունները բնորոշող միակ գնահատականը չէ: Նյութերը ցույց են տալիս, որ նաև նախկինում գյուղատնտեսական զբաղմունքներ ունեցած կանանց ծանրաբեռնվածության փոփոխություն է կատարվում վերջին տարիներին: Խորհրդային շրջանում ձևավորվել էր որոշակի մասնագիտացում, կանայք ունեին

կայուն զբաղմունքներ: Այսօր նրանք զբաղվում են և՛ բանջարաբուստանային բույսերի մշակությամբ, և՛ կաթնեղենի վերամշակմամբ, բազմաթիվ դեպքերում՝ գյուղատնտեսական մթերքների վաճառքով: Այսինքն՝ գործ ունենք սեփականաշնորհումից հետո հիմնական զբաղմունքների պահպանվածության պայմաններում դրանց զուգակցման նոր եղանակների ու ծանրաբեռնվածության աճի հետ: Կարևոր է նաև աշխատանքային միջավայրի կտրուկ փոփոխությունը, որն այս խումբը բնութագրող կարևոր իրողություններից է: Նախկին միջավայրը (կոլեկտիվ և խորհրդային տնտեսություններ) գոյություն չունի, անհատական գյուղացիական տնտեսության պայմաններում սահմանափակվել են կանանց աշխատանքային շփումները:

Կրթամշակութային հիմնարկություններում, սպասարկման ոլորտում ընդգրկված կանանց դեպքում արդեն արտահայտված են ծանրաբեռնվածության աճի և զբաղմունքների փոփոխության իրողությունները: Այս խմբում, ի տարբերություն առաջինի, արտահայտված է երկու իրողություն միաժամանակ. զբաղմունքների փոփոխությանը զուգընթաց աճում է նաև ծանրաբեռնվածությունը:

Փաստորեն, կանանց կարգավիճակի և զբաղվածության փոփոխությունները կարելի է բնորոշել որպես որակապես նոր իրավիճակում խորհրդային համակարգը բնութագրող տարրերի դուրսնղման և այլընտրանքային տարրերակների բացակայության գործընթաց:

Կնոջ այսօրվա վիճակը պայմանավորող գործոնների շարքում կարևոր են նաև ընտանիքի կազմը, ունեցվածքային հնարավորությունները: Ընտանիքի կազմը խորհրդային շրջանում պայմանավորում էր կնոջ կարգավիճակը: Այսօր ևս եռասերունդ ընտանիքներում, ամուսնական զույգի (հիմնականում՝ տղամարդու) ծնողների հետ ապրելու դեպքում, պահպանված է աշխատանքի բաժանման իրողությունը¹: Երկսերունդ ընտանիքներում արդեն աշխատանքների ծանրությունն ընկած է միայն կնոջ ուսերին: Ծանր է կանանց վիճակը հատկապես այնպիսի ընտանիքներում, որոնցից մեկ կամ երկու տղամարդ պարբերաբար մեկնում է արտագնա աշխատանքի²:

¹ Կանանցից մեկը (սովորաբար տարիքով ավագը) զբաղվում է կաթնեղենի վերամշակմամբ, բանջարանոցների մշակմամբ, հնարավորության սահմաններում նաև տնային տնտեսության հետ կապված գործերի որոշ մասով: Երիտասարդ հարսների հիմնական գործառույթը երեխաների խնամքն է, տնային տնտեսության հետ կապված աշխատանքները, հնարավորության դեպքում նաև հողամասերի մշակությունը: Եռասերունդ ընտանիքներում տան ավագ տիկինը օգնում է նաև գյուղում բնակվող զավակների ընտանիքներին: Այսպիսի ընտանիքներում բավականին տարածված է նաև տարբեր աշխատանքները համատեղ կազմակերպելը:

² Արտագնա աշխատանքի դեպքում, սակայն, պետք է անել մեկ վերապահում: Դրսից պարբերաբար օգնություն ստացող ընտանիքները կարող են կրճատել գյուղատնտեսական աշխատանքների ծավալները, զբաղվել միայն տնամերձ փոքր հողակտակների մշակությամբ: Այն ընտանիքները, որոնց առաքվող օգնությունը պարբերական չէ, ստիպված զբաղվում են գյուղատնտեսությամբ:

Ազգագրական տեսանկյունից առանձնապես ուշագրավ են մաև երիտասարդ աղջիկների ու հարսների զբաղվածության հետ կապված հարցերը, որոնցում դրսևորվում է, մի կողմից՝ նրանց գյուղատնտեսական աշխատանքներում ըստ հնարավորին չներգրավելու, մյուս կողմից՝ ծանր կացությամբ պայմանավորված՝ գյուղատնտեսական աշխատանքներին հարկադրական մասնակցության միտումը: Ինչպես մեծահասակ կանանց, այնպես էլ երիտասարդ աղջիկների ու հարսների համար, տնտեսավարման նոր ձևերն ու եղանակները հանդես են գալիս որպես բազմաթիվ իրողություններ պայմանավորող կարևոր գործոն:

Վերջին տարիների փոփոխությունները, բացի կնոջ զբաղմունքների վրա ազդելուց, որոշակի կնիք դրեցին մաև նրա կարգավիճակի վրա: Ինչպես խորհրդային շրջանում, այսօր ևս կնոջ կարգավիճակը պայմանավորող բազմաթիվ գործոններ անմիջական առնչություն ունեն ընտանիքի կազմի հետ: 1970-80-ական թթ.՝ այն ընտանիքներում, որտեղ կային տարբեր սերունդների ներկայացուցիչներ, որպես կանոն, ընտանեկան-ազգակցական ավանդական էթիկետի որոշ ավանդական տարրեր ավելի պահպանված էին և արտահայտվում էին ընտանիքի գլխավորի գերիշխող դերով, ամուսինների ոչ իրավահավասար հարաբերություններով, պարտականությունների կանոնակարգմամբ, ընտանիքի բոլոր անդամների աշխատավարձն ավագ կնոջը պահ տալով, և այլն³: Եական դեր էր խաղում մաև ընտանիքի սոցիալական կազմը. սույն երևույթները թույլ էին արտահայտված բանվորների և մտավոր աշխատանքի ներկայացուցիչների մեջ⁴: Սոցիալապես ոչ միատարր ընտանիքներում կնոջ կարգավիճակը կարող էր պայմանավորվել նրա բարձր կրթական մակարդակով, որի հետ հաճախ հաշվի էին նստում մաև ընտանիքի գլխավորները, հատկապես ընտանիքի համար կարևոր հարցեր վճռելիս:

Վերջին տասնամյակում կնոջ կարգավիճակի փոփոխությունները նույնպես ունեն դրսևորման տարբեր առանցքներ: Ընտանիքների մեծ մասում այսօր էլ արտահայտված են դերերի և գործառույթների բաժանման իրողությունները: Դրանք դրսևորվում են և՛ երկսերունդ, և՛ եռասերունդ ընտանիքներում, որոնցում ընտանիքի գլխավորը սովորաբար ավագ տղամարդն է, որը և ներկայացնում է ընտանիքը հասարակական հարաբերություններում, ինչպես մաև զբաղվում տնտեսական գործունեության կազմակերպման հարցերով: Միաժամանակ, որոշ ընտանիքներում, արտահայտված է մաև մեկ այլ առանցք, որը, ինչպես 1970-80-ական թթ., այսօր ևս կապված է կնոջ կարգավիճակի և նրա դերային գործառույթների աճի հետ: Այս դեպքում, ըստ իս, կնոջ կարգավիճակի փոփոխությունները պայմանավորված են մաև տնտեսական գործոններով: Տարբեր գյուղերում նշվում էր, որ սեփականաշնորհումից հետո կանանց մի մասն ավելի արագ հարմարվեց շուկայա-

³ А.Е. Тер-Саркисянц, Армяне: история и этнокультурные традиции, М., 1998, с. 138.

⁴ Անդ, էջ 139:

կան հարաբերություններին, ներգրավվեց առևտրի մեջ, փաստորեն իր վրա վերցնելով նաև ընտանիքի գոյամիջոցների ապահովման հոգսերի մեծ մասը: Որոշ ընտանիքներում կինը հանդես է գալիս որպես ոչ միայն տնտեսական, այլ նաև համայնքային-հասարակական հարաբերությունների կարգավորիչ ու կազմակերպիչ, իր գործառնություններին ավելացնելով այնպիսիք, որոնք նա նախկինում չի ունեցել:

Ընդհանրացնելով, կարելի է փաստել, որ ինչպես բազմաթիվ այլ ոլորտներում, կանանց զբաղվածության, կարգավիճակի հետ կապված հարցերում նույնպես ակներև են երկակի իրողություններ: 1970-80-ական թթ. ձևավորված ու կայացած բազմաթիվ իրողություններ այսօր էլ պահպանված են ու հաճախ շարունակում են վճռորոշ դեր խաղալ: Միաժամանակ, արտահայտված են տնտեսավարման նոր ձևերով պայմանավորված իրողությունները, որոնք ազդում են խորհրդային շրջանում ծավալված գործընթացների վրա (արագացնում կամ դանդաղեցնում դրանք) և ձևավորում այն արժեքային դաշտը, որում այսօր գործառնում է գյուղական ընտանիքը, այդ թվում՝ նաև կանայք:

Ամուսնությունների ուղղության (ներհամայնքային, միջգյուղային, գյուղ-քաղաք) և ամուսնական տարիքի հետ կապված հարցերը նույնպես կարևոր նշանակություն ունեն փոփոխությունների դիտարկման առումով: Գյուղական միջավայրում, ընդհուպ մինչև անցյալ 20-րդ. դ. կեսերը լայն տարածում ունեին ներգյուղային կամ ներշրջանային ամուսնությունները⁵: Սեփականաշնորհումից հետո այս միտումը շարունակվում է պահպանվել, սակայն, ի տարբերություն նախորդ տարիների, աղջկան գյուղում ամուսնացնելուն նախկինի նման բացասական որակներ չեն վերագրվում և, թերևս, դա է պատճառը, որ բազմաթիվ գյուղերում աճել է «քաղաքացի» հարսների թիվը: Այս երևույթի պատճառները կարելի է հասկանալ, եթե հաշվի առնենք, որ վերջին տասնամյակում քաղաքային բնակչության կենսամակարդակը նույնպես կտրուկ անկում է ապրել: Չնայած դրան, պետք է նշել, որ այսօր, ինչպես և 1970-80-ական թթ., ամուսնությունների ուղղությունները տարբեր են. ներհամայնքային, միջգյուղային, գյուղից քաղաք, քաղաքից գյուղ:

Ինչպես երևում է շարադրանքից, ներընտանեկան հարաբերությունները պայմանավորող իրողություններում վերջին տարիներին արտահայտված նշանակություն են ձեռք բերել տնտեսական

⁵ Գյուղական երիտասարդության շփումների աճը կապված ուսումնառության, աշխատանքային գործունեության հետ, նպաստում էր ամուսնությունների «աշխարհագրության» ընդլայնմանը: Նյութերը ցույց են տալիս, որ գյուղական միջավայրում հաճախ էին գյուղից քաղաք ամուսնությունները, երբ աղջիկն ամուսնանում էր քաղաքաբնակի հետ, ընդ որում Շիրակում հարզի էր աղջկան Գյումրիում, Լոռիում՝ Վանաձորում, Չայաստանում ընդհանրապես Երևանում ամուսնացնելը: Չաջողակի համբավ ունեին այն մայրերը, որոնք կարողացել էին բոլոր աղջիկներին քաղաքում ամուսնացնել: Այս իրողությունը լայն տարածում ուներ հատկապես նախալեռնային և լեռնային գյուղերում, որոնք դիտվում էին որպես անհեռանկար, ապագա չունեցող:

գործոնները: Տնտեսականի դերը գերազնահատելուց խուսափելու համար փաստենք, որ դրանք բազմաթիվ դեպքերում ժամանակավոր են՝ պայմանավորված ծանր կացությունում ընտանիքի գոյամիջոցների ապահովման անհրաժեշտությամբ: Որպես այդ ամենի հետևանք, կարելի է դիտարկել տարբեր ընտանիքներում կանանց գործառույթների շրջանակի աճը, ներընտանեկան հարաբերություններում դրսևորվող այն իրողությունները, որոնք կապված են այս կամ այն զբաղմունքին տրվող նախապատվության հետ և այլն:

Ընդհանրացնելով, կարելի է փաստել, որ վերջին տասնամյակում, հատկապես գյուղական միջավայրում իրականացված սեփականաշնորհումից հետո, կնոջ կարգավիճակում, գործառույթներում և զբաղվածությունում կատարված փոփոխություններում դրսևորվող միտումներն ունեն հետևյալ արտահայտությունը. խորհրդային շրջանում ծավալված գործընթացները, որոնց որոշ մասն արդեն կայացել էր, իսկ որոշ մասը 1970-80ական թթ. դեռևս գտնվում էր կայացման փուլում, այսօր էլ շարունակում են էական դեր խաղալ և պայմանավորել բազմաթիվ իրողություններ ներընտանեկան հարաբերություններում:

Միաժամանակ, կապված ծանր կացության, կենսամակարդակի անկման, միայն (կամ հիմնականում) զուտ գյուղատնտեսական զբաղմունքների միջոցով ընտանիքի գոյամիջոցներն ապահովելու հետ, ձևավորվում են նոր, հիմքում տնտեսական գործոններ, որոնց մի մասը հակասության մեջ է խորհրդային շրջանի ավանդականացած արժեքային դաշտի հետ (օրինակ՝ կանանց արտահայտված տնտեսական ակտիվությունը, հետևաբար նաև գլխավոր դերը որոշ ընտանիքներում պետք է դիտարկել որպես տնտեսական հարաբերություններով պայմանավորված նորույթ): Անցումը շուկայական հարաբերություններին միայն տնտեսական հետևանքներ չէ, որ ունենում է ընտանիքի, այդ թվում նաև կանանց վրա: Այն ուղեկցվում է նաև հասարակական, մշակութային հարաբերությունների դաշտը պայմանավորող արժեքների փոփոխությամբ: Ուստի ընտանիքի ինքնակարգավորման ու ինքնակազմակերպման տարբերակների դերը ևս շարունակելու է արտահայտված մնալ: Ինչպես համայնքը, այնպես էլ ընտանիքը նախընթաց պատմական զարգացման ընթացքում մշակել և կենսագործել են այնպիսի տարբերակներ, որոնք ընծեռել են ոչ միայն տնտեսական գործունեության արդյունավետ կազմակերպման միջոցով բարձր կենսամակարդակ, այլ ընտանիքի, ներընտանեկան հարաբերությունների առավել ընդունելի տարբերակ ապահովելու հնարավորություններ:

ԸՆՏԱՆԻՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ՀԱՍԱՏԵՔՍՈՒՄ

Հայ ժողովրդի արժեքային համակարգում առանձնահատուկ տեղ ու դեր ունի ընտանիքը: Այն համարվում է ոչ միայն միջսերնդային ժառանգության կրողը և վերարտադրողը, այլև հասարակության սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական գործառնությունների իրականացման հիմնական օղակը: Սակայն վերջին տասնամյակում հասարակության մեջ տեղի ունեցող խորքային փոփոխությունները՝ բնակչության կենսամակարդակի անկումը, գործազրկության և զանգվածային աղքատության պայմանները, առաջ են բերել լուրջ հիմնախնդիրներ ընտանիքի կազմում և կառուցվացքում, ինչպես նաև ներընտանեկան փոխհարաբերություններում: Մասնավորապես, մի կողմից՝ հանրապետությունում ավելացել է ոչ ստանդարտ ընտանիքների, հատկապես ամուսնալուծվածների, միայնակ մարդկանց թվաքանակը, մյուս կողմից՝ ընտանիքում նկատվում է ավանդական դերերի և կարգավիճակների փոփոխություն: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ծայրահեղ իրավիճակում հայտնված բազմաթիվ ընտանիքներ փորձում են հիմնականում լուծել գոյատևման հիմնախնդիրները՝ բավարարելով ընտանիքի առաջնային կարիքները: Որպես ներկայիս տնտեսական դժվարությունների դիմակայման կարևոր ռազմավարություն՝ Հայաստանի բնակչության որոշ մասն ընտրել է միջհանրապետական տնտեսական տեղաշարժի ուղին: Ըստ պաշտոնական վիճակագրական տվյալների՝ վերջին տարիներին հանրապետությունը մշտապես կամ ժամանակավորապես թողել է շուրջ 700 հազ. մինչև մեկ միլիոն մարդ, կամ յուրաքանչյուր հինգերորդ ընտանիքից առնվազն մեկ անդամ:¹ Այն հարցին, թե «Ձեր ընտանիքի անդամներից որևէ մեկը վերջին տարիներին մեկնել է հանրապետությունից» հարցորդների 34% տվել է դրական պատասխան: Ըստ որում, մեկնողների 27%-ը՝ 18-29, իսկ 25%-ը՝ 30-49 տարեկան աշխատունակ տարիքի մարդիկ են՝ մասնագիտական և կրթական բարձր մակարդակով:² Մեկնելով հանրապետությունից, նրանք զբաղվում են տնտեսական տարբեր գործունեությամբ՝ ընդգրկվելով շինարարության, առևտրի, գյուղատնտեսության և այլ ոլորտներում: Պետք է նշել, որ վերջին տարիներին աշխատանքային միջավայրական տեղաշարժերում նկատվում է նաև կանանց թվաքանակի ավելացում: Այդ գործընթացին նրանց մասնակցությունը ձեռք է բերել

¹ Այդ մասին տես. Հարցազրույց ՀՀ Կառավարությանն առընթեր Միգրացիայի և փախստականների վարչության պետ Գ. Եզանյանի հետ, - Հայացք Երևանից, 6, 2000, էջ 30-32:

² Էթնոսոցիոլոգիական հետազոտություններ, Եր., 1999, (նյութերը պահվում են ՀՀ ԳԱԱ ՀԱԻ էթնոսոցիոլոգիայի բաժնի արխիվում):

կազմակերպված բնույթ՝ պարբերաբար մեկնում են Ռուսաստանի Ղազնություն, Թուրքիա, Սիրիա, Արաբական էմիրաթներ, Լեհաստան, Բուլղարիա, Հունաստան և այլուր՝ այնտեղ զբաղվելով առևտրի տարբեր ծներով և կատարելով զանազան աշխատանքներ:³ Բաղդատաբար նշենք, որ, ըստ հետազոտության արդյունքների՝ մինչև 1990-ական թթ. շատ ցածր էր նրանց սոցիալական շարժունության գործակիցը, որն առաջին հերթին պայմանավորված էր ավանդական մի շարք գործոններով:⁴ Հարցումներից պարզվում է, որ մեկնողների 47% ամուսնացած չէր և բնակվում էր ծնողների հետ, իսկ 53% ամուսնացած էր և ուներ միջին հաշվով երկու երեխա: «Ո՞ւմ հետ է նա մեկնել հանրապետությունից» հարցին տրված պատասխանների վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ Հայաստանից աշխատանքային միջպետական տեղաշարժերը կատարվում են երեք հոսքով. առաջին՝ անհատական տեղաշարժեր, որը կազմում է 57%, նպատակը՝ տեղում մնացած ընտանիքի եկամուտների ձեռքբերում, երկրորդ՝ ընտանեկան-ազգակցական սկզբունքով կազմված խմբեր՝ (40%): Ընդ որում, դրանցում բարձր տոկոս (34%) են կազմում հատկապես միևնույն ընտանիքից մեկնողները: Այս հոսքը համարվում է Հայաստանից ընտանիքներով անվերադարձ մեկնողների հիմնական աղբյուրներից մեկը, քանի որ դրանց գերակշիռ մասը հաճախ հանրապետությունը թողնում է ընդմիշտ: Ընտանիքներով մեկնողների ամենամեծ թվաքանակը բաժին է ընկնում 1993-95ական թթ.՝ շուրջ 101,5 հազ. մարդ:⁵ Երրորդը խառը խմբերով հոսքերն են, որոնց ձևավորման գործում մեծ դեր են խաղում միջանձնային փոխհարաբերությունները՝ ծանոթների, ընկերական, բարեկամական և հարևանական կապերը: Որոշակի որակական կապ է նկատվում անհատական, խմբային տեղաշարժերի և ընտանիքի միջին չափերի ու կառուցվածքի առանձնահատկությունների միջև: Դիտարկումները ցույց են տալիս, որ բարդ կառուցվածք ունեցող ընտանիքների անդամների միջև երբեմն տեղի է ունենում աշխատանքի ներքին բաժանում: Նրանցից մեկը մնում է տեղում՝ տան գործերը կարգավորելու, սեփականաշնորհված հողամասը մշակելու, իսկ մյուսները մեկնում են հանրապետությունից: Պարզ կառուցվածք ունեցող ընտանիքներից հիմնականում աշխատանքի է մեկնում տան գլխավորը: Նրա ժամանակավոր բացակայության ընթացքում ընտանիքը գտնվում է հարազատների անմիջական հսկողության տակ, նրանց համար ապահովում են փոխօգնության տարբեր ձևեր: Այն հարցին, թե «Որո՞նք են հանրապետությունից մեկնելու գլխավոր պատճառները», հարցորդների 35%-ը պատասխանել է՝ գործազրկությունը և աշխատանք չունենալու հանգա-

³ Մ. Գալստյան, Հայաստանի հանրապետության բնակչության աշխատանքային միջպետական տեղաշարժերը. Ռազմավարական և ազգային հետազոտությունների կենտրոն, Եր., 1998, էջ 37:

⁴ М. Галстян, Современное отходничество в Армянской ССР (этносоциологическое исследование), автореферат канд. дис., Ер., 1990, с. 16.

⁵ Հայաստան. ՄԱԿ-ի մարդկային զարգացման զեկույց, Եր., 1996, էջ 13-14:

մանքը, 32%-ը՝ ընտանիքի նյութական և կենցաղային ծանր վիճակը, 11%-ը՝ իրավական անպաշտպանվածությունը, 10%-ը՝ հեռանկարի անորոշությունը: Ընդլայնվել է նաև տեղաշարժերի աշխարհագրությունը: Հետազոտություններից պարզվում է, որ ինչպես նախկինում, այնպես էլ ներկա պայմաններում տեղաշարժվողների գերակշիռ մեծամասնության 57%-ը շարունակում է մեկնել Ռուսաստան, իսկ 6%-ը՝ ԱՊՀ-ի այլ հանրապետություններ, 27%-ը՝ եվրոպական երկրներ, 8%-ը՝ ԱՄՆ և այլն: Դիտարկումները ցույց են տալիս, որ աշխատանքային տեղաշարժին մասնակցում են այն ընտանիքները, որոնք գտնվում են աղքատության դաշտում: Բնակչության միգրացիոն տրամադրությունների վրա որոշակի ազդեցություն է թողնում ճանապարհածախսի բացակայությունը, որի համար նրանք հաճախ ստիպված են լինում վաճառելու հող, անասուններ, բնակարան, վերցնել տոկոսով փող և այլն: Ըստ հարցման արդյունքների՝ նրանց մեծամասնությունն այդ ընթացքում միշտ պահպանում է կապերն ընտանիքի հետ և պարբերաբար ցուցաբերում դրամական օգնություն: Այդ առումով պետք է նշել, որ այն ոչ միայն դարձել է հանրապետության բնակչության որոշ մասի (30%) եկամուտների ձևավորման, այլև ազատ աշխատուժի տեղաբաշխման կարևոր աղբյուր:⁶ Այնուհանդերձ, դրսևում գաղթողների իրավական և տնտեսական կարգավիճակը հուսալի չէ, և հաճախակի կրկնվող տնտեսական ցնցումների դեպքում առաջինը նրանք են կորցնում աշխատանքը: Տեղի բնակչության կողմից նրանք երբեմն ընկալվում են աշխատաշուկայում իրենց գործատեղը կորցնելու, գործազրկությունն ավելացնելու և ընդհանուր ժողովրդագրական իրավիճակը փոխելու իրական վտանգ՝ դրանցից բխող հետևանքներով: Չնայած որ, այդ տեղաշարժերը որոշակի դրական հետևանքներ են ունենում միգրանտների լեզվական վարքագծի, դիրքորոշումների, արժեքային կողմնորոշումների վրա, այնուհանդերձ, դրա բացասական ազդեցությունը հատկապես մեծ է ընտանիքում: Ընտանիքից երկարատև բացակայությունն առաջ է բերում հոգեբանական և բարոյական մի շարք լուրջ հիմնախնդիրներ: Դրա հետևանքով բնակչության շրջանում հետզհետե աճում է ամուսնալուծությունների, ինչպես նաև անկայուն ընտանիքների թիվը: Ելնելով այն հանգամանքից, որ գաղթողները համարվում են ընտանիքին նյութական միջոցներով հիմնական ապահովողը, ուստի նրանց կողմից երբեմն ցուցաբերվող ոչ նորմալ վարքագիծը հաճախ հանդուրժվում է ընտանիքի մյուս անդամների կողմից: Այդ կապակցությամբ կանանց կողմից հաճախ կարելի էր լսել՝ «դրսևում ինչ ուզում են թող անեն, կարևորը, որ կարողանում են պահել իրենց ընտանիքը» արտահայտությունը: Դերերի և կարգավիճակների, արժեքային կողմնորոշումների փոփոխության հետևանքով, ընտանիքը հաճախ դադարում է կրելու իրեն վերապահված գլխավոր մի շարք գործառույթները, որի արդյունքում ներըն-

⁶ ԱՊՀ երկրների միգրացիոն գործընթացների մասին տե՛ս А.Топлин, Общий рынок труда в СНГ, 1997, 12, с.105.

տանեկան հարաբերությունները բարոյահոգեբանականից անցնում են տնտեսական դաշտ: Նշենք, որ 1980-ական թթ. արտագնացների ընտանիքների անդամները հիմնականում բացասաբար են գնահատել այդ երևույթը, մինչդեռ ներկա պայմաններում կանայք դրականորեն են արտահայտվել՝ ելնելով ընտանիքի նյութական, տնտեսական ծանր վիճակից: Տեղաշարժերը բացասական ազդեցություն են թողնում ոչ միայն գաղթողների առողջական վիճակի վրա, այլ հաճախ դառնում են «դժբախտ պատահարների» առիթ: Մեկնողների որոշ մասը դրական դիրքորոշում ունի խառնազգ ամուսնությունների նկատմամբ, և ամուսնանալուց հետո նրանք գերադասում են բնակություն հաստատել ոչ թե հայրենիքում, ինչպես նախկինում էր, այլև կնոջ բնակավայրում: Այդ երևույթը հաճախ խրախուսվում է նաև ծնողների կողմից՝ պատճառաբանելով հանրապետությունում ապրելու հեռանկարի բացակայությամբ: Բացի ընտանիքից, արտագաղթը որոշակի ազդեցություն է թողնում նաև հանրապետությունում առկա տնտեսական և ժողովրդագրական իրավիճակի վրա:⁷

Ռոզա Գրիգորյան

ՀԱԻ

Երանուհի Մելիք-Մուրադյան

ՀԱԻ

ՍՈՐ ԴԵՐԸ ՄԱՆԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ

(Ըստ հայ մանկական բանահյուսության նյութերի)

Հայօրորների կենցաղային գործուն կիրառությունը՝ ժողովրդական երգարվեստի տարաբնույթ երգերի և երգային հատվածների հարակցումներով, շատ հաճախ տալիս է մի այնպիսի որակ, ուր այլազան մոտիվների ներթափանցմամբ ստեղծվում է օրորոցային երգի վերակերպավորում և վերջիններիս ու ժողովրդական այլ երգերի միջև եղած ընդհանրությունների մի ողջ բարդույթ:

Օրորոցային երգի առանցքային թեման մանկիկն է և մոր մտահոգությունը՝ նրան քնեցնելը, հանգստացնելը: Բնական է, որ օրորի հետ մայրը գովերգում է նրա արտաքին բարեմասնությունները և ապա իր

⁷ Վ.Ե. Խոջաբեկյան, Միջպետական տեղաշարժերը և դրանց ազդեցությունը բնակչության բնական վերարտադրության ընթացքի վրա.- Էկոնոմիկա, 1997, 1-3, էջ 20:

մայրական խորհուրդներով ձգտում հաղորդակցել երեխային լավին, գեղեցիկին, կատարյալին:

Օրորոցայինների բազմաբնույթ խնդիրներից հիմնականները հետևյալներն են.

ա/ մոր մտահոգությունը՝ երեխային շուտափույթ քնեցնելը,

բ/ երեխայի գովերգումը, արտաքին և սպասվելիք ներքին բարեմասնությունների վերհանումը,

գ/ մոր ներանձնական հոգեվիճակի և խնդիրների արտացոլումը,

դ/ մոր պատկերացումը նրա ապագայի և մարդկային բարձր նկարագրի մասին՝ աստվածասեր և բարեպաշտ անձնավորություն դաստիարակելու ցանկությունը:

Դժվար չէ նկատել, որ օրորոցայիններն ստանում են որոշակի ճանաչողական նշանակություն, ընդլայնվում են դրանց ընդգրկման և արժարժած հարցերի սահմանները: Բուն օրորոցային երգը գրեթե արտաօրորոցային մոտիվ չի պարունակում. մանկիկն է իր նկարագրով և մայրը՝ նրան քնեցնելու իր մտահոգությամբ: Իսկ այն երգերը, որոնք ձևափոխվել են և կրկներգերի օգնությամբ վերածվել օրորոցայինների՝ արտացոլում են տարաբնույթ մոտիվներ:

Նոր մոտիվների օրորոցայիններ ներթափանցելու ուղիներից է նաև հետևյալ յուրահատկությունը. մայրը երգում է երեխային քնեցնելու նպատակով, բնականաբար երգը ձգվելու է այնքան, քանի դեռ երեխան չի քնել: Ձգտելով երկարացնել երգի տևողությունը, մայրը թեմայից թեմա է անցնում, հաճախ նույնիսկ՝ իրար չառնչվող, և կրկներգերի հավելմամբ վերստին ծառայեցնում նպատակին:

Ընդհանրականը նորաստեղծ և բուն օրորոցայինների միջև՝ ոգին է, նպատակը, բանաստեղծական շունչը, միալար մեղեդին, հանգամանքներ, որոնք նպաստում են մանկան հետ հոգեբանական մերձեցմանը, և ի վերջո, հանգում մանկանը մինչի բերելուն, խաղաղ ու անդորր քունն ապահովելուն:

Օրորոցային եզրանվան հիմքում ընկած է *օրոր* բառը, որը գեղջկական կենցաղում ունի *լուրի, տարտար, նանի, նեննի, հայրուր, լայլայ* տարանվանումները, որոնք կրողների երևակայության և հնարամտության ծնունդ են: Մոր ենթագիտակցական զգացողությունը կռահում է, թե երեխային քնեցնելիս ինչպիսի հոգեվիճակ է պետք՝ թովիչ մեղեդի, անխռով ու հանդարտ մթնոլորտ, և ահա ծնվում է օրորը: Այդ կերպ մայրը ծագումնաբանորեն դառնում է այդ երգատեսակի նախաստեղծ հեղինակը:

Արդեն վերը նշվեց, որ շարունակաբար երգվող հայօրորներում արժարժված հարցերը և մտահոգություններն աստիճանաբար արմատներ են ձգում մանկական հոգում, որն իր բնագղային ընկալման շնորհիվ դեռևս օրորոցից զգում է այն փոփոխությունները, որ կրում է մեղեդին, երբ մայրը մի թեմայից անցնում է մյուսին: Քնած, թե արթմնի նա հաղորդակցվում է մոր հանապազօրյա հորդորներին ու խրատներին: Եվ այս պարագայում երգի մեղեդին կատարում է որոշակի գործառույթ՝ այն

երգի տեքստն ամրացնում է երեխայի հոգու և մտքի մեջ և նպաստում հիշողության ծալքերում պահպանելուն, աննշարելի մի գործընթաց, որի պտուղները երեխան ճաշակում է հասուն տարիքում:

Բացառիկ թովիչ, հանդարտեցնող և մեղմիկ լինելով օրորների մեղեդին, երգի թեմատիկայի փոփոխման հետ կրում է ավելի ազդու և խրոխտ շեշտադրում: Եվ քանի որ օրորոցային հասակում երեխան ընդունակ չի մտավոր, տրամաբանական ընկալումների, ուստի և մեղեդին կատարում է որոշակի զգայական ներգործություն: Օրորոցայինները լինելով գյուղական կյանքի, կենցաղի բաղադրիչներից, նրանց միջոցով հաղորդակից են դարձնում մանկիկին առօրյա կենցաղային և սոցիալ-տնտեսական շատ հարցերի.

Օրո՛ր ընեն, որ մեծնաս,
Վարդի թունբերը ժուռ գաս,
Չար ու բարին խասկնաս,
Իրիկուն էլլա տուն գաս,
Դրացիներուն բարև տաս,
Հորդ, մորդ արև տաս¹:

Ինչպես դժվար չէ նկատել, քնաբեր ու թնդեցնող օրորոցային երգը ներառելով ընտանիքի սոցիալ-տնտեսական խնդիրները, դառնում է ավելի ընդգրկուն և ստանում է ազգային հայրենասիրական երգի նկարագիր ու արժեք:

Հայօրորներում առանձնանում է երգի մի խումբ, որը դարձյալ առնչվում է նահապետական բարքերում կնոջ՝ իբրև անհատի, ճնշված, իրավազուրկ վիճակին: Իր ապագայի տնօրինման խնդրում իրավազուրկ լինելը հանգում է բռնի, անսեր ամուսնության, որի ողբը գտնում ենք հետևյալ երգում.

Բալես պառկե մըջ բաղանին...
Իմ դարդեր քանց դարդ բեղար,
Հելան խասան չունքի բերանս,
Էլ ճար չունեն, իլլաճ չունեն,
Դուս հըլնելու ճամբախ չունեն,
Բերին կապին կարմիր-կանանչ,
Իմալ ենեն իմ դարդերուն...²

Երեխայի կենսամուտքն այդ երգերով է նախապատրաստվում. մայրը պարտքի և պարտաճանաչության բարձր գաղափարների սերմեր ցանելով՝ թվում է, թե սկիզբ է դնում յուրովի նախնական մանկավարժության: Օրորոցայինների այդ խումբն իր արժարժած գաղափարներով ծեռք է բերում հասարակական գործառույթ՝ բարեպաշտ ու աստվածասեր լինել և իր իմաստնությամբ ապավեն դառնալ ծնողներին.

Քնիր կյառնիկ, շուտ գորանաս,

¹ Ո. Գրիգորյան, Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր, Եր., 1970, էջ 62, հետադարձ ձևով:

² ՀԺՕԵ, էջ 92:

Խերդ մենակ է, օգնություն տաս,
Հիմաստուն հըլնես, դու աշխատող,
Մեր ծերության օգնական կաս³:

Մոր ցանկությունն է որդուն զորացած ու առնականացած տեսնելը, կյանքում կողմնոշվելը և ճշմարիտին, արդարին ու բարուն հասնելը: Բազմաթիվ հույսեր է կապում նա որդու հետ՝ վրեժխնդիր լինես նրանցից, ովքեր տանջել և ոտնահարել են քո ազգի պատիվը: Մայրը ցանկանում է, որ որդին մեծանա և առնականանա, հասնի հասարակական բարձր դիրքի, պահապան ու սատար կանգնի իր ժողովրդին:

Դու պզտիկ ես մեծանաս,
Մեծանաս ու մեծ ըլնես,
Բուրիս ու գեղ մըլնես.
Ան գեղը, որ մեծ չունի,
Ան գեղի մեծը դու ըլնես:

Մայրական քնարերգության հիմնական այս թեման առկա է գրեթե բոլոր օրորոցային և գովքի երգերում, նրանց նպատակամետ և հաճախակի կրկնությունը կատարում է դաստիարակչական դեր, ազդելով մանկան գիտակցության, հոգու և բնավորության կազմավորման վրա: Մանկուց լսած խրատների ու հրահանգների շնորհիվ երեխան սկսում է ճանաչել կյանքը և նախապատրաստվում է լուրջ նպատակներ ու հույսեր իրագործելու, քանզի.

Նանին մենակ ա,
Պուճախը մութ ա,
Դռները փակ են...

և մայրն այս պայմաններում ապավինելով մանկանը, հույս ունի, որ նա պետք է կենդանացնի և շենացնի հայրենի օջախն ու տունը: Նա նաև մտահոգ է, որ հարազատների, յուրայինների շրջապատում անվտանգ մեծանա, «հորով, մորով», «պապով, քեռով», «բազմոստ ծառ դառնա» և իր շվաքի տակ պահի-պահպանի նրանց:

Մանկական գովերգերին, ի տարբերություն օրորոցայինների, հատուկ է կատարման աշխույժ ձևը, հետևաբար՝ կենսախինդ ու զվարթ տրամադրությունը: Երգն ասվում է ձեռքի վրա մանկանը խաղացնելիս, թոցնելիս, գովերգելիս և ոչ օրորոցում ընդարմացած երեխային քնեցնելիս: Դրանք նույնացնել և շփոթել հայօրորների հետ գրեթե անհնար է: Դրանց թեման առավելապես մանկաշխարհն է:

Մայրը ձեռքին պարեցնելով մանկանը, ինքը ևս որոշակի պարային շարժումներ անելով՝ դառնում է նրա առաջին պարուսույցը, կենսուրախ տրամադրությամբ վարակելով մանկանը, գովերգում է նրա բարեմասնությունները, թվարկում արտաքին գեղեցկությունը.

Դոլ ես, դոլ-դոլ ես,
Նողըմանիս դուլաբն ես,
Ցաղութիս փշրանք ես,

³ ՀժՕԵ, էջ 47:

Ալ մագիս գլխանքն ես,
 Սովդագարիս թագն ես,
 Դու իմ անգին տղեն ես.
 Դու իմ օսկի ջղեն ես⁴:

Երեխայի գովքն ընթանում է մաև գյուղաշխարհի սոցիալ-տնտեսական կենցաղային պատկերների, հնագույն հավատալիքների համալիրի հենքի վրա, բացառիկ բարոյախրատական նկարագրով ուսուցվում ու հրահանգվում է ազնիվ ու բարի գաղափարներ, պարտքի ու պարտականությունների գիտակցում: Այսպես.

Մե լաճ ունիմ օղերով,	կամ	Ա պզան մեղու, ա պզան մեղու,
Խարս կբերեմ քողերով,		Քու մանդրիկ թևեր վերու,
Նանան կըլա խնկերով,		Բանձրիկ սարերն ես էրթալու,
Բաբան կըլա փնջերով,		Սուսան Սումբուլ ես քաղելու,
Հա դա՛ն, դա՛ն, դանդանի,		Քաղցրիկ մեղրն ես կրելու,
Կապան կարեմ շամդանի,		Սարից սար ես էրթալու,
Քյոբան անեմ բաց մավի,		Սալամ կաքավ բերելու,
Նանան քյո չարը տանի,		Բուրջ ու բադան կրելու,
Հա դա՛ն, դա՛ն, դա՛ն չունենք,		Դրկիցներուն զարմացնելու,
Թուրքի խետը պան չունենք,		Մեր տուն ու տեղ շենըցնելու ⁶ :
Թուրքն իկյալուն կացնով տանք,		
Խայն իկյալուն պարով տանք ⁵ ...		

Մանկիկը պետք է երախտահատույց լինի մաև բոլոր նրանց, ովքեր նրա ծննդի և կնունքի ժամանակ որոշակի դեր են կատարել, մա պետք է զորանա, թևերը պարզի, ժրաջան մեղվի նման հեռուներ պետք է գնա, «անթառամ ծաղիկ» բերի: Նա սովորական մեղու չէ, նրա թռիչքի տեղերը «բանձրիկ սարերն» են, ծաղկաբույր դաշտերն ու հովիտները.

Իմ կճատիկ արուխ-մարուխ,
 Քո կճատ թևքեր վերվերու,
 Օտերացդ տուր զորություն,
 Սարե սար կա գնալու,
 Սուսան ծաղիկ կա քաղելու,
 Կանանչ մեռոն համբուրելու,
 Թառ քյավորոջ օղորկելու⁷:

Մայրը դեռ վաղ հասակից մանկան գովերգերին զուգընթաց, քաջ գիտակցելով կապանքներից ազատվելու մանկան բուռն ձգտումը, երեխային վեր ու վար թռցնելով, մարգում է նրա մարմինը՝ թաթիկներն ու տոտերը, նախապատրաստում նրա քայլքը, որը երգերին հաղորդում է զվարճալի երանգ: Զվարճերգերն ունեն կենցաղային կիրառության որո-

⁴ ՀԺՕԵ, էջ 157:

⁵ ՀԺՕԵ, էջ 148:

⁶ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխիվ, Ռ.Գրիգորյանի ֆոնդ, Սևանի բանահյուսությունը, հետախու՝ ՄԲ (ծեռ. ժողովածու):

⁷ ԱՆԴ, Մարտունու բանահյուսությունը, հետախու՝ ՄԲ (ծեռ. ժողովածու):

շակի՝ միջավայր: Բարոյական բարձր ու ազնիվ հորդորներին զուգահեռ, երգերը նաև անդրադառնում են ժողովրդական մարմնամարզության խնդիրներին և նախնական սաղմեր են պարունակում: Մարմնամարզության ականառու դրսևորումներ են մանկան լոզանքի, քայլքի երգերին զուգորդված որոշակի շարժումներն ու մերսումը: Այստեղ մարզումներն սկսվում են երեխայի վզից՝ երկնավզիկ անելով, և վերջանում վերջավորություններն ամրացնող վարժություններով, որոնց զուգորդվում են քաղցրաբարբառ երկտողերը, քառյակներն ու բարեմաղթանքները: Լողացնելուց հետո երեխային ջրից հանելիս, ասվում է.

ճըղլավզիկ,
Թափ տուր ջրիկ,
Բռնի մսիկ,
Գառու մսիկ,
Երկնավզիկ⁸:

Այնուհետև մարմնի յուրաքանչյուր մասը մերսելով՝ շարունակում այսպես.

Ղուլաճ-ղուլաճ թևեր ըլլա,
Ծով-ծով աչեր ըլլա,
Բայլա քթիկ ըլլա,
Ղութի բերան ըլլա⁹:

Երեխայի առաջին ատամն իր հետ ուրախություն է բերել մորն ու ընտանիքին, այն դիտվել է բարեբախտության նշան և իմաստավորվել հատուկ ծեսով՝ Ալաշկերտում, Դիադինում, Բայազետում և այլուր նախապես պատրաստվել է «ատմահատիկ»: Մոտիկ հարազատներով հավաքվել են, գեղեցիկ հագնված երեխային դրել սեղանի կենտրոնում: Ներկաներից յուրաքանչյուրը վերցնելով «ատմահատիկից», զանազան բանաձևային բարեմաղթություններ ասելով լցրել է երեխայի գլխին:

Ատմահատիկ,
Սիրուն թաթիկ,
Ուտենք հատիկ,
Որ ատամիկ,
Հանի մանչիկ:

Ատմահատիկ,
Հատիկ, հատիկ,
Ուտի ծագիկ,
Թող հեշտ հանի
Իր ատամիկ,
Հատիկ, հատիկ,
Հան ատամիկ¹⁰:

Երեխան անգիտակցաբար ենթարկվում է, կատարում մոր կողմից պարտադրվող վարժությունները և հաճախակի կրկնությամբ ֆիզիկապես ամրանում, ճիշտ այնպես, ինչպես երեխան նախապատրաստվում է մանկական հնչյունների, արտաբերումներով (ա, ո, պա, մա և այլն) խոսելուն:

⁸ ՍԲ:

⁹ ՍԲ:

¹⁰ տես՝ վերոհիշյալ արխիվը, Ռ.Գրիգորյանի ֆոնդ, Վարդենիսի բանահյուսությունը, հետախույ՝ ՎԲ (ծեռ. ժողովածու):

Մանկանը նվիրված գովերգերի սիրված մոտիվներից է կնքավորի նկատմամբ երախտագիտության սերմանումը մանկան մեջ դեռևս վաղ հասակից: Ծննդյան և կնունքի ծիսակարգում քավորի, որպես հայ ընտանիքի ավանդական բարեկամի և բացառիկ կարևոր անձի կերպավորումն ընթանում է մանկանն առնչվող մոտիվներին ու խնդիրներին զուգահեռ և հաճախ նաև համատեղ:

Երեխայի ծննդից հետո մերձավորների առաջնահերթ խնդիրն է կնքել նրան, «որ չարի չհանդիպի», «սուրբ մեռնով օծվի», ոտքերին քսել մեռոն, որ միայն «կանանչ կոխի», աչքերին, որ ուրախություն տեսնի, ճակատին՝ որ խելացի լինի:

Զկնքված երեխան իր շրջապատով «անսուրբ» է համարվել, մարդիկ չեն շփվել նրան և քավորին է պատիվ ընկած «սուրբ մեռնով» կատարելու սրբագործման ծեսը, ուստի և նրա հարգանքն ու պատիվը երիցս մեծանում է հայ ընտանիքում: Հատկապես հետաքրքիր է նշել, որ նմանօրինակ երգերի գրեթե բոլոր տարբերակներում որոշակիորեն դրսևորված է մոր խորը երախտագիտությունը քավորի նկատմամբ, իբրև կնունքն իրականացնողի և մանկան հովանավորի:

Քե մեռնիմ, քյո քյավուրոչ,
Որ քե գրկե բերեր ի տուն,
Որ չըթողեր կերեր ի շուն¹¹:

Սրանից հետո մայրը մտահոգ է, որ որդին երախտամոռ չլինի, այլ շուտով գորանա և փոխհատուցի քավորին կատարվածի համար՝ ինչ կատարել է քավորը՝ արժանացնելով իրենց «սուրբ մեռնին»:

Հայ կճատիկ, այ կճատիկ,
Կճատ թևերդ վերու,
Սարերն ես էրթալու,
Անթառամ ծաղիկ քաղելու,
Քաղցր մեղր կրելու,
Յոթ սարկավագ գովք են ասե,
Ավազանի մեջ մկրտե,
Անունդ Հովհաննես դրե,

Յոթը երեց մոմ են վառե,
Աչքը ունքըդ մեռոն քսե,
Քավորն գրկե տուն է բերե,
Զթողեր ա շունն ի կերե,
Թառըմ տյու, թառըմ քյո քավոր,
Էն օր վարդ էր, վարդեվոր,
Հայ կճատիկ, սարեսար ես թռնելու,
Սուսան ծաղիկ բերելու,
Քու քավորոջ օրոխկելու:¹²

Հնավանդ ըմբռնումներին զուգահեռ, մանկական երգաշխարհ են ներթափանցել կրոնակեղեցական պաշտամունքի հետ կապված որոշակի իրողություններ և գաղափարներ: Այդ է պատճառը, որ հայ մայրն իր նվիրական ու անեղծ պոռթկումներում, անմեղ մանկան նկարագիրն ամբողջացնում է դարեր շարունակ պաշտված սրբությունների և մանկան բարեմասնության համադրմամբ ու զուգահեռներով: Այսպես՝

¹¹ ՀժՕԵ, էջ 198:

¹² ՀժՕԵ, էջ 198-206:

Կեռտանը սիրեմ, կեռտանը,
Կըլմանի ժամուն մեյտանը.
Թուշիկը սիրեմ, թուշիկը,
Կըլմանի ժամուն խուշիկը.
Պերանը սիրեմ, պերանը,
Կըլմանի ժամուն խորանը.
Քիթիկը սիրեմ, քիթիկը,
Կըլմանի ժամուն քութուկը.

Աչուկը սիրեմ, աչուկը,
Կըլմանի ժամուն խաչուկը.
Անկաճը սիրեմ, անկաճը,
Կըլմանի ժամուն զանգակը.
Շակատը սիրեմ, ճակատը,
Կըլմանի ժամուն գագաթը.
Մազերը սիրեմ, մազերը,
Կըլմանի ժամուն ավելը¹³:

Խորին ակնածանքի ու կրոնական սովորությունների նկատմամբ ունեցած մտավախության պայմաններում անգամ մայրը համարձակորեն անմեղ ու անարատ մանկանը համեմատում է ու զուգահեռներ անցկացնում քրիստոնեական խորհրդանիշների՝ եկեղեցու, խաչի, ավետարանի ու խունկի հետ՝ «աչուկդ խաչուկ է», «բերանդ խնկաման» և այլն: Գերիշխող է նաև Աստծո գաղափարը երգերում, ծննդյան առաջին իսկ օրից Աստծու հովանավորությանն է հանձնվում մանկիկը՝ «Աստծու աջը վրեղ» մաղթում նրան.

Աստված քեզի գրկե, շախե:
Մեկ Աստված պախա քեզի¹⁴:

Մայրն այն խոր համոզմանն է, որ վերուստ, բարի ոգիների միջնորդությամբ և զորությամբ է կանոնավորվում մանկատածության ողջ համակարգը, նրանց հովանու տակ է, որ երեխան հանգիստ է ու զորանում է: Ըստ մոր պատկերացման՝ մանկան քունը բնության և շրջապատի բարի արարածներն են բերելու.

Բլբուլը քուն բերե աչերուդ...
Եղներն ին եկեր, լեռներն ին իջեր,
Քեզ ալ անուշ քնիկ ին բերեր,
Բերեր քու ծով-ծով աչերդ ին լիցեր...¹⁵

Մայրական երգերի այդ շարքով երեխային է փոխանցվում և նրա մեջ սաղմնավորվում լավի ու վատի, բարու ու չարի նախնական պատկերացումներն ու ըմբռնումները ոչ միայն նեղ ընտանեկան, բարեկամական փոխհարաբերությունների վերաբերյալ, այլև մեծահասակների ազգային, պատմական նշանակություն ունեցող խնդիրների մասին նրանց վերաբերմունքն ու գնահատականները: Նման բնութագրիչ բառապատկերները կարող են նպաստել մի ողջ վերաբերմունքի կազմավորմանն ու անրագրմանը մանկան հոգում.

¹³ ՀԺՕԵ, էջ 181:

¹⁴ ՀԺՕԵ, էջ 37:

¹⁵ ՀԺՕԵ, էջ 29:

Թուրքն նամարդ ա բան չունիս, կամ	Հայ դա՛ն, դա՛ն, դա՛ն չունինք,
Թուրքի տանը բան չունիս,	Նամարդ մարդուց բան չունինք:
Խայի գալուն բարով տանք,	Հեռու փախի նամարդից,
Թուրքն ի կյալուն քարով տանք... ¹⁶	Զոլախից ու քյաչալից... ¹⁷

Ինչպես դժվար չէ նկատել վերը շարադրվածից, հայ գյուղաշխարհում, առտնին կենցաղում ու սովորույթներում գրեթե չկա մի խնդիր, որն իր անդրադարձը գտած չլինի մանկական երգարվեստում: Ինչ կյանքում մտահոգել է հայ գեղջկուհուն, ինչը ծանրացած է եղել նրա մտքին ու հոգուն և այն ամենը ինչ, ժամանակի հոլովությով ավանդվել է և սրբագրվելով՝ իբրև վերհուշ ապրել է հայ ընտանիքի առօրյայում, օրորոցային երգերի կատարման նպաստավոր միջավայրում մայրը անկանխակալ և անկեղծորեն երգում է, վերհիշում և գնահատում այդ ամենը, ականա երգերին հաղորդելով ազգագրական գործառույթ, պահպանելով թե հեռավոր անցյալի շունչը և թե իմաստավորված ներկան: Խնդիրներ և հարցեր, որոնցով էլ կարևորվում է մանկական բանարվեստի ժողովրդագիտական նշանակությունն ու ճանաչողական արժեքը:

¹⁶ ՀԺՕԵ, էջ 289:

¹⁷ ՍԲ:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ СЕМЕЙНОГО СТРОИТЕЛЬСТВА У АССИРИЙЦЕВ АРМЕНИИ

Межэтническое взаимодействие ассирийцев и армян проявилось в широком распространении в ассирийской среде межнациональных браков и семей, которые играют важную роль в жизни современного общества.

Данное сообщение посвящено исследованию отдельных характеристик национально-смешанных (далее н-с.) семей среди сельских ассирийцев Армении в последние десятилетия и основано на данных, полученных в результате обработки похозяйственных книг селений Верхний Двин и Димитров Араратской области за 1986 и 1997 гг., дополненных материалами переписей 1970 и 1989 гг.¹ В 1980-е годы в этих селах проживало около 2,5 тыс. ассирийцев, в том числе в Двине 1,8 тыс.

Внутринациональная замкнутость ассирийцев не была ярко выражена даже в XIX в., поскольку почти все места компактного проживания представителей этой группы характеризовались национально-смешанным составом. Исключением являлось с. Двин, которое до недавнего времени являлось по сути мононациональным: в 1970 г. из 2177 жителей представители других национальностей составляли лишь 1,8% (39 чел.). С 1970-х годов начался процесс размывания этнической однородности этого селения, в результате которого к середине 1990-х годов из 2608 жителей на долю армян приходилось уже 27% (705 чел.), а доля ассирийцев сократилась до 71,1% (1851 чел.).

С 1970 по 1997 годы рост населения Димитрова с 1231 до 1611 чел. сопровождался увеличением армян с 44,8% до 68,6% (552 и 1105 чел.) и уменьшением ассирийцев с 50,9% до 26% (627 и 420 чел.) в связи с активными миграционными процессами за пределы республики.

Современные процессы межнациональной брачности имеют давнюю историю, что подтверждается архивными документами

¹ Похозяйственные книги хранятся в сельских советах с. Верхний Двин и Димитров. Численные и половозрастные характеристики населения за 1970 и 1989 гг. подсчитаны автором на основании следующих источников: Сельское население Армении (по данным переписи 1970 г.). Ер., 1973. Табл. «Распределение населения по полу и возрасту». Итоги Всесоюзной переписи населения 1989 г. Табл. 29с «Распределение населения отдельных национальностей по полу и возрасту» (архив Министерства статистики, государственного регистра и анализа РА).

XIX в. В результате интенсивного процесса образования н-с. семей к середине 1980-х годов их доля составила в Димитрове 25,3%, в Двине 35,5%. Столь высокий удельный вес смешанных в национальном отношении семей свидетельствует о положительных социальнопсихологических установках ассирийцев на межэтнические браки.

В н-с. семьях проживала значительная часть сельчан. Так, в с. Двин в 1986 г. они составляли 39,6%, в 1997 г. - 37,2%. Аналогичная картина наблюдалась и в с. Димитров, где в семьях такого типа проживало соответственно 29% и 20,1% от всего населения.

Частота межнациональных браков определяется действием различных факторов, среди которых значимым является демографическая самодостаточность этнической группы. В немногочисленной или деформированной по поло-возрастному составу популяции заключение браков с представителями других национальностей становится неизбежными.

В 1980-1990-е годы среди сельских ассирийцев соотношение мужчин и женщин брачного возраста (16-29 лет) характеризовалось устойчивой диспропорцией. Так, в Двине в 1986 г. на 560 мужчин приходилось 440 женщин, в 1997 г. соответственно 518 и 482. По материалам переписи 1989 г. «дефицит» невест был характерен для всего сельского массива ассирийцев Армении, среди которых на 533 мужчин приходилось 467 женщин.

В сельской местности вариативность н-с. браков была невысокой. Эндогамная обособленность курдов-езидов, обусловленная конфессиональными запретами, полностью исключала браки между ними и представителями других народов. Редкими являлись семьи, объединявшие курдов-мусульман и армян или ассирийцев. Число браков ассирийцев и армян с представителями некавказских народов невелико.

Этнокультурная близость способствовала тому, что основными брачными партнерами ассирийцев являлись армяне. Доля семей с участием ассирийцев и армян составляла свыше 90% от числа всех межнациональных семей, причем за последнее десятилетие наблюдался рост этого показателя в Двине с 90,3% до 91,6%, в Димитрове с 90,5% до 95,9%. Среди ассирийцев наиболее вовлеченными в процесс межнациональной брачности были мужчины. В результате этого преобладали ассирийско-армянские семьи: в 1986 и 1997 годы в Двине они составляли соответственно 72% и 71%, в Димитрове 77,4% и 79,5%.

Межэтнические браки не создавали угрозы численности ассирийскому этносу, поскольку в местах компактного про-

живания ассирийцев существует устойчивая традиция наследования детьми национальности отца.

Анализ структуры н-с. семей с. Двин в 1980-1990-е годы по поколенному и численному составу, уровню детности проводился с учетом этнического фактора, для чего привлекались данные по однонациональным семьям - ассирийским и армянским, поскольку именно представители этих народов участвовали в образовании большинства межнациональных семей. Результаты анализа, приведенные в таблице 1, позволяют сделать следующие выводы.

На протяжении указанного периода наблюдался рост как однонациональных, так и национально-смешанных семей, сопровождавшийся увеличением численности населения.

За последнее десятилетие произошли изменения в поколенном составе н-с. семей, выразившиеся в резком увеличении однопоколенных семей за счет некоторого уменьшения трехпоколенных. Основную долю продолжали составлять семьи из родителей и их не состоящих в браке детей и семьи, объединявшие брачную пару с детьми, одним или обоими родителями, иногда незамужних сестер и неженатых братьев. В 1986 г. и 1997 г. эта группа семей составляла 96,2% и 92,5% от числа всех н-с. семей, существенно превосходя подобные показатели однонациональных семей: у ассирийских соответственно 79,7% и 68,1%, у армянских - 77,5% и 73,6%.

В 1980-е годы доля национально-смешанных семей, имевших детей в возрасте до 16 лет, составляла 68,8% от числа всех семей с детьми (среди них преобладали семьи с 2-3 детьми) и уступала ассирийским (73%) и армянским (71,8%), однако по доле семей с 2-5 детьми она занимала промежуточное положение: такие семьи составляли среди н-с. семей 50,5%, ассирийских 54,5%, армянских 43,6%. При этом стоит подчеркнуть, что реальное число детей в семье должно быть скорректировано в сторону увеличения за счет сыновей и дочерей старше 16 лет.

Таблица 1.

Однонациональные и национально-смешанные семьи с. Двин:
численный, поколенный состав, число детей (1986 - 1997гг.)

	число семей		числ-сть (чел.)		численный состав (в %)													
					одиночки		семьи, состоящие из											
	1	2	1	2			2 чел.		3 чел.		4 чел.		5 чел.		6 чел.		7 и более	
	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2
всего	338	488	1478	1637														
однонац.																		
в %	64,5	69,5	60,4	62,8														
в том ч-ле																		
ассир.	275	376	1211	1257	15,3	28,2	11	10,6	10,9	14,9	10,2	13,0	18,5	17,3	15,3	9,3	18,2	6,4
в %	81,4	77,1	81,9	76,8			6											
армян.	49	106	196	361	20,4	19,8	3	15,1	16,3	17,9	3,2	19,8	20,4	13,2	12,2	7,6	14,3	6,6
в %	14,5	21,7	13,3	22,1			2											
нац. см.	186	214	968	971	-	-	7	15,0	10,9	14,5	23,1	22,9	22,0	20,5	15,0	17,7	21,5	9,4
в %	35,5	30,5	39,6	37,2			5											
итого	524	702	2446	2608														
	поколенный состав (в %)								число детей до 16 лет (в %)									
	I		II		III		IV		I		2-3		4-5		6 и бол.		нет дет.	
	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1	2
всего																		
однонац.																		
в %																		
в том ч-ле																		
ассир.	19,6	31,6	56,4	54,5	23,3	13,6	0,7	0,3	18,5	11,5	44,2	42,8	10,3	4,8	-	-	27,0	40,9
армян.	22,5	26,4	57,0	59,4	20,5	14,2	-	-	28,2	23,5	41,0	34,1	2,6	3,5	-	-	28,2	38,9
нац.смеш.	2,7	6,1	62,3	66,3	33,9	26,2	1,1	1,4	17,2	18,7	47,3	43,9	3,2	5,1	1,1	-	31,2	32,3

Таблица составлена по данным похозяйственных книг с. Двин за 1986г. (1) и 1997г. (2). В таблице приведены данные по ассирийским, армянским и национально-смешанным семьям, объединявшим ассирийцев и армян.

Несмотря на сложные социально-экономические условия в 1990-е годы удельный вес национально-смешанных семей с детьми до 16 лет практически остался на прежнем уровне в отличие от однонациональных, где снижение рождаемости вызвало уменьшение семей с детьми у ассирийцев до 59,1%, у армян до 61,1%. Заслуживает внимания, что доля н-с. семей с 4-5 детьми не только не понизилась, но и выросла с 3,2% до 5,1%

Эти данные, а также низкая доля семей, не имевших детей моложе 16 лет, дают основание утверждать, что в 1990-е годы для н-с. семей была характерна ориентация на многодетность, основанная на большей стабильности подобных семей. В основе ее лежали разные причины, в частности, широкое распространение трехпоколенных семей, где в социализации детей принимали участие не только родители, но и представители старшего поколения, на помощь которых в воспитании детей и рассчитывала женщина.

Для численного состава национально-смешанных семей характерными тенденциями последнего десятилетия были увеличение семей из 2, 3 и 6 чел. и резкое уменьшение (почти в 2,5 раза) семей, состоящих из 7 и более человек. Однако несмотря на эти изменения продолжали преобладать семьи из 4, 5 и 6 чел., которые составляли более 60% от всех национально-смешанных семей. Этот показатель значительно превосходил аналогичную группу среди однонациональных: в 1986 и 1997 гг. среди ассирийских она составляла 44% и 39,6%, среди армянских 40,8% и 40,6%.

Чтобы наглядно представить различия в размере семей, можно выделить семьи малого (2-3 чел.), среднего (4 чел.) и крупного размера (5 чел. и более). Приведенные в таблице 2 данные показывают различия в размерах семей как однонациональных, так и смешанных. Несмотря на близость по величине ассирийские семьи многочисленнее армянских. В свою очередь по сравнению с однонациональными среди н-с. семей преобладали семьи крупного размера.

Таблица 2.

Размеры однонациональных и национально-смешанных семей с. Двин (1986 — 1997гг.)

число членов семьи	Семьи, в % к итогу					
	ассирийские		армянские		нац.-смешанные	
	1	2	1	2	1	2
2-3	26,6	35,7	30,8	41,2	18,4	29,5
4	10,2	13,0	10,2	24,7	23,1	22,9
5 и более	61,4	46,1	59,0	34,1	58,5	47,6
всего	100	100	100	100	100	100

Таблица составлена по данным похозяйственных книг за 1986г. (1) и 1997г. (2)

Эти выводы находят подтверждение и в средних размерах семей. В 1986 и 1997 гг. средняя численность национально-смешанных семей составляла 5,3 чел. и 4,7 чел. (без учета однопоколенных семей), что выше ассирийских (соответственно 5,2 и 4,4 чел.) и армянских семей (соответственно 4,9 и 4,2 чел.). В то же время среди н-с. семей численность ассирийско-армянских была выше армяно-ассирийских семей. Например, в 1986 и 1997 гг. двухпоколенные ассирийско-армянские семьи насчитывали 4,4 и 4,2 чел., в то время как армяно-ассирийские 4,2 и 3,8 чел.

Сопоставление данных, характеризующих структуру н-с. семей, с аналогичными данными однонациональных семей выявило общие закономерности в развитии сельских семей

независимо от национальности супругов: дальнейшую нуклеаризацию семей и обусловленные этим процессом изменения в численном и поколенном составе. Тем не менее по сравнению с ассирийскими и армянскими н-с. семьи сохранили устойчивую связь поколений, ориентацию на многодетность, что, в конечном итоге, обусловило их высокую среднюю численность. Таким образом, испытывая влияние одинаковых сложных социально-экономических факторов последнего десятилетия, семейно-бытовые нормы смешанных в национальном отношении семей в меньшей степени оказались подвержены трансформациям, что можно объяснить особенностями семейных установок прежде всего ассирийского этноса, наиболее вовлеченного в процесс межнациональной брачности. Среди одно-национальных именно ассирийские семьи выделялись численностью, что достигалось прежде всего более высоким уровнем детности.

Тенденции развития однонациональной и межнациональной брачности не остаются неизменными. Анализ статистических материалов за 1980-1990-е годы выявил тенденцию на уменьшение доли национально-смешанных семей среди сельского ассирийского населения: число таких браков сократилось в Димитрове с 25,3% до 16,25%, в Двине с 35,5% до 30,5%.

В то время как в 1980-е годы уровень этнически смешанных браков определялся общей демографической ситуацией, в 1990-е годы на него стали оказывать влияние другие факторы. Социально-экономические преобразования в рамках суверенной Армении, вызвавшие изменение социального статуса национальных меньшинств, способствовали формированию у ассирийцев негативного стереотипа восприятия многих явлений действительности и привели к некоторому сокращению контактов между ними и армянами, в том числе и в семейно-брачной сфере. Кроме этого, частота заключения браков зависит и от объективных факторов, в частности в результате миграционных процессов происходит уменьшение численности контактирующих этносов, что ведет к сокращению числа межнациональных браков. Не исключено и действие субъективных факторов - определенной «защитной» реакции ассирийцев, направленной на предпочтительность однонациональных браков, что вписывается в рамки современного культурного возрождения народов. Об устойчивости этой тенденции можно будет судить по результатам повторного обследования ассирийской современной семьи.

ՀԱՅ ԿՆՈՋ ԳԼԽԻ ՀԱՐԴԱՐԱՆՔԻ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ՏԱՐԱԾՄԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ
(19-րդ դ. – 20-րդ դ. կեսեր)

Ժողովրդական տարազի անբաժանելի մասն է կազմում կանանց և տղամարդկանց գլխի հարդարանքը: Այն ընդհանուր ներդաշնակություն է ստեղծում կանանց տարազի համակարգում և դրա առավել բնորոշ մասերից է: Դրա ձևերի, տեսակների ու տարածման հիմնահարցերով, Հայաստանի պատմագագարական ատլասի կազմման կապակցությամբ, մասնագիտորեն զբաղվել է է. Տ. Կարապետյանը, որի դաշտային, ազգագրական հետազոտությունների արդյունքները շարադրված են և ձեռագիր վիճակում պահվում են հեղինակի արխիվում¹:

Չնայած այն բանին, որ հայ կնոջ գլխի հարդարանքը դարեր շարունակ, կապված Հայաստանի պատմական ճակատագրի հետ, փոփոխությունների է ենթարկվել, այնուամենայնիվ, դրա հիմքը կազմող տարրը՝ հիմնօղակը, բոլոր ժամանակաշրջաններում անփոփոխ է մնացել:

Անվանի մշակութաբան-ազգագրագետ Խ. Սամվելյանը Հայաստանում 19-րդ դ. տարածված կանանց գլխի գլանաձև հարդարանքի ծագումը իրավացիորեն կապում է ավելի վաղ շրջանի հետ (2-րդ հազ. մ.թ.ա.)²: Սակայն նրա այն կարծիքը, թե դա հեթիթական մշակույթի ազդեցությունն է, ըստ մեզ, հիմնավորված չէ, քանի որ ընդգծվել է միայն արտաքին նմանությունը: Թուրքակ-Կալեում կատարված հնագիտական պեղումներից հայտնաբերվել է կնոջ ոսկե արձանիկ, որի գլխին կա ծաղկանախշերով զարդարված շրջանակաձև թագ³: Նմանատիպ հարդարանք է կրում նաև նույն ժամանակաշրջանին վերագրվող ոսկե մեդալիոնում պատկերված աստվածուհին կամ թագուհին, որի գլխի հարդարանքում, քողի տակից ուրվագծվում է որոշակի բարձրություն ունեցող զարդ՝ վրան հագիվ նշմարվող զարդամոտիվներով⁴:

Բրիտանական թանգարանում է պահվում Արտաշիսյան հարստության ժամանակաշրջանին վերագրվող «Պարտված Հայաստան» մակագրությամբ մի քանի դրամ⁵: Դրանների վրա պատկերված հայ թագուհիների թագերը հատած կոնի ձև ունեն և եզերված են թագակապ

¹ Այդ աշխատանքին, մասնավորապես կանանց գլխի հարդարանքի հետազոտմանը, ժամանակին մասնակցել է սույն հոդվածի հեղինակներից Թ. Ջաքարյանը:

² Խ. Սամվելյան, Հին Հայաստանի կուլտուրան, 1 հ., Եր., 1931, էջ 70-71:

³ Ա. Պատրիկ, Հայկական տարազ, Եր., 1967, էջ 18:

⁴ Անդ, էջ 17:

⁵ Վ. Հացունի, Պատմություն հայ տարազին, Վենետիկ, 1923, էջ 103:

հանգույցով: Այն հիշեցնում է Արևմտյան Հայաստանի կանանց գլխի շրջանակները (Վասպուրական, Տուրուբերան), որոնք հարդարված վիճակում նույն տեսքն ունեն:

10-13-րդ դդ. օգտագործված հիմնօղակի նմուշներ են առկա նաև հայկական մանրանկարչությունում, ինչպես նաև տապանաքարերի քանդակներում: Գլխի շրջանակի գեղեցիկ օրինակ է 1323թ. Գլածորի վանքում նկարազարդված ձեռագրի անվանաթերթի Աստվածամոր թագը: Շրջանակ-թագի մուգ-կարմիր տափը զարդարված է միմյանցից որոշ հեռավորության վրա գտնվող երեք կապույտ ծաղկով⁶: Գլխի նմանատիպ շրջանակներ կան նաև Վանի, Կիլիկիայի, Հաղբատի, Տաթևի նկարազարդ ձեռագրերում:

Վերոհիշյալ նյութերը ցույց են տալիս, որ հիմնօղակը և բաղադրամասերը դարեր շարունակ ավանդաբար գոյատևել են և, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, պահպանվել մինչև 20-րդ դարի 60-70-ական թթ.:

Աշխատանքում փորձ է արվում բացահայտելու գլխի հարդարանքի հիմնական մասի՝ հիմնօղակի և դրա բաղկացուցիչ տարրերի կառուցվածքը, օգտագործման եղանակներն ու նպատակները:

Գլխի հարդարանքի մեջ մտնող առանձին տարրերը դրսևորվում են հայ ժողովրդի կենցաղի ու սովորույթների, ազգային բնավորության ու գեղագիտական ճաշակի տարբեր առումներում, որոնք, իրենց հերթին, սերտորեն աղերսվում են երկրի սոցիալ-տնտեսական վիճակի ու պատմական ճակատագրի հետ:

Հայաստանի պատմազգագրական շրջաններում կանանց գլխի հարդարանքի տարրերը զանազանվում են միմյանցից, կապված բնակլիմայական, սոցիալ-տնտեսական, կենցաղային տարբեր պայմանների ամբողջության հետ: Չնայած այդ տարբերություններին, բոլոր վայրերին հատուկ են եղել գլխի հարդարանքի հիմքը կազմող հիմնօղակը և դրա բաղկացուցիչ մասերը:

Ըստ այդմ, պայմանականորեն անվանվող հիմնօղակը Հայաստանի տարբեր շրջաններում ունեցել է տարբեր անվանումներ, այն է՝ *պոլի*, *պալի*, *պալտի* (Զանգեզուր, Վայոց ձոր, Գողթն, Երևան, Արագածոտն, Գեղարքունիք), *չեխտի*, *չխտի* (Լոռի, Տավուշ), *կոպի* (Լոռի, Տավուշ, Արագածոտն, Գանձակ), *քթագ* (Տավուշ), *կոտիկ* (Մոկս, Արագածոտն), *թանթանա*, *օյա*, *վարդ* (Բարձր Հայք, Շիրակ, Ջավախք) և այլն:

Հիմնօղակը պինդ կամ փափուկ նյութից պատրաստված շրջանակ է, որը դրվել է գլխին՝ գլխաշորի վրայից: Պինդ նյութից պատրաստված հիմնօղակը գլխի հարդարանքի այն հիմնական մասն է, որն ամբողջ հարդարանքի հիմք էր հանդիսանում: Հայաստանի պատմազգագրական մարզերի մեծ մասում (Վայոց ձոր, Տուրուբերան, Վասպուրական, Լոռի, Տավուշ) հիմնօղակը պատրաստվում էին բարակ փայտից: Այն նախօրոք գոլ ջրի մեջ փափկեցնում էին և շրջանակի ձև տալիս: Այն ու-

⁶ Հայկական մանրանկարչություն, Եր., 1967, էջ 60:

նեցել է տարբեր հյուսվածքներ, երեսպատված մուգ կարմիր կամ մուգ մանուշակագույն թավշյա կտորով: Քունքերի մոտ ամրացվում էր շրջանակաձև երկու բարձիկ, որի ամբողջ մակերեսը, մի բարձիկից մինչև մյուսը, զարդարվում էր մետաքսյա գունավոր թելերով ասեղնագործված ժանյակով: Ժանյակներում նախասիրած զարդերը տարբեր գույնի ծաղիկներն էին (վարդ, մեխակ, մանուշակ, շուշան և այլն):

Դաշտային ազգագրական նյութերը ցույց են տալիս, որ Հայաստանի մի շարք մարզերում (Սյունիք, Արցախ, Գեղարքունիք, Արագածոտն) գլխի շրջանակը պատրաստում էին նաև խմորից⁷:

19-րդ դ. վերջերին – 20-րդ դ. սկզբներին Արևելյան Հայաստանի որոշ շրջաններում (Արագածոտն, Երևան և այլն) հիմնովակը պատրաստում էին նաև ստվարաթղթից, որը նվազ տարածում ուներ: Պինդ նյութից պատրաստված գլխի շրջանակի բաղկացուցիչ մասերից էին *ճակատակապը և կոպին*: ճակատակապը հիմնովակի լայնությամբ հյուսվածք էր՝ մեծ մասամբ թավշից, որն ամրացվում էր շրջանակի վրա:

Երիտասարդ կանայք գերադասում էին մուգ կարմիր կամ կապույտ, իսկ տարեցները՝ սև գույնի ճակատակապ:

ճակատակապերը կարելի է բաժանել երկու տեսակի՝ տարբերակներով, այն է՝ ա) ասեղնագործած, որը կարող է զարդարված լինել կամ մետաքսե թելերով կամ քարերով, բ) առանց ասեղնագործության, որը զարդարված է մի քանի գնդասեղով կամ հասարակ լաթակտորից է: Մետաքսե թելերով կամ քարերով ասեղնագործված ճակատակապեր հիմնականում կրել են նորահարսներն ու երիտասարդ կանայք: Սովորաբար Հայաստանի բոլոր շրջաններում միջահասակ և տարեց կանայք գործածել են առանց զարդի, սև կամ մուգ կապույտ հյուսվածքի ճակատակապեր, որոնք տարբերվել են միմյանցից ոչ միայն ըստ կրողների տարիքային կազմի, այլև սոցիալ-տնտեսական վիճակի:

Այսպես, թանկագին քարերով ու ոսկեթելով զարդարված ճակատակապերը հատուկ են եղել սոցիալական վերին խավերին, իսկ հասարակ քարերով և թելերով ասեղնագործածը՝ ստորին խավերին ու մեծ տարածում են ունեցել: Պինդ նյութից սարքված գլխի շրջանակի մյուս տարրը *կոպին* էր: Կոպին պատրաստում էին ուղղանյունաձև նեղ հյուսվածքից, որի վրա բուրդ կամ բամբակ էին դնում, եզրերը կարում և օղակի ձև տալիս: Կոպին ամրացվում էր հիմնովակի ներսը և ծառայում վերջինիս հարմար դիրք տալուն:

Հիմնովակի մի տարատեսակն էլ, *թանթանա* անվամբ, տարածվար է եղել Բարձր Հայքում: 19-րդ դ. - 20-րդ դ. սկզբներին արևմտահայ հատվածի Արևելյան Հայաստան ներգաղթի շնորհիվ, տարազի այդ տարրը տարածում է գտել Շիրակում և Զավախքում: Թանթանան դնում էին գլխարկի վրայից «քունքակախիկ գիլիֆլըղը և ճակտնոց շերիտը կա-

⁷ Վերցնում էին գլխի շրջանագծի չափով ուղղանկյունաձև մի լաթակտոր՝ հիմնովակի ընդունված բարձրությունից երկու անգամ ավելի, պատրաստի խմորը հավասարաչափ քսում էին վրան, երկտակ ծալում, շրջանակի ձև տալիս և դնում արևին կամ թոնրում, որ չորանա:

պելուց հետո»⁸: Եթե Բարձր Հայքի թանճանայի բարձրությունը 4.5-5.5 սմ էր, ապա Վասպուրականի, Տուրուբերանի (Տարոնի), Արցախի, Սյունիքի պատմագագադրական մարզերին բնորոշ է եղել 6-10սմ բարձրություն ունեցող հիմնօղակը, իսկ Վայոց ձորին, Գուգարքին, Տավուշին՝ 1.5-3.5սմ:

19-րդ դ. - 20-րդ դ. սկզբներին վրացի կանանց գլխի հարդարանքի շրջանակը՝ բաղկացուցիչ մասերով հանդերձ⁹, շատ նման էր Լոռիում և Տավուշում տարածված հիմնօղակին, որը, ըստ երևույթին, հայ-վրացական դարավոր մշակութային փոխառնչակցությունների արգասիք է:

Հետազոտվող ժամանակահատվածի ազգագրական նյութերը ցույց են տալիս, որ ինչպես հայերի, այնպես էլ այլ ժողովուրդների աղջկա և ամուսնացած կնոջ գլխի հարդարանքը միմյանցից խիստ տարբերվել է:

Եթե 19-րդ դ. Հայաստանի պատմագագադրական մարզերի մեծ մասում աղջիկը մինչև ամուսնանալը գլխաշոր կամ պարզ գլխարկ է կրել, ապա ամուսնանալուց հետո՝ գլխի հարդարանք՝ բարդ համալիրով, որը պատրաստելը մեծ հմտություն և նուրբ ճաշակ և վարժ աշխատանք է պահանջել:

Հայաստանի ազգագրական բոլոր մարզերում հիմնօղակը հարսի գլխին դնում էին ամուսնության առաջին շաբաթվա ընթացքում, այն խորհրդանշել է սոցիալական մի վիճակից անցումը մյուսին:

Այս առումով հետաքրքիր է նշել, որ Հարք գավառում կանայք իրավունք են ունեցել հիմնօղակ կրելու առաջին երեխան ունենալուց հետո¹⁰, որը, ըստ երևույթին, ավելի վաղ շրջանում մեծ տարածում է ունեցել հայերի մեջ և կապվել է պտղաբերության հետ, որն արտահայտություն է գտել բուսանախշերի մեջ: Պատահական չէ, որ Ա. Մնացականյանը թանճանայի շրջանածն բարձիկները դիտում է որպես երբեմնի պտղաբերության սիմվոլներ, որոնք ժամանակի ընթացքում կորցրել են նախնական իմաստը¹¹:

Այսպիսով, հիմնօղակը և դրա առանձին տարրերը, որոնք լայն տարածում են ունեցել հայերի կենցաղում, բացահայտում են հայ ժողովրդի նյութական և հոգևոր մշակույթի հետ առնչվող մի շարք ավանդական երևույթներ, ինչպիսիք են՝ սեռատարիքային անցման, ամուսնության և պտղաբերության հետ կապված սովորույթները, սոցիալական և քաղաքական վիճակը, ինչպես նաև գեղագիտական ճաշակն ու ազգային բնութագիրը:

⁸ Լ. Ավագյան, Բարձր Հայքի ժողովրդական տարազը XIXդ. -XXդ. սկզբին.- Պատմա-բանասիրական հանդես, 1971, ք. 4, էջ 192:

⁹ Грузины. Одежда и пища.- Народы Кавказа, т. 2, М., 1962, с. 301.

¹⁰ Բենսե, Բուլանդխ կամ Հարք գավառ.-Ազգագրական հանդես, գ. Ե, Թիֆլիս, 1899, էջ 69:

¹¹ Ա. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, Եր., 1955, էջ 44:

«ԸՆՏԱՆԻՔ»-Ն ԱՐԴԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Հայաստանի հասարակական կազմակերպություններից (այսու՝ ՀԿ) մեկի՝ «Սարգսյանների՝ ընտանիքի պաշտպանության միության» նախագահը հարցազրույցի ժամանակ նշեց, որ իր կազմակերպության նպատակներն ու խնդիրներն են. իրենց «տոհմի պահպանումը և միմյանց հետ բոլոր անդամների շփումը, պարբերաբար հանդիպումները»: Մի տաս տարի առաջ դժվար էր պատկերացնել, որ նման «ընտանեկան» խնդիր լուծելու համար երբև անհրաժեշտություն կծագի ստեղծելու և Արդարադատության նախարարարությունում գրանցելու հատուկ հասարակական կազմակերպություն, որը կգրառվեր «տոհմի պահպանման հարցերով»: Արդյո՞ք սա զավեշտի հասնող եզակի դեպք է, թե՞ այսօրյա հայաստանյան մի շարք հասարակական կազմակերպությունների իրական նպատակների և խնդիրների առավել անկեղծ և գիտակցված ձևակերպում:

Երևույթը փոքրիշատե հասկանալու համար, անդրադառնանք այսօրյա «հասարակական կազմակերպություն» հասկացությանը: «Հասարակական կազմակերպությունները», ունենալով դեռ խորհրդային նախապատմություն, ստեղծված նոր իրականության շրջանակներում ձեռք են բերել նախկինից էապես տարբերվող բովանդակություն: Հայաստանում ՀԿ-ների այսօրվա պատկերը պարզելուն էր ուղղված «Համաշխարհային ուսուցում» կազմակերպության «ՀԿ սեկտորի գնահատում» հետազոտական ծրագիրը,² որի շրջանակներում էլ հավաքվել է և սույն հոդվածի նյութը: Գիտարշավներն ընդգրկել են Շիրակի, Լոռվա, Կոտայքի, Արարատի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերը, ինչպես նաև Երևանը: Ընդհանուր առմամբ հարցման է ենթարկվել մոտ 200 հասարակական կազմակերպություն:

Ժամանակակից իմաստով՝ «Հասարակական կազմակերպություն» ասվածը հայկական իրականություն մուտք գործեց «շրջակա միջավայրի պաշտպանություն», «մարդու իրավունքներ», «կանանց իրավունքներ», «հումանիտար օգնություն», «սոցիալապես անապահով»,

¹ Հոդվածում կազմակերպության անվանման մեջ նշված իրական ազգանունը փոխված է:

² Հոդվածի հեղինակները շնորհակալություն են հայտնում հետազոտությանը մասնակցող իրենց գործընկերներին՝ հավաքված նյութին ծանոթանալու, խնդրո առարկայի ընդհանուր քննարկումներին արժեքավոր դիտողությունների, ինչպես նաև «Համաշխարհային ուսուցում» կազմակերպությանն՝ ուսումնասիրությունը նախաձեռնելու և կազմակերպելու համար:

«փախստական» և նմանատիպ այլ բառ-բովանդակությունների հետ համատեղ:

Ազգագրագետները, որոնք թե՛ ընտանիքի, թե՛ հասարակության և թե՛ դրա կազմակերպության ձևերի հետազոտողն են, առաջին անգամ բախվեցին «հասարակական կազմակերպություն» գաղափարի արևմտյան մոտեցմանը 1994թ. Համաշխարհային բանկի առաջին հետազոտություններից մեկի շրջանակներում («Գոյատևման ռազմավարություն» ծրագիր): Ընդ որում «ոչ կառավարական կազմակերպություն» (NGO) անվանումը, որն այսօր շատերին է հայտնի և հասկանալի, այն ժամանակ անծանոթ էր ընդհանրապես և լավագույն դեպքում նույնացվում էր օտարամուտ բարեգործական կազմակերպությունների հետ³ (օր. Կարմիր Խաչ, Ազնավուրը՝ Հայաստանին, Կանանց միջազգային ֆոնդ և այլն): Քանի որ այդ ժամանակահատվածում կառավարությունը նույնացվում էր պետության՝ Հայաստանի հետ, այն ամենը, ինչ «ոչ կառավարական» էր, նաև ոչ հայաստանյան էր: Այս երևույթի արմատները գալիս են դեռ խորհրդային իրողությունից, երբ հասարակական կազմակերպությունները մեծ մասամբ ստեղծված էին պետական պատվերով և հանդես էին գալիս որպես ոչ այնքան իբրև կառավարությանը հակաշիռ «երրորդ ուժ»⁴, որքան որպես կառավարության կցորդ: Դեռ ավելին, պետությունը տարատեսակ հասարակական կազմակերպման կառույցների (օր. կոմերիտություն, պիոներական կազմակերպություն, արհմիություններ, տարատեսակ կոլեկտիվներ⁵) միջոցով փորձում էր ներագդել հասարակական բազմապիսի, ընդհուպ մինչև ներընտանեկան և նույնիսկ միջանձնային հարաբերությունների⁶ վրա՝ չշրջանցելով նաև ընտանիքի ծիսական կյանքը (հիշենք կոմերիտական հարսանիքները):

Մյուս կողմից, ականհայտ է, որ ընտանիքը, լինելով մարդկությանը հայտնի ամենակայուն միավորը, ընկալվում է որպես կազմակերպման իդեալական մոդել և հաճախ ամեն մի հասարակական կառույցի օրինակ ծառայում, ընդհուպ պետությունը⁷: Այս կարծրատիպը մինչ օրս էլ

³ Տե՛ս «Գոյատևման ռազմավարություն» ծրագրի հարցարանը և զեկույցները.- Համաշխարհային բանկ, 1994թ.:

⁴ Ըստ ժամանակակից արևմտյան մոտեցման քաղաքացիական հասարակությունը բաղկացած է երեք հիմնական «ուժ»-ից՝ կառավարություն, բիզնես սեկտոր և ՀԿ սեկտոր:

⁵ «Կոլեկտիվ» գաղափարը խորհրդային մտածողությունում դարձել էր այնքան կադապրային և որոշիչ, որ որոշ դեպքերում կարող էր զավեշտի հասնել, ինչպես Էլդար Ռյազանովի «Կառնավալային գիշեր» ֆիլմի հանրահայտ հերոսի թևավոր դարձած արտահայտությունը. «А я одна, совсем одна - в своем здоровом коллективе».

⁶ Հիշենք խորհրդային հասարակությունը լավագույնս ներկայացնող Է.Ռյազանովի «Ծառայողական սիրավեպ» ֆիլմում տեղ գտած դրվագը, երբ անձնական նամակներն առաջարկվում է քննարկել հանրային հավաքում:

⁷ Հմտ., օրինակ՝ ազգակցական-ընտանեկան բառեզրույթների լայն գործածումը թե՛ պետական առաջնորդներին ներկայացնելիս (Լենին պապին, Ստալինը՝ ժողովուրդների հայր, Տիտու զույգի «հայր» և «մայր» լինելը) և թե՛ պետությանն ու հասարակությանը («Մայր հայրենիք» կերպարը, հանրահայտ երգերի հետևյալ տողերը՝ «Мой адрес - не дом и не улица, мой адрес - Советский Союз»՝ «Я, ты, он, она - вместе целая страна, вместе - дружная семья», տե՛ս նաև սույն գիտաժողովին ներկայացված Լ.Արրահամյանի «Ազգ-պե-

շարունակում է գործել⁸։ Որպեսզի համոզվենք դրանում, բավական է ծանոթանալ ներկայումս ՀՀ-ում գործող հասարակական կազմակերպությունների անվանացանկին. «ընտանիք», «նահապետ», «մայր», «հայր», «քույր», «մայրություն», «ծնող», «տուն» բառերը պարունակող բազմաթիվ ՀԿ անվանումներին, ինչպես նաև ՀԿ-ներին, որոնք ուղղակի կոչվում են. «Ընտանիք», «Գերդաստան», «Օջախ», «Տուն», «Երդիկ», «Տանիք», «Շեն», «Շեն», «Հագարաշեն»⁹։ «ՀԿ» երևույթի ընտանեկան բնույթի արտաքին կողմի մասին է խոսում նաև այն փաստը, որ Հայաստանի Հանրապետության գրեթե բոլոր հասարակական կազմակերպությունները գրանցված են իրենց ղեկավարներից որևէ մեկի բնակարանի հասցեով։ Երբեմն նախագահի բնակարանը, իրոք, դառնում է ՀԿ գրասենյակ։ Դեռ ավելին, գիտարշավներից մեկի ժամանակ հանդիպեցինք դեպքի, երբ գրասենյակի համար տարածքը գնված էր նախագահի տանը կից շենքում, և ակնհայտ էր հետագայում այն նախագահի բնակարանին միացնելու նպատակը։

Ինչ վերաբերվում է ՀԿ-ների ներքին աշխատանքին, ապա այստեղ ևս կարելի է նկատել ընտանեկան փոխհարաբերություններին բնորոշ որոշ հատկանիշներ։ Այսպես, օրինակ՝ ավանդական հայոց ընտանիքում գործող աշխատանքային սեռատարիքային բաժանումը, որոշ փոփոխություններով հանդերձ, առկա է նաև ժամանակակից ՀԿ-ներում։ Հարցման ենթարկված մի շարք ՀԿ-ներում, որոնց անդամների մեծ մասը միևնույն ընտանիքից են, ուրվագծվում է դերերի բաժանման հետևյալ օրինաչափությունը. ա) ընտանիքի գլուխը՝ հայրը (ավագ տղամարդը), ապահովում է ՀԿ աշխատանքների իրավական կողմը (օրենսդրական դաշտ՝ հարկեր, գրանցում-վերագրանցում և այլն), բ) աշխատող ձեռքեր՝ մայրը (միջին տարիքի կանայք), ծրագրի հիմնական իրականացնողն ու կազմակերպողն է, գ) երեխաները՝ մեծ մասամբ ՀԿ - նորամուտ դասընթացներին մասնակցողներն ու մանր խնդիրներով «վազվզողներն» են¹⁰։ Ընդ որում, այս դերաբաժանումը գործում է ոչ միայն վերոհիշյալ տիպի ՀԿ-ներում, որոնց կորիզը կազմում է ընտանիքը, այլև այնտեղ, ուր հիմքում ընկած չէ «ընտանիք» խումբը¹¹։ Ուշագրավ է, որ ՀԿ-ի այս «գլուխ», «ձեռք» և «վազվզող» բաղադրիչները, վերցված են լինելով մարդու մարմնի համապատասխան մասերի գործառույթների նմանությամբ, նաև «ընտանիք» օրգանիզմը բնորոշող հասկացություններ են (հմտ. «ընտանիքի գլուխ», «աշխատող

տություն, քե՞ն ընտանիք-պետություն. հայ ինքնության ընտանեկան առանձնահատկությունները» գեկուցումը։

⁸ Բանասացներից մեկը, ցանկանալով ընդգծել իր ՀԿ ներքին հարաբերությունների առողջ մթնոլորտը, ասաց. «Շատ լավ անձնակազմ, անդամներ ունեմ, ոնց որ մի ընտանիք լինեմք...»։ - «ՀԿ սեկտորի գնահատում» ծրագիր, հարցազրույց «Ավետ Տերտեղյան» հիմնադրամի նախագահի հետ։

⁹ Տե՛ս ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցված 2224 հասարակական կազմակերպությունների անվանացանկը։

¹⁰ Տե՛ս «ՀԿ սեկտորի գնահատում» ծրագրի *Գայանե Շագոյանի* դաշտային օրագիրը։

¹¹ Տե՛ս «ՀԿ սեկտորի գնահատում» ծրագրի *Լ. Խառատյանի* դաշտային օրագիրը։

ծեռքեր», «մանր ոտ»¹²): Այսինքն՝ ուրվագծվում է գործառույթների անցումը մարդ-ընտանիք-հասարակական կազմակերպություն շղթայում:

Անդրադառնանք ՀԿ-ի «ընտանեկան» բովանդակության թերևս ամենահիմնական դրսևորմանը՝ դրա տնտեսական կողմին: Պաշտոնապես ՀԿ-ն սահմանվում է որպես «շահույթ չհետապնդող կազմակերպություն»: Ընտանիքը ևս անշահախնդիր մարդկանց խումբ է, սակայն միաժամանակ այն ամենակայուն տնտեսական միավորն է¹³: Պատահական չէ, որ մեծ ընտանիքներին համայնքը «տնտեսություն» է անվանում և ըստ վերջիններիս իրականացրել հողի բաժանումը սեփականաշնորհման ժամանակ:

Անցումային հայ հասարակությունը միանգամից բախվեց տնտեսության կազմակերպման մի շարք արևմտյան ձևերի (փոքր և միջին բիզնես, ֆերմերային տնտեսություն, մանր ու միջին արտադրություն և այլն): Արևմուտքում, որտեղ տնտեսվարման այս ձևերը բավական երկար ավանդույթ ունեն, դրանք հաճախ իրագործվում են ընտանիքի շրջանակներում (հմտ. «ընտանեկան բիզնես» համատարած երևույթը¹⁴): Մեր հասարակությունում տնտեսվարման նոր ձևերը ևս ընտանեկան բնույթ են կրում. սկսած մաֆիոզ-կլանային խոշոր տնտեսություններից¹⁵ մինչև մանր փողոցային առևտուր¹⁶:

Ստեղծված նոր սոցիալ-տնտեսական իրավիճակում համատարած գործազրկության մատնված հայ հասարակությունը նորանոր ինքնադրսևորման ուղիքներ է փնտրում՝ որոշակի ֆինանսավորման հնարավորությունների հետ մեկտեղ: Բազմապիսի եկամտաբեր կազմակերպությունների կողքին ի հայտ եկան «շահույթ չհետապնդող» ՀԿ-ները, որոնք, սակայն, տալիս են գումար վաստակելու ևս մեկ հնարավորություն: Եվ բիզնեսի ասպարեզում ինչ-ինչ պատճառներով իրենց տեղը չգտած մարդիկ փորձեցին ընտանիքի եկամուտ հայթայթել ՀԿ-ների միջոցով, ինչին հատկապես խթանեց արևմուտքի կողմից ներմուծված դրամաշնորհային համակարգը: Այս հանգամանքն իրենով կանխորոշեց ՀԿ «ընտանեկանությունը», քանի որ ընտանիքը արդեն կայացած, համատեղ աշխատանքի ու տնտեսվարման ավանդույթ ունեցող խումբ է և անհրաժեշտ էր միայն այդ կայացած միավորին տալ «իրավական անձ»-ի կարգավիճակ, որպեսզի այն ինքնուրույն գոյատևեր: Այս իմաստով որոշ դեպքերում ՀԿ-ը դառնում է յուրօրինակ «ընտանեկան բիզնես»: Ուշագրավ է, որ «ընտանեկան բիզնես»-ի այսպիսի տարբերակը

¹² Տե՛ս *Չայանե Շագոյան*, Օգնություն. կամեցողություն, թե՛ բարի կամք. - Պատմություններ աղքատության մասին, Եր., 2001, էջ 367:

¹³ Չ. Դ. Կարապետյան, *Армянская семейная община*, Ер., 1958; *ее же*, *Родственная группа "азг" у армян (вторая половина XIX и начала XXвв)*, Ер., 1966.

¹⁴ Այս երևույթն այնքան կարծրատիպային է, որ նույնիսկ հեռուստասերիալներում ընկած է դեպքերի զարգացման առանցքում:

¹⁵ Դ. *Պետրոսյան*, Աղքատություն. ընկալում և վերաբերմունք, - Պատմություններ աղքատության մասին, էջ 377:

¹⁶ Դ. *Խառատյան*, Մեր նմանների մեռնելն ավելի լավ է, - Անդ, էջ 101-110:

համախմբում է ոչ այնքան քաղաքային փոքր ընտանիքի անդամներին, որքան ազգականներին, տոհմին առհասարակ: Սրանով ՀԿ-ն շատ նմանվում է գյուղական «ծուխ», «տնտեսություն» հասկացությանը: Եվ ինչպես ավանդական տնտեսությունն է «ժառանգորդվում», ՀԿ-ն ևս ձեռք է բերում նման միտում: Օրինակ՝ կառավարական պաշտոնյաներից մեկը հարցազրույցի ժամանակ խոստովանեց, քանի որ ինքը պետական աշխատանքի է անցել, «գործը (այսինքն՝ ՀԿ-ը՝ Լ.Խ, Գ.Շ.¹⁷) փոխանցել է որդուն՝ թող զբաղվի»:

Այն, որ ընտանիքն է դարձել ՀԿ-ի կազմակերպման հիմքը, ապացուցվում է նաև մարզերում ՀԿ-ների հետ կապված հետևյալ իրավիճակը: Խորհրդային ինդուստրիալիզացիայի արդյունքում ձևավորված նոր քաղաքներում (Չարենցավան, Հրազդան, Աբովյան), որոնց բնակչությունը մեծ մասամբ բաղկացած է տարբեր շրջաններից եկած երիտասարդ փոքր ընտանիքներից, և որտեղ չկա եռասերունդ ընտանիքը (հմնտ. այստեղի «անկեսուր մայրաներ» երևույթը) և, հետևապես՝ տոհմի լայն համակարգը, ի տարբերություն ավանդական ընտանեկան կենցաղ ունեցող շրջանների, ՀԿ-ներն այդպես էլ չեն կայացել¹⁸:

Ինչպես արդեն նշվել է, արտասահմանյան դոնորներ իրենց դրամաշնորհներով նպաստում են ՀԿ-ների բիզնեսի զարգացմանը, և այսպիսով՝ «ընտանեկան բիզնեսին»: Ընդ որում, բազմաթիվ ծրագրերում դրամաշնորհային հատկացումներ արվում են հենց հայ ընտանիքին օգնելու կամ դրա վրա ներազդելու նպատակով (օրինակ՝ «Ընտանեկան բռնություններ» նախագիծը, զանազան գենդերային ծրագրեր, «Ընտանիքի պլանավորում», դեռահասների սեռական դաստիարակություն և այլն): Այս ծրագրերը, միտում ունենալով վերարտադրել ընտանիքի դոնորին հայտնի մոդելը¹⁹ և լուծել դոնորին հասկանալի «ընտանեկան խնդիրներ», իրականում, մի կողմից, նպաստում են հայ ընտանիքի գոյատևմանը՝ «ՀԿ-ընտանիքների» համար ավելի շուտ առիթ ստեղծելով վաստակելու որևէ նյութական միջոց²⁰, մյուս կողմից, ինչ-որ չափով ներազդում են նաև ավանդական ներընտանեկան հարաբերությունների վրա:

Այսպիսով, սույն հոդվածի նպատակն էր ցույց տալ, որ «ընտանիքը» հայոց մեջ ոչ միայն «հասարակության բջիջն» է, ինչպես այն ընդունված

¹⁷ Տե՛ս «ՀԿ սեկտորի գնահատում» ծրագրի Լ. Խառատյանի դաշտային օրագիրը:

¹⁸ Տե՛ս «ՀԿ սեկտորի գնահատում» ծրագրի Լ. Խառատյանի հաշվետվությունը:

¹⁹ Շատ դեպքերում դոնորները, նպատակ ունենալով տեղերում կառուցելու ժողովրդավարական հասարակություն, այն փորձում են իրականացնել նաև ընտանիքի միջոցով, ընդ որում՝ աչքի առաջ ունենալով ընտանիքի իրենց տարբերակը: Երևի թե սրանով կարելի է բացատրել հայ իրականությանն օտար ընտանեկան այն խնդիրները, որոնց լուծմանը դոնորները փորձում են նպաստել:

²⁰ Այսպես, «Ընտանեկան բռնություններ» ծրագրին մասնակցելու համար դիմել էին մոտ 130 ՀԿ, այն դեպքում, երբ նմանատիպ խնդիրներով (հիմնականում գենդերային ուղղվածությամբ) զբաղվող ՀԿ-ների նույնիսկ չափազանց քանակը չէր գերազանցում հիսունը: Ինչը լավ ապացույց է ՀԿ-ների արհեստական ընդգրկվածությանը նմանատիպ խնդիրներում: Այս հանգամանքին մեր ուշադրությունը հրավիրեց Ս. Պողոսյանը:

է որակել, երբեմն այն նաև հանդես է գալիս իբրև հասարակության ինքնակազմակերպման այլ ձևերի, ինչպես, օրինակ՝ տվյալ դեպքում՝ ՀՀ-ների մոդել:

Рубен Карапетян
ИАЭ

АРМЯНСКАЯ СЕМЬЯ В КОНТЕКСТЕ ПЕРЕХОДНОГО ПЕРИОДА

События начала 90-х годов кардинально изменили вектор целеполаганий и деятельности армянского общества. Страна уже более 10 лет находится в экстремальном положении, обусловленном отсутствием системного подхода как в реформировании прежней структуры, так и в решении возникших проблем. Его наиболее важной симптоматикой является спонтанное движение без определенных стратегических ориентиров. Уже стало очевидным, что массовая миграция, стагнация экономической жизни, моральное разложение общества и т.п. становятся серьезной угрозой для будущего страны и всего этноса. В этой связи институт семьи приобретает особое значение. Как составная часть общественного организма семья несет всю нагрузку современных проблем, а происходящие в ней изменения являются индикатором определения характера развития общественных процессов.

В настоящей статье, в рамках определения некоторых классических функций семьи, ставится цель проанализировать ситуацию, сложившуюся в армянской семье в конце XX-го столетия. В статье предложены подходы к разработке задач последующего изучения этого "исполнительного агента общества"¹.

В семье сосредоточены экономические силы, социальный контроль и механизм трансмиссии культуры каждого общества². Из этих факторов и складываются основные, присущие семье любого общества, классические функции. Они являются теми параметрами, которые в аналитических разработках имеют существенное

¹ В основу предлагаемой статьи положены аналитические материалы трех панельных этносоциологических исследований городов и сел Армении, социологических опросов беженцев, зоны бедствия и приграничных сел, проведенных с 1976 по 1999 гг.

² Социология сегодня. Проблемы и перспективы. М., 1965, с. 203.

значение в измерении масштабов изменений, происходящих в семье³.

Первой из этих функций семьи является воспроизводство потомства - основной механизм замещения членов общества, т.е. демографического воспроизводства населения страны.

В Армении рождаемость за последние десять лет снизилась в два раза. Если учесть, что уже в 1980-е гг. страна стояла на пороге депопуляции, а в 1990-х годах произошла эмиграция почти трети населения (более половины его трудоспособной части), то приведенный показатель свидетельствует о демографической бесперспективности Армении⁴.

Тут важна не столько ситуативная оценка демографического потенциала (она при экономическом росте может восполниться репатриацией⁵), сколько угроза ослабления важнейшей функциональной ценности — потребности деторождения⁶. Эта тенденция очевидна и экономически обусловлена. Но некоторая динамика рождаемости по нашим исследованиям наметилась как во временном, так и в социальном срезе. Так, нарушенный в период военных столкновений ритм рождаемости населения приграничных сел через четыре года восстановился⁷. Некоторые всплески рождаемости наблюдаются в семьях с высоким доходом. Приведенные примеры показывают, что экономическая ситуация не позволяет реализовывать потребности продолжения рода и что подобная ситуация носит временный характер. В связи с этим необходим более скрупулезный эмпирический анализ ценности ребенка в представлениях и установках членов различных категорий семей.

Жизнеобеспечение семьи — экономическая функция и база ее существования. Резкое падение доходов, нищета стали для нее серьезным ударом и вызвали к жизни две тенденции. Первая из них — укрупнение семей, обусловленное "мобилизационным" поведением. В экстремальных условиях начала 90-х годов прои-

³ Из множества функций семьи выбраны именно те, которые без дополнительных исследовательских процедур можно измерить и сопоставить на основе имеющегося в наличии материала.

⁴ А.Сови. Общая теория населения, т.1, М., 1977, с.67-82.

⁵ Социологические проблемы польского города. М., 1976, с.18.

⁶ Следует учесть, что эмиграция из Армении направлена в страны с неблагоприятной демографической ситуацией. В этой среде происходит перенимание демографического поведения, что в свою очередь создает неблагоприятный для всего этноса воспроизводственный процесс. Таким образом, тенденция старения всего армянского этноса будет усиливаться.

⁷ Р.Карапетян. Отчет о социологическом исследовании сел зоны приграничного военного конфликта Армении. Ереван-Женева, 1999, с. 45.

зошло объединение ранее сегментированных семей. Так, 17 процентов всего миграционного потока Армении в этот период был направлен в сельскую местность, что свидетельствует об объединении женатых детей из городов с родителями, живущими на территории сел. Подобное объединение происходило и в городе, что диктовалось целесообразностью концентрации ресурсов. По-видимому, традиция большой семьи имеет шансы реализоваться при сложении более благоприятных для этого условий.

Вторая тенденция, сепарация - противоположного направления. Она имеет устойчивую склонность к росту. Сегодня уже очевиден факт сегментации трех⁸ и двухпоколенных семей: старшее поколение - в Армении, младшее - вне ее пределов. Подобная ситуация сложилась в сельских населенных пунктах еще с начала 60-х годов, с той лишь разницей, что младшее поколение обосновывалось в городе, но пределах республики. При этом маятниковая миграция в определенной мере становилась механизмом сдерживания этого процесса.

Рост за последние десять лет количества разводов (сепарация в два раза), фактор эмиграции привели к резкому увеличению пропорций неполных (отсутствие брачного партнера) и однопоколенных (одна брачная пара без детей) семей. Структурные изменения армянской семьи, резкое падение уровня доходов и постепенное сокращение размера помощи эмигрантов оставшимся в Армении домочадцам ставят под сомнение возможности самого жизнеобеспечения семьи. Это усиливает тенденцию распада семьи и самое главное - в общественном сознании (в жизненных планах населения) снижается экономическая ценность этого института.

Социализация и социальный контроль - одна из важнейших семейных функций, обеспечивающих интеграцию личности в общественные отношения. Отсутствие идеологических, экономических целей и, следовательно, социальных и культурных ориентиров в современном армянском обществе порождает целевую дезориентацию в социализации и в контроле со стороны семьи. Все это происходит на фоне новой культурной экспансии, интенсификации темпов жизни, развала традиционной структуры семьи. Это в огромной степени отражается на уровне влияния семьи в социализации и социальном контроле. Предлагаемые западные образцы социализации требуют огромных расходов со стороны

⁸ Следует учесть, что даже в столице, в отличие от всех союзных республик бывшего Союза, удельный вес трехпоколенных семей составлял 35 процентов. См. Население Еревана. Этносоциологические исследования, Ер., 1986, с.119.

государства, ими Армения не располагает. Таким образом, в ближайшей перспективе эти функции обязательно должна нести семья, в противном случае непредвиденные расходы на обучение, для поддержания порядка и социального обеспечения будут непомерно велики для государства. Армения пережила все этапы экстремальных ситуаций: и землетрясение, и хаос власти, и войну, и нищету и прочие бедствия, каждое из которых в отдельности уже способно дезорганизовать любое общество. Но в отличие от других новых независимых государств, она избежала гражданскую войну, всплеск преступности, территориальную и социальную дезинтеграцию именно благодаря однотипности характера социализации и высокому социальному контролю со стороны семьи. По-видимому, эта функция является наиболее устойчивой частью структуры армянской семьи и она может стать основой реабилитации ее прежних параметров.

Следующей и заключительной в настоящей статье функцией семьи является поддержание (определенность) социального статуса, показателя интегрированности семьи в общество. До начала 90-х годов социальный ранг семьи определялся тремя компонентами — уровнем образования, должностью и доходами. Они были значимыми вследствие запрета частной собственности и индивидуальной коммерческой и производственной деятельности в широком смысле слова. Поэтому достижение более высокого уровня образования для последующих поколений как бы стратифицировало семью и придавало ей устойчивый ранг. Развал прежней системы обусловил лишь один параметр социальной определенности семьи — уровень доходов. Это наглядно иллюстрируется в экономическом аспекте. В Армении альтернативой бюджетным ассигнованиям семьи является частная коммерческая и производственная деятельность. Последние, вследствие высокого индустриального развития страны, сразу же приобретают, по определению Джона Дьюи⁹, два отличительные друг от друга очертания: рыночные — когда успех экономической деятельности обусловлен экстенсивным использованием ручного труда, и плановые — корпорационные механизмы, где доминируют управление и автоматизация.

В рыночной предпринимательской деятельности речь идет о сфере услуг, о малом и, в определенной мере, о среднем предприятии (бизнесе). В нее вовлекаются как можно большее число работников. Семья в этом случае получает экономическую подпитку, и кровно-родственная группа может сыграть важную роль

⁹ Дж.Дьюи. Экономическое развитие и цели общества. М., 1979, с.77-95.

в создании корпоративных связей. Таким образом, традиционные установки могут реализоваться в новой экономической нише. И, очевидно, социальная определенность семьи получит новое звучание. Возникновение корпораций в такой небольшой стране как Армения в начале было обусловлено "крышей" в структуре родственно-земляческих отношений. Соответственно при постепенной цивилизации крупного бизнеса потребность этого механизма отпадет: нужны будут не "верные" люди, а профессионалы. Во всех случаях, наиболее интересным становится фактор наследования имущества, капитала, "дела", в целом наследования социального статуса родителей — поддержания социального ранга семьи. Этим открываются новые горизонты развития данной функции семьи, где возможна реализация традиционных потребностей населения Армении. По-видимому, для правильного понимания подобной перспективы необходимо изучение семьи начала XX-го столетия.

В заключении хотелось отметить несколько отправных с исследовательской точки зрения перспектив изучения семьи в Армении. Здесь важны три составляющие. Первая из них - оценка прошлого опыта, т.е. она должна быть перекрестно-исторической. Вторая — оценка современного состояния - должна происходить в реальном социально-экономическом контексте, которую следует рассматривать лишь как временное явление, иначе выводы будут детерминированы экстремальностью переходного периода. В третьих, оценка перспектив во многом будет зависеть от степени нахождения реальных индикаторов измерения системы ценностных ориентаций, выявления динамики их изменения, определения характера преемственности этих ценностей между поколениями. Подобный подход к изучению семьи позволил Эмме Тиграновне Карапетян в свое время определить два наиболее важных для будущих исследователей вывода. Первый вывод - система традиционных ценностей при создании приемлимых условий становится мотивацией реального поведения. Так, например, установка армян на большую семью в свое время была реализована даже в большом городе, а система ценностей гердастана обусловила интенсивные кровнородственные связи в условиях пространственной сепарации ее членов. Второй вывод — в социальной структуре Армении указанная традиционная система ценностей сформировала специфическую структуру общественных связей, обусловивших культурную специфику социальных отношений.¹⁰

¹⁰ Э.Карапетян. Этнические особенности семьи. - Население Еревана. Этносоциологические исследования..., с.114-152.; ее же - Современная семья и кровно-родственные отношения. Рукопись.

Основываясь на этих выводах, мы сможем глубже вникнуть в сложный механизм внутрисемейных отношений, правильнее оценить структуру семьи, определить специфику ее каждой общественной функции и реально оценить перспективы развития нашей страны.

Սիմոն Զմայակյան
ՀԱԻ

ՈՒՐԱՐՏՈՒՅԻՆ

Հայտնի է կին նշանակող ուրարտերեն երեք բառ. *լութու* «կին», *Վեդիա* «կին», *Սեշա* «դուստր»:

Դիցուիին. Ուրարտական դիցակարգում ընգրկված էր 35 դիցուիի, որոնք համապատասխան 35 աստվածների ուղեկցորդուհիներն էին: Աստվածուհիներին էր վերապահված արիեստների, արվեստի, երկրի պտղաբերության հովանավորությունը,¹ նրանք էին պահապանը մայրության:

Վանի արքաներից առնվազն մեկի անունը (Սարդուրի՝ Սարդիից)² կազմված է դիցուիու անունից: Հայտնի է երկու արքայի կրկնանուն՝ Լութիպրի և Վեդիպրի, որոնք առնչվել են Ուրարտուի գլխավոր աստվածուհու պաշտամունքի հետ:³ Չնայած այս հանգամանքին, պաշտոնական դիցակարգում դիցուիիները խստիվ ստորակարգված էին աստվածներից: Այսպես. ամանորյա տոնակատարությունների ժամանակ իրենց ավելի պակաս քանակի զոհեր էին մատուցվում. նույնիսկ ամենաբարձրակարգ դիցուիին, բոլոր դեպքերում, հիշատակվում է արական աստվածությունների թվակարկումից հետո միայն. դիցուիիները երբեք չեն հիշատակվում առանց արական աստվածությունների ընկերակցության և վերջապես հայտնի չէ պաշտամունքային որևէ կառույց, ծոնված՝ որևէ դիցուիու:⁴ Արվեստում էլ իրադրությունը համանման էր. եթե աստծուն երկրպագողների դիրքում կարող էին ներկայացվել թե՛ տղամարդիկ և թե՛ կանայք, ապա դիցուիուն երկրպագող որպես ներկայացվում էին միայն կանայք:

Այս դիտարկումները վկայում են թերևս այն մասին, որ ավանդույթը (կրոնը պահպանողական մի երևույթ է) կնոջը ստորադասել է տղամարդուց: Ավելին, նույնիսկ սոցիալապես շատ բարձր կինը պետք է պատկառեր շարքային ազատ համայնական տղամարդուց:

¹ Ս.Գ. Զմայակյան, Վանի թագավորության պետական կրոնը, Եր., 1990, էջ 26-27, 38:

² Գ.Ա. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, Եր., 1940, էջ 43: Ս.Գ. Զմայակյան, նշվ. աշխ., էջ 110:

³ Ն.Գ. Աղոնց, Հայաստանի պատմություն, Եր., 1972, էջ 194:

⁴ Ս.Գ. Զմայակյան, նշվ. աշխ., էջ 64:

Թագուհին. Ուրարտական միայն մեկ սկզբնաղբյուրում հիշատակություն կա թագուհու մասին: Խոսքը Ռուսա 4-րդի՝ Կարմիր բլուրում հայտնաբերված նամակ-կարգադրության մասին է, որով նա պահանջում է *տիրուհուն* վերադարձնել Թաթա անունով մի ստրուկի կողմից առևանգված աղջկան: Քանի որ նամակը հղում է արքայազնը՝ Ռուսա Ռուսայորդին, որի հայրը մահացել էր դեռևս կնոջ հղիության օրերին,⁵ և քանի որ չի հիշատակվում *տիրուհու* անունը (ուրեմն հայտնի է, թե ում մասին է խոսքը) ապա կարելի է ենթադրել, որ նամակում հիշատակված *տիրուհին* Ռուսայի մայրն է՝ երկրի թագուհին: Այսինքն՝ հիմքեր կան կարծելու, որ մ.թ.ա. 6-րդ դ. ապրել է ուրարտական մի թագուհի, որի խնամակալությանն է հանձնված եղել երկիրը: Ուշագրավ է, որ նույնիսկ այս դեպքում, պաշտոնապես հրամաններ է արձակում ոչ թե թագուհին, այլ որդին՝ գահաժառանգը (գրեթե նույնն էր իրավիճակն Ասորեստանում, Շամուրամաթ թագուհու խնամակալության տարիներին). այսինքն՝ այստեղ էլ առկա է ավանդական իրավունքի կանոնը:

Արքայադուստրը. Հայտնի է միայն մեկ ուրարտուհու՝ արքայադուստր Թարիրիայի անունը: Թարիրիան Մինուա արքայի դուստրն էր, Ինուշպուայի և Արգիշթեի քույրը: Թարիրիան հիշատակվում է Մինուայի արձանագրություններից մեկում, շատ հետաքրքիր մի իրողություն հաստատագրելու կապակցությամբ, այն է՝ Մինուա արքան այգի է նվիրում Թարիրիային, այս իրողությունը հաստատագրելով հատուկ մի արձանագրությամբ:⁶ Սա, թերևս, Հայաստանում հաստատված առաջին սահմանաքարն է, և դա միակն է Ուրարտուում: Ինչու՞ է կանգնեցվել այն. եթե կնոջ համար անշարժ գույքի սեփականության իրավունքը սովորական լիներ, ապա նման բացառության կարիքը չէր լինի: Արդյո՞ք սա վկայություն չէ այն մասին, որ Վանի բարեփոխիչ արքաները՝ Իշպուլինեն ու Մինուան, իրենց ձեռնարկած այլևայլ բարեփոխություններին զուգահեռ, օրենսդրորեն հաստատագրել են անշարժ գույք ունենալու կնոջ իրավունքը, և Մինուան, Կատեպանցի այս արձանագրությամբ, մեկ անգամ ևս հավաստել է այն: Ինչևէ, այս արձանագրությունը վկայում է, որ ուրարտուհին առնվազն մ.թ.ա. 9-րդ դ. սեփական կալվածք ունենալու և այն կառավարելու իրավունքն ուներ:

Պալատական տիկինը. Ուրարտուում յուրաքանչյուր քաղաք ուներ իր պալատը, որտեղ տարին գեթ մեկ անգամ հանգրվանում էր արքան: Պալատն ըստ էությանը գրավում էր ամբողջ միջնաբերդը: Կարմիր բլուրում այն ուներ առնվազն 120 սրահ ու սենյակ:⁷ Վանի Ռուսափինեի ամրոցի պալատն ուներ 5507 հոգուց կազմված սպասարկող

⁵ И.М. Дьяконов, Урартские письма и документы (далее -УПД), М.-Л., 1963., N4, с. 62:

⁶ Г.А. Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960., N111:

⁷ Б.Б. Пиотровский, Кармир-блур, I, Ер., 1950, էջ 43:

անձնակազմ, որոնցից 1113-ը (առանց ընտանիքի անդամների) բառիս բուն իմաստով «պալատականներն» էին, *Մարեները*⁸ (ազնվագարները):

Առկա է բավականաչափ սեպագիր ու հնագիտական նյութ՝ վերապատկերելու համար պալատական կնոջ կենցաղը. նա շրջապատված էր նաժիշտներով, տանը քայլում էր փայտանած հատակին, երբ հայացք էր նետում իր բնակարանի պատերին, ապա տեսնում էր հովվերգական բովանդակությամբ որմանկարներ: Նրա սենյակները երեկոյան լուսավորում էին գեղեցիկ արծաններով հարդարված բրոնզե աշտանակները, կահույքը հարդարված էր փղոսկրով, ոսկով ու արծաթով, լոգարանները պղնձակուռ էին, որպես ընպելիք ուներ տարբեր տեսակի դառն ու քաղցր գինիներ, ուտեստը բազմազան էր, անուշահոտությունների ու արդուզարդի համար ուներ շատ գեղեցիկ, հիմնականում տարբեր քարերից պատրաստված քանդակազարդ տուփեր:

Թերևս պալատական մի տիկնոջ է ներկայացնում Կարմիր բլուրի փայտե արծանիկը (նկ. 1): Քանդակագործը ներկայացրել է այս կնոջն իրենից անբաժան իրերի հետ՝ փոքրիկ հայելի, հուլունք և հովհար:⁹

Ուշագրավ է, որ, ըստ մարդաբանական տվյալների, ի համեմատ, ասենք, Շիրակի կամ Գեղարքունիքի տեղաբնիկների, բիայնացիք աչքի են ընկել նեղադիմությամբ ու նրբակազմությամբ:¹⁰

Գեղջկուհին. շատ առումներով հավասարեցված էր նվիրագործում չանցած պատանու կարգավիճակին: Ծանոթ լինելով Ուրարտուի տնտեսական կյանքին, առանց լրացուցիչ ուղղակի տվյալների էլ կարելի է պատկերացում կազմել գեղջկուհու առօրյայի մասին: Գոյություն ունի, սակայն, Մանայում հայտնաբերված խալդե աստծո անվան հիշատակությամբ արամեերեն մի արծանագրություն, որտեղ, անեծքի բանաձևում խոսք կա նաև գեղջկուհու աշխատանքի մասին. «...թող 7 կով սնուցեն մի հորթի և որ նա չհագենա, թող յոթ կին թխեն միակ փռում և չկարողանան այն լցնել, թող կրակի ծուխը և աղմուկն աղորիքի խապառմարեն նրա երկրում»:¹¹

Ստրկուհին. Որևէ տվյալ պարտային ստրկության գոյության մասին Ուրարտուում չկա: Գիտենք միայն, որ այս ժամանակ ստրկացվում էին հիմնականում գերեվարված կանայք և նվիրագործում չանցած պատանիները:¹²

⁸ УПА, N12, с. 80-83:

⁹ Б.Б. Пуотровский, Кармир-блур (альбом), Л., 1970, նկար և կատալոգ N31:

¹⁰ Ռ.Ա. Սկրտչյան, Պ.Ա. Ավետիսյան, Ուրարտական դամբարանների հնամարդաբանական նյութերը մ.թ.ա 8-6-րդ դդ. պատմահնագիտական կոնտեքստում.- Հայաստանի հնագիտական հուշարձանները, 16, Եր., 1995, էջ 100:

¹¹ Andre' Lemaire, Une inscription arame'ene du VIII^e s. av. J-C. trouve'e a' Bukān.- "Studia Iranica", 1998, 21/7, p.16-18: Israel Eph'al, The Bukan Aramaic inscription: Historical Considerations Israel Exploration journal 49, N 1-2, 1999, p.116-121:

¹² Ս.Գ. Հմայակյան, Ուրարտուում պատանիների ստրկացման փաստի շուրջ. Հանրապետական գիտական նստաշրջան նվիրված 1990-1994թթ. ազգաբանական և բանախոսական դաշտային հետազոտությունների հանրագումարին (գեկ.թեզ.), Եր., 1995, էջ 46:

Հագուստը. Եթե ճշմարիտ է այն, որ կնոջ հագուստը իր ունեցած իրավունքների ու ազատության չափանիշն է,¹³ ապա ուրարտական տարազն ուսումնասիրողը կհանգի էական հակասության: Ուրարտուհու տոնական զգեստն անչափ ծանր էր, քանի որ այն հարդարված էր մետաղե (ոսկի, պղինձ) բազմաթիվ հավելազարդերով և ամրացված տարատեսակ շիգդերով ու կոճակներով: Այն ծածկել է էր կնոջ ամբողջ մարմինը՝ հասնելով մինչև կոշիկները: Երևացել են միայն ձեռքերն ու դեմքը: Միակ մանրամասնը, որը շեշտել է նրա կանացիությունը՝ լայն գոտին էր, որը երբեմն կապվում էր այնպես, որ բացահայտի մեջքի նրբագեղությունը (նկ. 2):

Հագուստը կարող էր ձևվել բազմագույն կտորեղենից, սակայն առավել հարգի էին կարմիր և մանուշակագույն ներկված վուշե ու բրդե գործվածքները:¹⁴ Բնականաբար կային ավելի թեթև ու բաց հագուստներ՝ կարված, օրինակ՝ չինական մետաքսից, որից միայն մի պատահիկ է գտնվել Ռուսախինեւում:¹⁵ Նման հագուստով որևէ կնոջ պատկեր, սակայն, մեզ չի հասել:

Ուրարտական արվեստում, այնուամենայնիվ գոյություն ունի մի շատ ուշագրավ բացառություն: Խոսքը Ռուսախինեւից հայտնաբերված մերկ կնոջ ոսկրե արձանիկի մասին է: Կինն այսեղ ունի միայն պարանոցն օղակող հուլունքաշար ու թագածև գլխազարդ (նկ. 4):

Սիրո և պտղաբերության «մերկ աստվածուհու» կերպարը լայնորեն հայտնի է Հին Աշխարհի արվեստից ու գրականությունից: Այս աստվածուհիների պաշտամունքի հետ էր առնչվում «սրբազան ամուսնությունը» և հիերոգուլների կառույցը: Հիերոգուլները յուրատեսակ քրմուհիներ էին, որոնք տաճարում ուսանում էին վարվեցողություն, երաժշտություն, սեր և շատ առումներով հիշեցնում էին հունական հետերաներին: Հիմք ունենալով մեն-միակ այս արձանիկի առկայությունը, հավանաբար անիմաստ կլիներ խոսել հետերիզմի մասին Ուրարտուում, եթե այդ երևույթը տարածված չլիներ մինչքրիստոնեական Հայաստանում. «Ժողովրդի ամենանշանավոր մարդիկ իրենց կույս աղջիկներին նվիրաբերում էին աստվածուհուն և նրանք, ըստ օրինի, երկար ժամանակ պոռնկում են աստվածուհու համար, որից հետո ամուսնանում են», հաղորդում է Ստրաբոնը, խոսելով Անահիտի պաշտամունքի մասին Հայաստանում:¹⁶ Այսինքն, հիմք կա ենթադրելու, որ «սրբագործված հետերիզմը» ժառանգվել է առնվազն ուրարտական ժամանակներից:

Սանրվածքը. Ուրարտական պատկերներում կանայք ներկայացված են հիմնականում երկու տեսակի սանրվածքով.

1. Մազերն ազատ թափել են ուսերին ու ծածկվել երբեմն մինչև կրունկները հասնող գլխաշորով: Ուշագրավ է, որ կա միայն երկու բա-

¹³ E. Варгуман, Женщина в древнем мире, М., 1990, с. 33:

¹⁴ И. М. Дьяконов, Ассирио-вавилонские источники по истории Урарту N49(367). - Вестник древней истории, 1951, 2, с. 257-266, 3, с. 207-252.

¹⁵ C. F. Lehmann-Haupt, Armenien einst und jetzt, II, 2, Բեռլին-Լայպցիգ, 1931, էջ 967:

¹⁶ Ստրաբոն (քաղեց և կազմեց Հ. Աճայանը), Եր., 1940, XI, 8, 4:

ցառություն, որոնցից մեկը Վարուբաինի դիցուհու «աղջկական» պատկերն է (նկ. 2) (ինչպես հին Արևելքում, այնպես էլ Հայաստանում, աղջիկների համար գլխաշորը պարտադիր չէր¹⁷), մյուսը՝ «մերկ աստվածուհու» պատկերը, որտեղ այս սանրվածքն ունենալով հանդերձ, նա կրում է թագածն գլխազարդ:

2. Հատուկ պարուրածն ծամկալների միջոցով մագերը հավաքվել են գլխի գագաթին (նկ. 3) և ապա ծածկվել յուրատեսակ գլխազարդով: Նման պարուրածն ոսկե և բրոնզե բազմաթիվ ծամկալներ են գտնված ուրարտական դամբարաններից:¹⁸

Զարդերը. Հին Արևելքում զարդին տրվում էր մոգական և պահպանիչ նշանակություն: Նույնիսկ գերիզոր Ինաննան, որն իր տիրակալությունն էր հաստատել երկրում ու երկնքում, անպաշտպան է դառնում առանց զարդերի: Շամիրամն էլ մահվանից առաջ, ինքն իրեն զրկեց հուլունքաշարից:

Հին Արևելքում զարդերն անչափ բազմազան են եղել, դրանցով կարելի էր պարուրել ամբողջ մարմինը: Ուգարիթյան մի տեքստում, հարսնացուի օժիտում հաշվվում է հագուստի 204 մանրամասն, ընդորում, միայն ոսկե զարդեր՝ 15 կգ:¹⁹ Ուրարտական հուշարձանների պեղումից հայտնի են զանազան զարդեր, որոնք պատրաստված են ամենատարբեր մետաղներից և հաճախ ընդելուզված են տարբեր կիսաթանկարժեք քարերով՝ ամբողջ պարանոցն օղակող վզնոցներ, մանյակներ, մեղալիոններ, տեսակ-տեսակ գինդեր, ապարանջաններ, հերակալներ, շքասեղներ, մետաղից, տարբեր քարերից և կավից պատրաստված հուլունքաշարեր և այլն:

Ծնունդը. Մանկամարդ կնոջ ամենամեծ փորձությունը ծննդաբերությունն էր: Ինչպես ցույց են տվել Հոռոմի և Թալինի դամբարանադաշտերի ուսումնասիրություններից ստացված տվյալները, կանանց մահացության ամենաբարձր ցուցանիշը համընկնում է կնոջ ակտիվ ծնելիության տարիքի հետ:²⁰ Եվ այս առումով ուշագրավ է, որ Ուրարտում կար ծնունդը և մայրությունը հովանավորող աստված՝ Ադարութան,²¹ և աստվածուհի՝ Ծինուարդին:²² Հին Աշխարհում, եթե ժամանակները բարենպաստ չէին, աղջկա ծնունդը ցանկալի չէր և հաճախ, այդ

¹⁷ Ե. Լալայան, Վասպուրականի ազգագրությունը, - Ազգագրական հանդես, 1910, էջ 137-138: Ս.Գ. Հմայակյան, նշվ. աշխ., էջ 38-39:

¹⁸ Gisela Zählhaas, Clothing Accessories and Jeweli.- Urartu, a Metalworking center in the First Millennium B.C.E., Երուսաղեմ, 1991, էջ 189, նկ. 58-60:

¹⁹ E. Baraghan, նշվ. աշխ., էջ 237:

²⁰ Ռ.Ա. Սկրտչյան, Հոռոմի դամբարանադաշտի հնամարդաբանությունը, -ՀՀ 1989-1990թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի թեզիսներ (ՀԱԱ), Եր., 1991, էջ 52: Պ.Ս. Ավետիսյան, Ռ.Ա. Սկրտչյան, Թալինի վաղերկաթիդարյան դամբարանադաշտի սոցիալ-ժողովրդագրական վերլուծության փորձ.- ՀՀ 1991-1992թթ. ՀԱԱ, Եր., 1994, էջ 24-25:

²¹ Г.А. Кананьян, Об урартском божестве Adarutha., Տեղակագիր, 1944, 6-7, էջ 25-26:

²² Գ.Բ. Զահուկյան, Հայկական շերտը ուրարտական դիցաբանում, Պատմա-բանասիրական հանդես, (ՊԲՀ) 1986, 1, էջ 50:

մանուկներին ծնողները լքում էին, լավագույն դեպքում թողնելով որևէ սրբավայրում: Հենց այս երեխաներից էին ընտրվում հիմնականում հիերոդոլները:²³ Բարենպաստ տնտեսական կյանքով ապրող երկրներում, սակայն, աղջիկը ցանկալի զավակ էր, ընկեցիկությունը՝ հազվադեպ:

Ամուսնություն, ընտանիք. Հին Աշխարհում աղջկա ամուսնության ամենաընդունելի տարիքը 12-ամյա հասակն էր: Ընտանիք կարող էին կազմել նաև ստրուկները, սակայն միայն տիրոջ համաձայնությամբ: Պալատական անձնակազմի ամուսնության խնդիրը, ինչպես ակնառու է երիմենա արքայի մի նամակից,²⁴ վճռում էր արքան: Ռուսա 4-րդի արդեն հիշատակված նամակից պարզ է, որ անցանկալի ամուսնությունները կարող էին բեկանվել արքայի հրամանով, այսինքն՝ շատ հնարավոր է, որ գոյություն է ունեցել ապահարզանի իրավունք: Մերծավոր Արևելքում կնոջ ապահարզանի իրավունքն օրենսդրորեն հաստատագրվել է արդեն մ.թ.ա. 18-րդ դ.:²⁵ Ուշագրավ է, որ Ուրարտուում աղջիկը կարող էր փախչել կամ առևանգվել, որի մասին խոսվում է Ռուսայի նույն նամակում:

Ընտանիքում կնոջ ունեցած դիրքին վերաբերող տվյալները շատ չեն. այժմ գիտենք, որ նա նաև անշարժ գույք ունենալու իրավունքն ուներ: «Կյուրոպեդիայից» հայտնի է, որ Հայաստանի թագուհին ազատորեն կարող էր տնօրինել իր սեփականությունը առանց ամուսնու համաձայնության²⁶ (ընդհանրապես Քսենոֆոնը հակված է շեշտադրելու կնոջ յուրահատուկ բարձր դիրքը մ.թ.ա. 6-րդ դ. Հայաստանում): Ասվածը վկայում է, որ աղջիկն ամուսնանալիս կարող է ստանալ բաժինք՝ օժիտ, և այն կտակել իր զավակներին:

Հուղակավորություն. Ուրարտուում հանգուցյալին հուղակավորում էին իր հագուստով, զարդերով և այլ անձնական իրերով հանդերձ: Անչափ ուշագրավ են կնոջ հետ դամբարան դրված մագիսիկների, դեղդիրների, սանրվածքի այլևայլ մանրամասների գյուտերը,²⁷ ակնառու է կնոջ ծգտումը՝ գեղեցիկ լինել և այն աշխարհում:

Հաճախակի են «ընտանեկան» դամբարանների գյուտերը: Նման թաղումներում որևէ ստորադասություն կնոջ և տղամարդու միջև չի դիտարկվել:

Ուրարտուում հաճախակի են եղել «միջցեղային» ամուսնությունները: Նման դեպքում, հուղակավորության ժամանակ, ամուսիններ

²³ E. Варгуман, նշվ. աշխ., էջ 254:

²⁴ УПА, N3:

²⁵ Законы вавилонского царя "Хаммурапи".- Хрестоматия по истории Древнего Востока, М., 1963 (§136), (§142), (§149), (§156):

²⁶ Քսենոփոն, Կյուրոպեդիա (թարգմ. Ս. Կրկյաշարյանի), Եր., 2000, III, III, 2:

²⁷ Gisela Zühlke, նշվ. աշխ. էջ 188, նկ. 57, Ի. Կարապետյան, Ս. Հմայակյան, Հ. Հակոբյան, Ռ. Վարդանյան, Գ. Թումանյան, Պ. Ավետիսյան, Ն. Տիրացյան.- Երիտասարդ ուրարտուիում թաղումը, ՀՀ 1993-1995թթ. ՀԱԱ, Երևան, 1996, էջ 37:



1



4



2



3



5

1. Պալատական տիկնոջ փայտե արձանիկ Կարմիր բլուրից, VII դ., ՉՊՊԹ:
2. Ընծայական բրոնզե թիթեղ խալդեի և վարուբանեի պատկերներով, Արևմտյան
Հայաստան, VII դ., Լուվր (H.-J. Kellner, Bronzene Weihe- und Votivgaben, "Ausstellungs
Kataloge der Prähistorischen Staatssammlung", 2, "Urartu ein widerentdeckter Rivale
Assyriens", Մյունխեն, 1976, էջ 57, նկ. 54): 3. Բրոնզե ընծայական թիթեղ դիցուհու
պատկերով (հատված), Արևմտյան Հայաստան VII դ. (H.-J. Kellner, նշվ. աշխ., էջ 57, նկ.
52): 4. Մերկ դիցուհու ոսկրե արձանիկ, Ուսսախինեյե, VII դ., Բրիտանական թանգարան
(R.D. Barnett, The excavations of the British Museum at Toprak - kale near Van, "Iraq", XII,
1950, աղ. XIV): 5. Վարուբանե դիցուհու արձանիկը Ղարաբեյ ամրոցից, VIII-VII դդ. ՉՊՊԹ:

րից յուրաքանչյուրը թաղվում էր իր (երեխաները՝ մոր) հավատքին համապատասխան ծիսակարգով:²⁸

Այսպիսով, ուրարտուիին ապրել է ժամանակաշրջանում, երբ ձևավորվող տերությունը՝ կարգավորելով երկրի կենսագործունեությունը, ներառյալ և հասարակական հարաբերությունները,²⁹ արձանագրել է նաև կնոջ իրավունքները: Ձուգահեռաբար գոյություն է ունեցել ավանդական իրավունքը, որը կնոջը դիտարկել է տղամարդուն անվերապահորեն ենթակա վիճակում: Այսինքն՝ ստեղծված էր մի իրադրություն, երբ կինն ինքը կարող էր որոշել իր ազատության սահմանը:

Այս առումով ուշագրավ է, որ ուրարտական ժամանակներից եկող երկու հակադիր կնոջ կերպար է մեզ ուղեկցում՝ ավանդապահ Նուարդի և հնարավորին չափ շատ ազատություն ու իշխանություն նվաճած Շամիրամի:

²⁸ *Б.А.Куртш*, Урартский колумбарий у подножия Арарата и куро-аракский эпосолит, «Вестник Гос. музея Грузии, вып. XIII-B, 1944, с. 53:

²⁹ Այս մասին տե՛ս. *S.G.Hmayakian*, Urartu-Vermächtnisse einer Hochkultur.- "Armenien Wiederentdeckung einer alten Kulturlandschaft", Բոխում, 1995, էջ 49-54:

ԳՈՏԻՆ ՀԱՅՈՑ ՏԱՐԱԶԻ ՀԱՄԱԼԻՐՈՒՄ

Հայ ժողովրդի նյութական մշակույթի կարևոր բնագավառներից է տարազը, որում ուրույն տեղ ունի գոտին: Գոտիները հայոց մեջ օգտագործվել են դարեր շարունակ, այդ են վկայում ազգագրական և հնագիտական նյութերը: 19-րդ. դ. ազգագրական հարուստ նյութը հնարավորություն է ընձեռում դասակարգելու և բացահայտելու գոտու տեղն ու նշանակությունը տարազում:

Ըստ դաշտային ազգագրական նյութերի, գոտիները լինում են մի քանի տեսակ. ամբողջական արծաթե, միայն ճարմանդն արծաթե, մնացյալը՝ կաշվից, արծաթե վերադիր նախշերով (կոճակներ), կաշվե, լաթե և հյուսածո: Կանանց և տղամարդկանց գոտիների տեսակները նույնն են, միայն տղամարդկանցին հավելվել է ամբողջական կաշվե գոտին (դայիշ-քյամար):

Արևելյան Հայաստանի մի շարք պատմաազգագրական մարզերում (ՊԱՄ) տարբեր տեսակի գոտիների առկայությունը վկայում է ներգաղթած արևմտահայերի տարբեր խմբերի տեղաշարժերի հետևանքով առաջացած ազդեցությունները: Այսպես, օրինակ՝ Արարատի ՊԱՄ-ում, որի տեղաբնիկները տարբեր ժամանակներում տեղահանվել են, իսկ նրանց տեղը զբաղեցրել են նորերը, հանդիպում են Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր ՊԱՄ-երի ժողովրդական նյութական մշակույթի նմուշներ: Արագածոտնի ՊԱՄ-ում տարածված են Տուրուբերանին հատուկ գոտիներ, քանի որ այստեղ են հանգրվանել այդ ՊԱՄ-ին բնորոշ հայոց խմբերը: Շիրակում զգալի տարածում ունեն Բարձր Հայքի ՊԱՄ-ի (Կարնո, Երզնկայի) գոտիները:

Իրենց մոտիվներով, զարդանախշերով, տարածվածությամբ առավել բազմազան են կանանց գոտիները:

Գոտին, բացի կիրառական անհրաժեշտ գործածությունից, ունեցել նաև խորհրդանշական իմաստ, որը թերևս ոչ պակաս կարևորություն ուներ, քան գործնական նշանակությունը: Այն խորհրդանշում էր նաև կնոջ կուսությունը, անաղարտությունը¹: Հարսի մեջքը գոտևորելը քավորի անմիջական իրավունքն էր:

Գոտին կրում էին սոցիալական բոլոր խավերին պատկանող հասուն անձինք: Սոցիալ-տնտեսական տեսակետից բարձրաստիճան անձինք կրում էին ավելի թանկարժեք և ծանր գոտիներ: Այսպես, օրինակ՝ Վ. Հացունին նշում է, որ պատմական Հայաստանում, ազնվականների գոտիները լայնությամբ ու ճոխությամբ խիստ տարբերվում էին ժողովրդականներից: Նույն Վ. Հացունու հավաստմամբ, Փավստոս Բու-

¹ Խ. Սամվելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հատ. 1, Եր., 1931, էջ 261, «Ազգագրական հանդես», գ. 24, էջ 103:

գանդը նշում է, որ Արշակ Երկրորդ թագավորի գոտին՝ «արքունական կամարը», ճոխ էր, քան իշխանականը՝ «ականակապ մարգարտագարդ», որը վկայում է նաև եղիշեն²:

Վկայակոչելով հին հայկական ու հունական աղբյուրները, Վ. Հացունին հավաստում է, որ գոտու գործածությունը եղել է բոլոր ժամանակներում և ընդգրկում է պատմական Հայաստանի բոլոր շրջանները: Այն, որ գոտին օգտագործվել է վաղնջական ժամանակներից, վկայում են նաև հնագիտական նյութերը:

Հայաստանի բրոնզիդարյան հնավայրերի պեղումներից հայտնաբերված նյութերը խոսում են այն մասին, որ կանանց և տղամարդկանց գոտիները լայնորեն տարածված են եղել Հայկական լեռնաշխարհում³: Սյուս կողմից, 19-րդ դ. ազգագրական հարուստ նյութերը հնարավորություն են ընձեռում ենթադրելու, որ բոլոր տեսակի գոտիները լայն տարածում են ունեցել սոցիալական ամենատարբեր խավերի մեջ:

Արծաթե գոտիներ նորահարսերը նվեր էին ստանում հարսանիքի օրը, որն ուներ խորհրդանշական իմաստ: Սի կողմից սա արժեքավոր նվեր էր, մյուս կողմից՝ հասունության նշան, ունեցել է նաև մոգական նշանակություն, նորահարսը գոտեվորվելով՝ պահպանվում էր չարից: Եթե նույնիսկ փեսայի ծնողները չունեվոր էին այնքան, որ հարսնացուին չէին կարող գոտի նվիրել, փոխարինաբար ընտանիքի անդամներից մեկի տանը եղած գոտին բերում և կապում էին նորահարսի մեջքին:

Նորափեսային գոտի նվիրում էին հարսնացուի ծնողները, սակայն սա պարտադիր պայման չէր: Կնոջ և տղամարդու ամբողջական արծաթե գոտիները տարածված էին Շիրակում, Լոռիում, Սյունիքում, Արագածոտնում: Ընդ որում, կանանց գոտիներն ավելի լայն ու գեղեցիկ էին լինում՝ շքեղ ճարմանդներով, քան տղամարդկանցը:

Ճարմանդն արծաթե, ետնամասը կաշվե՝ վրան արծաթե զարդանախշերով (կոճակներով) գոտիները տարածված են եղել ողջ Հայաստանում: Լաթակտորից (մետաքս, շալ, կազ, դուրա) գոտիները լինում էին 3-3.5 մ երկարությամբ, 0.5-1 մ լայնությամբ, որը մի քանի անգամ փաթաթելով մեջքին, կապում էին արխալուղի վրայից, ծայրերը կողքերին հանգուցելով:

Նմանատիպ գոտիներ, սակայն ավելի նեղ, կապում էին նաև տղամարդիկ: Հանդիսավոր օրերին, հնարավորություն ունեցողները, լաթակտորե գոտու փոխարեն կապում էին արծաթե գոտի: Ցրտից պաշտպանվելու նպատակով՝ տարեցները մեծ մասամբ կապում էին լաթա- կտորե գոտիներ, որոնք հիմնականում մուգ գույնի էին լինում (սև, կապույտ):

Երկայնակի գծանախշերով, լայն, բրդե, տարբեր գույնի թելերից գործած կանանց գոտիներ կրում էին Արագածոտնում, Սյունիքում, Գեղարքունիքում: Շիրակում այդ գոտիները գործում էին դեղին և կար-

² Տես Վ. Հացունի, Պատմություն հին հայ տարագին, Վենետիկ, 1923, էջ 100:

³ А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ер., 1964, с. 136-137.

միր գույնի մետաքսե թելերից, ուղիղ գծանախշերով, ծայրերին՝ մեկական փնջիկ, գոտու վրա կանաչ, սև, սպիտակ թելերով եռանկյունիների շարան: Երևանում լաթակտորե գոտիները հյուսում էին մուգ կարմիր գույնի թավշից՝ երկրաչափական դեղին, երբեմն էլ բուսական նախշերով, ծայրերը՝ ծոփքերով: Գործած գոտիները նեղ էին՝ 3-5 սմ լայնությամբ⁴:

Տարեց տղամարդկանց գոտիները մուգ գույնի էին, հյուսած մետաքսե կամ բրդե թելերից, մինչդեռ երիտասարդներինը բաց գույնի էին ու նախշազարդ:

Բացի վերը նշված գոտիներից, տղամարդիկ կրում էին նաև ամբողջական կաշվե գոտիներ, որոնց գործածության մասին հիշատակվում է հայ պատմիչների երկերում: Փալստոս Բուզանդի և Եղիշեի վկայությամբ՝ «փոկե գոտի» կրում էին գրեթե բոլոր հայերը: Այս գոտիները շատ հարմար էին և որ «մատուցանե ոլոքացն, զոյուրավ շարժունս»⁵: Կարելի է ենթադրել, որ այս տիպի գոտիներ կարող էին կրել նաև չունեվոր մարդիկ:

20-րդ դ. սկզբին կաշվե գոտիներն ամենուրեք լայն տարածում ստացան: Այս երևույթը կարելի է բացատրել մի շարք հանգամանքներով: Դարասկզբին ուժեղացան կապերը Ռուսաստանի հետ, Առաջին աշխարհամարտից տղամարդիկ վերադարձան „կաշեգոտ-քյամարներով,, , որոնք շատ հարմար էին առօրյա պայմաններում: Տղամարդու, մասամբ նաև կնոջ ազգային տարազը հիմնական փոփոխությունների ենթարկվեց, ազգային շատ տարրեր վերացան, տեղը զիջելով քաղաքային տիպի հագուստին:

Համեմատաբար ավելի երկար գործածություն ունեցան կանանց արծաթե գոտիները, որոնք մինչև 20-րդ դ. երկրորդ կեսերը մասնակիորեն կրում էին հատկապես մեծահասակները: Արծաթե բոլոր տեսակի գոտիներն ունեն զարդանոտիվներ: Ելնելով հնագիտական ու ազգագրական դաշտային նյութերի վերլուծությունից, դրանք կարելի է դասակարգել հետևյալ խմբերի. ա) կենդանակերպ զարդանոտիվներ, բ) բուսակերպ զարդանոտիվներ, գ) երկրաչափական զարդանոտիվներ:

Թվարկվածներից առավել լայն տարածում են ունեցել բուսական զարդանոտիվներով գոտիները, քանի որ դրանք խորհրդանշել են հասունությունը, որը ենթադրում էր պտղաբերություն: Նման զարդանոտիվներ հաճախ լինում էին կանանց գոտիների վրա:

Արծաթե գոտիների ճարմանդները բաղկացած էին երեք մասից, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում էր ծաղիկների ծիլերի, ծառերի պատկերներ և որոնք արտահայտում են պտղաբերության, աճման գաղափար⁶: Գոտիների վրա լինում են կենդանիների խիստ ոճավորված

⁴ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի արխիվ, ց.1 գ. 20, էջ 27-31, գ. 52, էջ 13-14, գ. 118, էջ 69-73, գ. 125, էջ 32-35:

⁵ Տես Վ. Դադունի, անդ., էջ 142:

⁶ Ա. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, Եր., 1955, էջ 38:

պատկերներ: Հաճախակի են հանդիպում ճարմանդներ օծի, գորտի և այլ կենդանիների պատկերներով, որոնք իրենց արմատներով կապված են տոտեմիզմի հետ և խորհրդանշում են արգասաբերություն: Տոտեմ կենդանին հանդես է գալիս որպես պահպանակ⁷:

Երկրաչափական զարդանոտիվներով գոտիներն ակնհայտորեն տարբերվում են պարզությամբ ու համամասնությամբ:

Յուրահատուկ են հյուսածո այն գոտիները, որոնք օգտագործում էին Արագածոտնում 8-13 տարեկան երեխաները: Գոտիների վրա կարում էին օրոճիկներ, աչքուլունքներ կամ կապույտ գույնի կոճակներ: Ինչպես նշում է Բ. Ն. Առաքելյանը, 13-րդ դ. վերագրվող մանկական զգեստի վրա կար մետաքսե վարդագույն գոտի⁸:

Գոտիների օգտագործման սեռա-տարիքային խմբերի, սոցիալ-տնտեսական խավերի միջև եղած տարբերությունները, տարածվածությունը յուրահատուկ է եղել նաև կովկասյան ժողովուրդներին:

Նիկոլ Մարգարյան
ՀԱԻ

ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅՈՑ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

/ Ըստ Գյումրիում անցկացված հարցախույզի արդյունքների /

Երեխային անուն որոշողը՝ անվանակոչողը, այն անձն է, որին այդ իրավունքը վերապահվում է, հաշվի առնելով հասարակական և ազգակցական հարաբերություններում նրա ունեցած որոշակի դերն ու կարգավիճակը: Նշված հարաբերությունների բնույթն իր հերթին պայմանավորված է ստույգ ժամանակահատվածով, որը նպաստում է դրանց հիմնական սկզբունքների և արժեքների ձևավորմանը: Հայ ընտանիքում այսօր ովքե՞ր իրավունք ունեն նորածնի անուն որոշելու, և ինչո՞ւ: Անփոփոխ է նրանց կազմն ու մասնակցությունն անվանակոչելու գործողությանը: Ինչպիսի՞ փոփոխություններ են նկատվում 10 տարիների կտրվածքով և ինչո՞վ են դրանք պայմանավորված:

Առաջադրված հարցադրումներին միանշանակ և համապարփակ պատասխանել հնարավոր է լուկ հայկական նյութի համալիր և համեմատական ուսումնասիրության շնորհիվ, ինչը հեղինակի գլխավոր նպատակն է և դեռ գտնվում է իրականացման փուլում: Սույն հետազոտությունն այդ նպատակի իրագործման սկիզբն է և, փաստորեն, ընդամենը դրա մի մասը, որը ներառում է Գյումրի քաղաքում 2000թ. ապրիլին անցակցված ուսումնասիրությունների արդյունքները: Ուսումնասիրության

⁷ Վ. Բդոյան, Երկրագործական պաշտամունքի մի քանի հետքեր հայոց մեջ.- Աշխատություններ Հայաստանի պետ. պատմական թանգարանի, հատ. 3, եր., 1950, էջ 60-61:

⁸ Բ. Ն. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում, 9-13-րդ դդ., եր., 1958, էջ 280:

ժամանակ կիրառվել են հարցաթերթային և լրացուցիչ հարցման մեթոդները: Հարցումներն անցկացվել են Գյումրիի թ. 29 դպրոցում: Հարցման է ենթարկվել դպրոցական տարիքի 200 երեխա, որոնց մեջ առանձնացվել է տարիքային երկու խումբ (1983–85թթ և 1989–92թթ. ծնվածներ), յուրաքանչյուրում՝ 100-ական հարցորդ: Նշված խմբերն առանձնացնելիս սահմանաբաժան է որոշվել 1988 թ. սկսված ազգային զարթոնքը, դեկտեմբերի 7-ի երկրաշարժը, ինչպես նաև այդուհետ Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում սկիզբ առած խորը փոփոխությունները: Ուստի և դուստր զավակների անունների ընտրության գործընթացում անվանակոչողների մասնակցության քանակական և որակական (մասնակցության ակտիվությունը) տարբերությունները պարզելիս հարցորդների յուրաքանչյուր տարիքային խմբում առանձնացվել են տղաների ու աղջիկների 50 հոգանոց ենթախմբեր:

Հարցախույզի ընթացքում չի լրացվել (կամ սխալ է լրացվել) և անվավեր է ճանաչվել հինգ հարցաթերթ: Նշվածը հաշվի առնելով՝ հարցմանը վերաբերող վիճակագրական տվյալները սույն հրապարակման մեջ ստույգ թվայինին զուգահեռ, ներկայացվում են նաև տոկոսային հարաբերությամբ: Եվս մի ծանուցում՝ անվանակոչող անձանց մասնակցության ակտիվությունն առավել պատկերավոր և ընկալելի ներկայացնելու համար, նպատակահարմար է եղել անվանակոչող անձանց կարգել որոշակի խմբերի և դասերի մեջ: Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ հիմա անցկացրած մեր հետազոտությունները թույլ են տալիս անվանակոչողներին ըստ իրենց մասնակցության աստիճանի և ձևի, բաժանել մի շարք դասերի հետևյալ հերթականությամբ.

Ա. ընտանիքի ամենաավագներ, որոնք են՝ հայրական գծով պապը, տատը, պապի և տատի ծնողները, Բ. երեխայի հայրը, Գ. ծնողական զույգը, որի մեջ մտնում են հայրն ու մայրը միասին: Գիշտ է, փորձը ցույց է տալիս, որ անվանակոչության այս դեպքերի մեծ մասում անուն առաջարկողը հայրն է, իսկ մայրն ընդամենը համաձայնվողն է: Սակայն, ի տարբերություն միանձնյա որոշման դեպքերի, այս դեպքերը հիշարժան են այն բանով, որ անվանակոչելիս, այնուամենայնիվ, հարցվել է մոր կարծիքը, ինչը նաև որոշակի ներընտանեկան մոր հարաբերություններ և կարգավիճակ է նշանակում, Դ. երեխայի մայրը, Ե. հայրական գծով ազգականների խումբ, որի մեջ մտնում են արենակցական գծով ավագ ազգականները: Պատահում է, որ այդ անձիք երբեմն ապրում են անվանակոչվողի ընտանիքում և իրենց կարգավիճակով լրացնում են արյունակից պապի և տատի բացակայությունը: Այդպիսի դեպքերում նրանք դասակարգվել են Ա. դասին, Զ. մայրական գծով ազգականների խումբ, Է. սերնդակից ազգականների խումբ, որի մեջ մտնում են նորածնի եղբայրը, քույրը, հորեղբոր կամ հորաքրոջ զավակը և այլն, Ը. այլք, որոնց մեջ մտնում են ոչ ազգականները՝ ընտանիքի ընկերը, գործընկերը, հարևանը, ծանոթը և այլն:

Այսպիսով, 1983 – 85 թթ. ծնված 97 հարցորդներին (47 տղա, 50 աղջիկ) տրված անունների պարագայում որպես անվանակոչող են հանդես եկել 30 (կամ 30,9%) դեպքում՝ ընտանիքի ամենաավագը, 33 (34,01%) դեպքում՝ միայն հայրը, 18 (18,6%) դեպքում՝ ծնողական զույգը, 6 (6,2%) դեպքում՝ միայն մայրը, 7 (7,2%) դեպքում՝ հոր գծով ազգականը, 2 (2,06%) դեպքում՝ մոր գծով ազգականը և 1 (1,03%) դեպքում՝ սերնդակից ազգականը: Այսինքն՝ ինչպես պարզվում է, անվանակոչելու գործառույթն ընտանիքում իրականացվում է գլխավորապես Բ. և Ա. դասերի անվանակոչողների կողմից: Եթե Բ. դասի մասնակցության տվյալներին հավելենք՝ նաև Գ. դասի մասնակցության դեպքերը, ապա կստացվի, որ գլխավոր անվանակոչող է հանդիսանում հայրը, որի մասնակցությամբ իրականացվում է զավակների անվանակոչության դեպքերի 51% -ից ավելին: Ինչ վերաբերում է անուն որոշելու գործին ընտանիքի ամենաավագների մասնակցությանը, ապա այն դրսևորվում է երկու կերպ՝ մասնակցություն տվյալ ընտանիքում բնակվելու և չբնակվելու պարագաներում: Այս առումով, ուշագրավ են հետևյալ իրողությունները. ա/ ամենաավագները բնակվում են առաջին տարիքային խմբի 97 հարցորդներից 48 ընտանիքում, որոնցից, սակայն 17-ում են ամենաավագները հանդես եկել որպես անվանակոչողներ: Այսինքն՝ մնացած 31 դեպքում նրանք անվանակոչությանը չեն մասնակցել, բ/ 49-ից 13 դեպքում ամենաավագները մասնակցել են անվանակոչությանը, չբնակվելով անվանակոչվածի տանը: Վերջինի առիթով առաջմ կարելի է նշել, որ այդուհանդերձ, անվանակոչության գործընթացում ամենաավագների դերը դեռևս նշանակալից է, ինչը, հավանաբար, պայմանավորված է հայկական ընտանիքում մեծի հանդեպ պահպանվող ավանդական վերաբերմունքով: Ուշագրավ են նաև հոր գծով ազգականների մասնակցությանը վերաբերող թվային տվյալները, ըստ որոնց, նրանց ակտիվությունն անվանակոչությանը նույնիսկ ավելի բարձր է (7,2%) , քան առանձին վերցրած մոր ակտիվությունը:

Պայմանավորված երեխաների սեռով՝ անվանակոչության մասնակիցների վերոհիշյալ դասերը տարբեր ակտիվություն են դրսևորում: Այսպես՝ քննվող տարիքային խմբի 47 հարցորդ տղաներին ամենաավագների կողմից տրված անունների բաժինը կազմել է 12 (կամ 25,5%), իսկ աղջիկների դեպքում՝ 18 (36%) միավոր անուն: Համաձայն նույն սխեմայի իբրև անվանակոչող, միայն հայրն է հանդես եկել տղաների՝ 20 (42,6%), աղջիկների՝ 13 (6%) դեպքում, ծնողական զույգը՝ տղաների 7 (14,9%), աղջիկների՝ 11 (22%) դեպքում: Միայն մայրը՝ տղաների՝ 3 (6,45%), աղջիկների՝ 3 (6%) դեպքում: Հոր գծով ազգականները՝ տղաների՝ 4 (8,9%), աղջիկների՝ 3 (6%) դեպքում: Մոր գծով ազգականը՝ 1 (2,1%) տղայի և 1 (2%) աղջկա դեպքում: Այսինքն՝ առկա են հետևյալ տարբերությունները. ա/ արական անունների ընտրության պարագայում առավել ակտիվ է հայրերի մասնակցությունը, իսկ իգական անունների դեպքում՝ ամենաավագների մասնակցությունը, բ/ ծնողական զույ-

զն ավելի հաճախ անուններ է որոշել դատրերի (11 կամ 22%) և քիչ (7 կամ 14,9%) տղաների համար:

Վերը դիտարկվածը վկայում է հետևյալի մասին: Նախ՝ ընտանիքում առկա է որոշակի տարբերակված վերաբերմունք սեռերի նկատմամբ, երկրորդ՝ այն հատկապես արտահայտվում է ընտանիքի հոր և զավակներ հարաբերություններում, և, երրորդ՝ հայրը որդիների նկատմամբ հարաբերություններում գերակա դիրք ունի, համեմատած ընտանիքի մյուս ավագ անդամների հետ: Այս առումով հատկանշական է նաև այն, որ մայրն ամուսնու ընկերակցությամբ անուն ընտրելիս առավել ակտիվություն է դրսևորել աղջիկների (11 անուն կամ 22%), քան տղաների (7 անուն կամ 14,9%) պարագայում: Երևի պատահական չպետք է համարել նաև այն, որ սերնդակցի կողմից անվանակոչելու եզակի դեպքը տարիքային այս խմբում նույնպես վերաբերում է աղջկա անվան ընտրությանը:

Անվանակոչողների ակտիվությունը որոշակի փոփոխություն է կրել տարիքային երկրորդ խմբի (1989-92թթ. ծնվածներ) անուններ ընտրելիս: Այս խմբի 98 հարցորդ (51 տղա և 47 աղջիկ), որպես անվանակոչող են հանդես եկել 19 դեպքում (կամ 19.4%)՝ ամենաավագները, 43 դեպքում (43.9%)՝ միայն հայրը, 16 դեպքում (16.3%)՝ ծնողական զույգը, 12 դեպքում (12.2%)՝ միայն մայրը, 6 դեպքում (6.1%)՝ հոր գծով ազգականը, 1 դեպքում (1.02%)՝ մոր գծով ազգականը և 1 դեպքում (1.02%)՝ սերնդակից ազգականը: Լրացնելով նշենք, որ ամենաավագները բնակվում են այս տարիքային խմբի 98 հարցվածից 56-ի ընտանիքում, որոնցից, սակայն, 13 դեպքում են նրանք հանդես եկել իբրև անվանակոչողներ, իսկ 43 դեպքում՝ ոչ: Սրան զուգահեռ, 6 այլ ամենաավագներ մասնակցել են անվանակոչությանը՝ չբնակվելով անվանակոչվածի տանը:

Վերոհիշյալ տվյալները ցույց են տալիս, որ նախորդ տարիքային խմբին առնչվող անվանակոչության դեպքերի համեմատ երկրորդ տարիքային խմբի հարցորդների անունների ընտրության պարագայում զգալիորեն (նույն տարիքային խմբում մոտ 9.6%-ով) կրճատվել է ամենաավագների մասնակցությունը. ըստ այդմ նաև անվանակոչվածի ընտանիքում բնակվողների և չբնակվողների հաշվով: Սրան հակառակ, անվանակոչության մեջ ավելի է (9.8%-ով) աճել հայրերի մասնակցությունը, որը տեղի է ունեցել ինչպես վերը հիշատակված ամենաավագների, այնպես էլ անվանակոչությանը մասնակից ծնողական զույգի ակտիվության նվազման հաշվին: Ակնհայտ նորույթ է, որ տարիքային երկրորդ խմբում 6 %-ով աճել է անվանակոչության գործընթացում մոր միայնակ մասնակցությունը: Եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ անվանակոչող մյուս (չնշված) դասերի մասնակցությունը մոր փուլում գրեթե անփոփոխ է մնացել, ապա մնում է արձանագրել, որ անվանակոչության գործընթացում ընդհանուր հաշվով աճել է երիտասարդ ծնողների մասնակցությունը:

Տարիքային երկրորդ խմբում ակնհայտ փոփոխությունն այն է, որ այստեղ զավակների անուններն ընտրելիս կտրուկ (18.2%-ով) ավելացել է հայրերի մասնակցությունը (կազմել է 31 անուն կամ ընդհանուրի 60.8%-ը), այն դեպքում, երբ աղջիկների անվանակոչության դեպքում նրանց մասնակցությունը գրեթե անփոփոխ է մնացել (25.5%): Վերջիններիս անվանակոչության դեպքերի թվում մոտ 7%-ով ավելացել է մայրերի միայնակ մասնակցությունը (այն կազմել է 7 անուն կամ ընդհանուրի 14.9%-ը): Մոր միայնակ մասնակցությունը թեկուզև քիչ (3.8%-ով) ավելացել է նաև որդիների անունների ընտրության պարագայում (այն կազմել է 5 անուն կամ ընդհանուրի 9.8%-ը): Հետաքրքիր է, որ ուստր և դուստր զավակների անունների ընտրության մեջ ամենաավագների ընդհանուր մասնակցությունը նվազելուն զուգընթաց նաև հավասարակշռվել է. նրանց կողմից ընտրվել է 9 տղայի և 10 աղջկա անուն:

ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԸՆԹԱՅԸ

Անվանակոչողների դասերը	Անվանակոչվել են								
	Ընդամենը			Տարիքային խմբեր					
	տղա	աղջիկ	ընդամենը	1983-1985թթ. ծնվածներ			1989-1992թթ. ծնվածներ		
				տղա	աղջիկ	ընդամենը	տղա	աղջիկ	ընդամենը
	%	%	%	%	%	%	%	%	%
Ա դաս՝ մեծավագներ	21.4	28.9	25.1	25.5	36	30.9	17.6	21.3	19.4
Բ դաս՝ միայն հայրը	52	25.7	39	42.6	26	34	60.8	25.5	43.9
Գ դաս՝ ծնողական զույգը	11.2	23.7	17.4	14.9	22	18.6	7.8	25.5	16.3
Դ դաս՝ միայն մայրը	8.2	10.3	9.2	6.4	6	6.2	9.8	14.9	12.2
Ե դաս՝ հայրական գծով ազգականներ	4.08	9.3	6.7	8.9	6	7.2	-	12.8	6.12
Զ դաս՝ մայրական գծով ազգականներ	2.04	1.03	1.5	2.1	2	2.06	2	-	1.02
Է դաս՝ սերնդակից ազգականներ	1.02	1.03	1.02	-	2	1.03	2	-	1.02
Ընդամենը	100	100	100	100	100	100	100	100	100

Մյուս հիշարժան փոփոխությունն այն է, որ հոր գծով ազգականները երկրորդ տարիքային խմբի ոչ մի տղայի անուն չեն որոշել, իսկ աղջիկների անվանակոչության պարագայում, ընդհակառակը նրանց մասնակցությունը նույնիսկ զգալի (նախորդի համեմատ երկու անգամ) աճել է:

Ինչպես անվանակոչության ընդհանուր, այնպես էլ մասնավոր (ըստ սեռի անվանակոչելու) դեպքերում անվանակոչող մյուս դասերի մասնակցությունը գրեթե անփոփոխ է մնացել:

Չնայած ներկայացված նյութերը դեռևս սակավ են և ոչ բավարար հիմնավոր ու ընդհանրական դիտողություններ անելու համար, այդուհանդերձ, քննարկվող երևույթի մեջ կարելի է ուրվագծել հետևյալ միտումները. 1. ենթադրվում է անվանակոչությանը մասնակից դասերի (անձանց) ակտիվության փոփոխության հետագա շարունակականություն, 2. այն կարող է դրսևորվել անվանակոչության գործընթացում ընտանիքի տարեց անդամների մասնակցության նվազման և, ընդհակառակը՝ երիտասարդ ծնողական զույգի մասնակցության աճի ձևով, 3. անվանակոչության գործընթացում սպասվում է մայրերի միայնակ մասնակցության որոշակի աճ, 4. նշված գործընթացում գնալով ավելի է նկատելի դառնալու հայրական գծով ավագ ազգականների մասնակցության նվազումը:

Սամվել Մկրտչյան
ՀԱԻ

ԸՆՏԱՆԻՔՆ ՈՒ ԱԶԳԱԿՑԱԿԱՆ-ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՄԻՋԱԿԱՅՐԸ ՏՈՆԵՐԻ ԱՎԱՆԴՈՒԹԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Ազգագրական և էթնոսոցիոլոգիական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տոհմերի կենցաղավարման ամենատարածված ոլորտն ազգակցական միջավայրն է, մասնավորապես՝ ընտանիքը, ուր դրանք արտացոլում են անձի սոցիալական կարգավիճակի հիմնական փուլերի փոփոխությունը՝ սկսած նրա ծննդից, անվանակոչությունից, ամուսնությունից, ընդհուպ մինչև հանգուցյալի հիշատակման հետ առնչվող արարողությունները:

Դարերի ընթացքում տոհմերը, խորհրդանշական բնույթ ունեցող իրենց ծիսաստվորությամբ նորմերով հանդերձ կարգավորել են ինչպես ներընտանեկան, այնպես էլ ազգակցական, դրացիական և սոցիալական այլ խմբերի փոխհարաբերությունները, դրանով իսկ ձևավորելով հարաբերությունների որոշակի համակարգ: Հայոց տոհմական համակարգում այդ գործառույթը հիմնականում կատարում էին (և են) ավանդությամբ-կրոնական տոհմերը:

Նույնիսկ խորհրդային ժամանակաշրջանում (հատկապես 1920-1930-ական թթ.), երբ պետության հակակրոնական քաղաքականության հետևանքով զանգվածաբար փակվում էին եկեղեցիները և, բնականաբար չէին կատարվում զուտ կրոնական արարողություններ, ավանդությամբ այն տոհմերի ու ծեսերի կենցաղավարման հիմնական ոլորտը շարունակում էր մնալ ընտանիքը:

Հայոց տոնածիսական համակարգի էթնոսոցիոլոգիական հետազոտությունները ևս հաստատում են այդ երևույթի առկայությունը վերջին շրջանում: Ուսումնասիրությունները հնարավորություն ընձեռեցին բացահայտելու այդ միջավայրում առավել տարածված ավանդության տոների հետևյալ ցանկը՝ Նոր Տարի, Ջատիկ, Քրիստոսի Ծնունդ, Տեառնընդառաջ, Սուրբ Խաչ, Սուրբ Աստվածածին, Վարդավառ և այլն: Ի դեպ, այդ տոների տարածվածությունը դիտարկվել է նաև կոնկրետ ոլորտներում, մասնավորապես՝ տանը: Այս առումով, կենցաղավարման գերակայությամբ ավանդության տոներից դարձյալ առանձնանում էին Նոր Տարին (97%), Տեառնընդառաջը (92%), Ջատիկը (72%) և Քրիստոսի Ծնունդը (62%)¹:

Ինչ վերաբերում է կենցաղում լայն տարածում գտած և ծագմամբ քաղաքական բնույթ ունեցող խորհրդային նոր տոներին, ապա դրանք ևս աստիճանաբար ներթափանցում էին ընտանիք, հետզհետե ամրապնդվելով արյունակցական այդ միջավայրում: Այդ տոների կենցաղավարման սոցիալական ոլորտի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք գրեթե հավասարաչափ էին տարածված ընկերային և ազգակցական միջավայրերում՝ վերջիններիս թեթևակի առավելությամբ, որը հիմնականում կապված էր կենցաղում դրանց կրած իմաստային փոխակերպման երևույթի հետ:

Էթնոսոցիոլոգիական հետազոտությունների միջոցով բացահայտվեցին նաև խորհրդային տոների կենցաղավարման չափերը զուտ ընտանեկան միջավայրում: Այս առումով ամենաբարձր վարկանիշն ուներ Կանանց Միջազգային օրը (Մարտի 8՝ 60%), որին անմիջապես հաջորդում էին խորհրդային բանակին (Փետրվարի 23՝ 50%), Աշխատավորների միջազգային համերաշխության (Մայիսի 1՝ 36%) և Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակին (Մայիսի 9՝ 37%) նվիրված տոները:²

Այդ ուսումնասիրությունները միաժամանակ ցույց տվեցին, որ տոների կենցաղավարման չափերը պայմանավորված են ընտանիքների բազմանդամությամբ: Պետք է նշել, որ այսօր էլ մեծ ընտանիքն այն առանձնահատուկ սոցիալական խումբն է, որը հանդիսանում է նահապետական գերդաստանային և ազգակցական ավանդույթների հիմնական կրողը՝ բնականաբար ավանդական այդ կառույցների գլխավոր ժառանգորդը: Տոների տարածվածության չափերի և ընտանիքների մեծության փոխապայմանավորվածության այդ օբյեկտիվ կապն էր, որ հնարավոր եղավ բացահայտել էթնոսոցիոլոգիական հետազոտությունների միջոցով (տես աղյուսակ 1): Վերջինս ցույց տվեց, որ եռասերունդ ընտանիքը, անգամ գերուրբանիզացված մայրաքաղաքում, ապահովում է մշակութային, տվյալ դեպքում՝ տոնածիսական արժեքների ուղղահա-

¹ Ս.Ս.Սկրտչյան, Հայաստանի Հանրապետության բնակչության արդի տոնածիսական համակարգը (էթնոսոցիոլոգիական հետազոտություն), Թեկնածուականատենախոսություն, Եր., 1997, էջ 58-60:

² ԱՆԴ, էջ 61:

յաց տեղեկատվության գրեթե 30%-ոց հնարավորություն, որը բավականին բարձր ցուցանիշ է:

Մեծ և փոքր ընտանիքներում տոների տարածվածության մասշտաբային տարբերությունները հատկապես նկատելի էին ավանդության ինկլոնական այնպիսի տոներում, ինչպիսիք են՝ Քրիստոսի Ծնունդը (Մ-21%, Փ-17%),* Տեառնընդառաջը (Մ-21, Փ-17), Ս.Աստվածածինը (Մ-21%, Փ-13%) և Ս.Խաչը (Մ-30%, Փ-23%):³ Ի դեպ, այդ խմբի տոներից Ջատիկը և Վարդավառը գրեթե հավասարաչափ էին տարածված նշված ընտանիքներում, որն իր հերթին վկայում է դրանց ավանդության մասին բարձր աստիճանը:

Ինչ վերաբերում է խորհրդային տոներին, ապա դիտարկված ընտանիքներում դրանց կենցաղավարման չափերը գրեթե նույնն էր՝ փոքր ընտանիքների նվազագույն առավելությամբ, որը հատկապես նկատելի էր հանրապետության քաղաքային բնակավայրերում: Թերևս, խորհրդային այդ տոներից Մարտի 8-ը, մասամբ նաև՝ Փետրվարի 23-ը և Մայիսի 9-ը հանրապետության որոշ բնակավայրերում նկատելի առավելություն ունեին մեծ ընտանիքներում, որը պայմանավորված էր կենցաղում այդ տոների աստիճանական փոխակերպման հետևանքով ավանդական մեծ ընտանիքին բնորոշ որոշակի արժեքների (օրինակ՝ հարգալից վերաբերմունք, մեծարանք մոր, տանտիկնոջ, տղամարդու, տանտիրոջ, զինվորի և այլոց նկատմամբ) ժառանգորդությամբ:

Ընտանիքն ու ազգակցական միջավայրը ոչ միայն ավանդության ինկլոնական տոների կենցաղավարման ամենատարածված սոցիալական օղակներն են, այլև այդ արժեքները սերունդներին փոխանցող տեղեկատվական գլխավոր մեխանիզմները, որպիսի գործառույթը անգամ, խորհրդային ժամանակաշրջանում այլ աղբյուրների բացակայության պայմաններում, այդ գլխավորապես կատարում էր ընտանիքը: Էթնոսոցիոլոգիական հետազոտությունների արդյունքում, այդ տոների կատարման ձևերին ու ժամկետներին ամենաքաջատեղյակ սոցիալական խումբը դարձյալ ընտանիքն էր, հատկապես նրա ավագ սերնդի ներկայացուցիչները: Այսպես, այդ տեղեկատվությանը տիրապետողների գերակշռող մասը (64%) մերձավոր ազգականներն էին, ուր գլխավորապես առանձնանում էին տարեց անձիք՝ կանանց որոշակի առավելությամբ (72%): Ինչ վերաբերում է եկեղեցու և դրա սպասավորների հետ առնչվող տեղեկատվական աղբյուրներին (եկեղեցի, քահանա, տիրացու և այլն), ապա այն խորհրդային շրջանում շատ ցածր տոկոս էր կազմում (11%): Վերջինս, սակայն, 1990-ական թթ. սկսած, այլ բնագավառների (հեռուստատեսություն, ռադիո, մամուլ, գրականություն և այլն) հետ միասին ունի վերընթաց աճի միտումներ:

Ընտանեկան և ազգակցական միջավայրերում ավանդության ինկլոնական տոների ամրապնդմանը նպաստող գործոններից է նրանց անմիջական

³ ԱՆԴ, էջ 60, 167:

* Մ-Մեծ ընտանիք, Փ-Փոքր ընտանիք:

կապն անձի ծննդյան և հատկապես դրան առնչվող կարևոր իրադարձություններից մեկի՝ անվանակոչության հետ: Վերջինս, սովորույթի համաձայն, կապված էր նույն անունը կրող սրբի տոնակատարության հետ. օրինակ՝ Քրիստոսի Շնունդը՝ Քրիստափորների, Ավետիսների, Սուրբ Սարգիսը՝ Սարգիսների, Վարդանանցը՝ Վարդանների, Ջատիկը՝ Չարությունների, Ջատիկների, Չամբարծումը՝ Չամբարծումների, Ս.Աստվածածինը՝ Մարիամների, Լուսավորչինը՝ Գրիգորների և այլն:⁴ Ուշագրավ է, մասնավորապես, անվանակոչության սովորույթի էվոլյուցիան խորհրդային սկզբնական շրջանում՝ 1920-1930թթ., երբ հայոց անձանվանաբանական համալիր մուտք գործեցին անուններ, որոնք ամբողջությամբ արտացոլում էին այդ հեղափոխական ժամանակաշրջանը: Անվանակոչության ավանդական ձևերի անկմանը զուգահեռ, աստիճանաբար կենցաղում ամրապնդվում էին ծննդյան տարեդարձի տոնակատարությունները, որոնք մեր օրերում արդեն համատարած բնույթ ունեն:

Տոների ավանդութացումը մեծ չափով պայմանավորված է նաև այն բանով, որ դրանք առնչվում են անձի կենսագրության այնպիսի վճռորոշ պահի հետ, ինչպիսին է ամուսնությունը: Տոները կարգավորել են այդ հարաբերությունների գրեթե բոլոր կարևոր փուլերը՝ սկսած երիտասարդությանն ընձեռած ծանոթանալու հնարավորությունից մինչև նշանդրեքն ու հարսանիքը, նշանվածների, նորապսակների և նրանց ազգականների ու բարեկամների շնորհավորական փոխայցելություններից ու նվիրատվություններից ընդհուպ մինչև՝ նորահարսի օժիտն ու դարձը, որոշակիորեն կանոնարկելով այդ հարաբերությունների՝ ավանդույթի ուժով սահմանված ձևերն ու ժամկետները: Այդ գործառույթն անցյալում գրեթե ամբողջությամբ կատարում էին ավանդութային տոները՝ Քրիստոսի Շնունդը, Տեառնընդառաջը, Բարեկենդանը, Ծաղկագարդը, Մեծ Պասը, Ջատիկը, Վարդավառը, Նավասարդը և հատկապես՝ նոր Տարի-Ամանորը: Ամենևին էլ պատահական չէ, որ նույնիսկ 20-րդ դ. վերջերին, ըստ էթնոսոցիոլոգիական հետազոտությունների, այդ տոներն առավել տարածված էին այն անձանց միջավայրում, ովքեր ունեին ավանդութային-վարքագծային հստակ կողմնորոշում:⁵

Խորհրդային ժամանակաշրջանում, երբ ավանդութային-կրոնական տոների կենցաղավարման հիմնական ոլորտն աստիճանաբար սահմանափակվում էր ընտանեկան միջավայրով, դրանք դեռևս պահպանում էին ընտանեկան-ազգակցական հարաբերությունների կարգավորման

⁴ *Ե.Շահագիզ*, Նոր Նախիջևանը և նոր նախիջևանցիք. - Ազգագրական հանդես (այսու՝ ԱՀ) Թիֆլիս, 1902, գ. 9, էջ 39: Նաև՝ *Վ.Սաղոյան*, Երևանի ազգագրական նյութեր, 1967, - ՀԱԻ ազգագրության բաժնի արխիվ (այսու՝ ԱԲԱ), մաս 18, 123, տետր 24, էջ 15: Նաև *Ս.Ս. Սկրտչյան*, նշվ. աշխ., էջ 67:

⁵ *Ա.Ալպոյանեան*, Պատմութիւն հայ Կեսարիոյ, Բ հ., Գահիրե, 1937, էջ 1724: Նաև՝ *Ե.Շահագիզ*, նշվ. աշխ., էջ 19, *Ե. Լալայան*, Ջավախք. - ԱՀ, Շուշի, 1895-1896, էջ 24: Նաև՝ *Ե.Լալայան*, Վայոց Ձոր. - ԱՀ, Թիֆլիս, 1906, գիրք 14, էջ 148: Նաև՝ *Ս.Բարսեղյան*, Արմուտլի գյուղի սովորությունները. - ԱԲԱ, 433, տետր 6, էջ 67: Նաև՝ *Ս.Ս. Սկրտչյան*, նշվ. աշխ., էջ 68-70:

ավանդական գործառույթը: Այս առումով հետաքրքիր երևույթ էր նոր տոների մուտքը և դրանց ամրապնդումը հայոց տոնական համակարգում, որը հիմնականում պայմանավորված էր ավանդական արժեքներն արտահայտելու ակնկալությամբ և ոչ թե այդ տոների զուտ գաղափարախոսությամբ: Խոսքը վերաբերում է, օրինակ՝ Մարտի 8-ին, որը, չնայած դրա քաղաքական կամ միջազգային բնույթին, կենցաղում աստիճանաբար ընկալվում էր որպես մայրերին, կանանց և աղջիկներին նվիրված տոն: Այս առումով շատ ուշագրավ է խորհրդային առանձին տոների կողմից ավանդութային արժեքների ժառանգորդման երևույթը: Հետազոտությունները ցույց տվեցին, որ, օրինակ՝ ծիսական, մասնավորապես, օժիտի հետ առնչվող արարողությունների գործառույթն այդ նոր տոներից մասամբ ստանձնել էր Մարտի 8-ը: Այսպես, եթե Տեառնընդառաջի հետ կապված օժիտը նշում էր հարցորդների 37%-ը, ապա Մարտի 8-ի կապակցությամբ դրա տարածվածությունը կազմում էր 26%: Եվ, ընդհանրապես, այդ տոնն ուներ բարձր վարկանիշ տոնական փոխայցելությունների գրեթե ողջ համալիրում, ուր գերակայողը դարձյալ ընտանեկան-ազգակցական միջավայրն է: Պատահական չէ, որ մեր օրերում էլ այդ տոնը կենցաղում շարունակում է պահպանել տարածվածության լայն չափերը:⁶

Կարգ:

Խորհրդային ժամանակաշրջանը որոշակի փոփոխություններ մտցրեց այս ոլորտում ևս: Ասպարեզ եկած նոր տոները ժամանակի ընթացքում մասամբ ստանձնեցին ավանդության-կրոնական տոների այդ դերը: Դրանք, ըստ էության, ավանդականի ու նորի մի յուրատեսակ փոխհամակցություն էին և այս առումով առանձնանում էին հատկապես փոխհամակցություն էին և այս առումով առանձնանում էին հատկապես (Վոնվարյան (Յունվարի 2) և մայիսյան (Մայիսի 2) հիշատակման (գե-րեզմանների) օրերը: Նորաստեղծ այդ ծեսերը մասամբ պահպանում էին ավանդականի կառուցվածքային բնութագիրը, այն է, առաջին օրը՝ ողջերի կամ որպես ուրախության տոն, իսկ հաջորդ օրը՝ նախնիների ողջերի կամ որպես ուրախության տոն, իսկ հաջորդ օրը՝ նախնիների հիշատակ-մեռելոց օր: Ուշագրավ է այն հանգամանքը, որ այդ գործա-ռույթը կատարում էին արդեն նոր խորհրդային տոները, որոնք ժամկե-

7 Ս.Ս. Մկրտչյան նշվ.աշխ., էջ 94-99:

տային առումով այնքան էլ հեռու չէին կենցաղում աստիճանաբար մոռացված իրենց ավանդական զուգահեռներից (Քրիստոսի Ծննդյան և Մեծ Ջատկի տոն-մեռելոցներից):

**Տոների տարածվածությունը մեծ և փոքր ընտանիքներում
(1980թ., Հայաստան) %**

ՏՈՆԵՐ	Հայաստան				Հայաստան	
	Գ ՅՈՒՂ		Ք Ա Ղ Ա Ք		Մ ե ծ ընտանիք	Փ Ո Ք Ր ընտանիք
	մեծ ընտանիք	փոքր ընտանիք	մեծ ընտանիք	փոքր ընտանիք		
1. Նոր տարի	95,5	95	96	97,3	96	97
2. Բ. Ծնունդ	26	23	27	21	27	22
3. Տեառնընդառաջ	23	19	19	15	21	17
4. Փետրվարի 23	67	69	62	66	65	67
5. Մարտի 8	83	82	87	89	86	86
6. Ջատիկ	50	50	61,5	59	56	55
7. Ապրիլի 24	40,5	40	49,5	50	47	78
8. Մայիսի 1	78	77	83	84,5	82	83
9. Մայիսի 9	66	71	70	71	68	71
10. Վարդանանց	20	23	13,9	14	15	16,5
11. Համբարձում	21,5	21,5	14,5	13	16	14
12. Վարդավառ	47	48	32	30,5	36	34
13. Ս.Աստվածածին	24	20,5	17	12	21	13,5
14. Ս.Խաչ	31	26	26	21	30	23
15. Նոյեմբերի 7	74	69	80	82	78	79
	732	988	1675	3370	2607	4308

Անվիճելի փաստ է, որ նախնիների հիշատակի հետ առնչվող այդ նոր արարողությունների ձևավորման վրա մեծ է եղել նաև խորհրդային պետական գործոնի դերը:

Այսպիսով, թե՛ պատմական և թե՛ էթնոսոցիոլոգիական առումներով կատարած ուսումնասիրությունները հնարավորություն ընձեռեցին բացահայտելու տոների ավանդության վրա ազդող գլխավոր գործոնները, որոնք հիմնականում պայմանավորված են ընտանեկան, ազգակցական և բարեկամական միջավայրով: Եվ, որ ամենակարևորն է, հենց այդ միջավայրում է առավելապես կատարվում անձի սոցիալիզացիան՝ իր գրեթե ողջ փուլերով: Այս երևույթների տոնածիսական արտացոլման խորությունն է, որ տոնը կամ ծեսը, ըստ էության, դարձնում է ավանդության, անկախ դրանց ծագումնաբանական բնույթից:

Нона Шахназарян

КубГУ

Эльза - Баир Гучинова

ИЭА

Гендерные стереотипы армян Арцаха

Целью данной работы является исследование того, как гендерное поведение армянского населения Арцаха отвечает традиционным полоролевым стереотипам и, наоборот, насколько эти стереотипы отражают реальную действительность. Предлагаемая статья написана на полевых материалах Н. Шахназарян, собранных в 2000-2001 г. в Мартунинском р-не Нагорно-Карабахской Республики методом включенного наблюдения и свободного интервью.

Полевая работа в этом регионе имела специфику, связанную с состоянием длительного военного конфликта и его последствиями. В 1991-1993 гг. на территории Нагорного Карабаха велись военные действия. Многие населенные пункты, с жителями которых проводилось интервью, бывали под артобстрелами, бомбардировками, а респонденты потеряли своих близких и лишились крова. Период после окончания военных действий характеризовался разрухой, экономическим кризисом, безработицей, которая выталкивала трудоспособных мужчин на отходничество в Россию и в Армению.

Гендерная направленность исследования была встречена настороженно в данном регионе. Это выражалось, прежде всего, общей атмосферой недоверия к человеку, проводящему интер-

вью и интересующемуся, в частности, приватной сферой: так, мужья, опасаясь «дурного» влияния на свою жену, могли даже попросить вопросник для ознакомления. Женщины же были настолько заняты домашними делами, что у них не оставалось времени для беседы.

В своем исследовании мы исходили из того, что гендерные стереотипы являются более консервативными, нежели реальное соотношение полов. Независимо от типа семьи, в Арцахе она характеризовалась четким патриархатным доминированием¹, будь то сохранявшийся в начале XX в. большесемейный гердастан или ставшая преобладающей в советское время малая индивидуальная семья. Экономические трудности последнего десятилетия повлияли на структуру семьи, которая от малой индивидуальной стала возвращаться к более архаичным формам — к трехпоколенной, иногда и к большой патриархальной, где под одной крышей одно хозяйство ведут три и более супружеские пары². Демодернизация усилила и без того консервативные установки арцахского общества: жесткий социальный контроль, бескомпромиссное общественное мнение, строгое следование традиции, особенно в публичной сфере. Последствия войны сказались на специфике демографических диспозиций: уменьшилось количество мужчин брачного возраста, многие мужчины выехали на заработки, оставив свои семьи с родственниками, появилось много вдов. В то же время, как в любом послевоенном обществе, здесь можно проследить тенденции демодерна: возвращение к натуральным формам хозяйства, усиление миграционных потоков из города в село, что должно было актуализировать наиболее консервативные формы семейных отношений.

Роль и обязанности мужа в семье. Главная обязанность мужа — финансовое обеспечение семьи, что подчеркивалось в каждом интервью. Основная обязанность мужчины в доме — зарабатывать деньги в количестве, необходимом для удовлетворения семейных потребностей: чтобы в доме было много продуктов и жена могла позволить себе приобрести, что пожелает... Главный добытчик, организатор... муж должен решать основные проблемы в семье, поддерживает и развивает престиж семьи.³ Обязанности мужчины по дому разнообразны, в первую очередь это — традиционно мужские занятия, связанные с сельскохозяйствен-

¹ Подробнее см. С. Лиситин. Армяне Нагорного Карабаха (этнографический очерк). Ер., 1992, с. 99-105.

² Структура большой семьи у армян исчерпывающе представлена в кн.: Э. Т. Карапетян. Армянская семейная община, Ер., 1958.

³ Здесь и далее курсивом приводятся цитаты из интервью с респондентами.

ным циклом: работает в поле, обрабатывает огород, гонит самогон и делает вино. Трусит шелковицу в сезон. Много времени занимает и животноводческий труд: пасет баранов по дворовой очереди, заготавливает хворост, сено, свежую траву для скотины.

Работа, связанная с обустройством и ремонтом дома, «стратегическое» обеспечение его продуктами и теплом также лежит на мужчине: прибить гвозди, заготовить дрова, восполнять недостаток в доме, закупать продукты на зиму, топить баню. Мужскими занятиями считаются и занятия, связанные с техникой. Муж сконструировал и собрал тестомешалку, чинит машину, технику. Также к мужским обязанностям относится надзор за порядком в доме, за моральным климатом и за общением вне узкого семейного круга: воспитывать детей, приводить гостей.

Нередки случаи, когда муж не чурается и «женской работы». Обычно, если заболевает жена или при подготовке к приему гостей, муж не считает зазорным поработать на кухне. Когда болею, наливаю чай.. Варит себе кофе, если я сильно занята или недомогаю..., делает покупки. Когда мы ждем гостей, помогает нарезать салаты, чистит зелень, овощи. Традиционные полоролевые стереотипы имеют четкие границы разделения труда, исходившие из общего посыла, что наиболее тяжелой работой занимается мужчина, а более легкой — женщина. В наше время многие виды традиционно мужского труда давно механизированы, в то время как женский труд часто выполняется по старинке. Это приводит к тому, что муж помогает жене в ее заботах по дому, поскольку одной ей это часто не под силу: муж помогает при дойке коровы, подметает хлев, меняет воду при мытье полов, выносит ковры, носит ведра с водой, ходит на рынок, пылесосит, помогает при генеральной уборке.

Но если жена чувствует свою «вину» перед мужем, например в том, что родила только девочек, она будет стараться освободить мужа от домашней работы: по хозяйству мы — пять женщин (жена, мать и три дочери) — не позволим ему делать ничего: стыдно ведь. Также более традиционно соотношение полов в большой семье. Пока мы живем вместе большой семьей, мой муж не будет выполнять «женскую работу», но я и не позволю, потому что на следующий день это будет обсуждать весь двор.

Роль и обязанности женщины в семье хорошо представлены «прямыми голосами». Заботам женщины нет конца: доить корову, ухаживать за курами, индюшками, цыплятами. Полоть

огород, сажать саженцы - очень тяжелый труд. ... Сеять овощи и другие культуры, полоть. Подметать двор. Чистить хлев, хотя это и мужская работа. Ходить за водой на источник... В тоже время вся домашняя работа на мне - готовить еду, делать сыр, мацун, , печь хлеб в туруне или в духовке, ухаживать за комнатными цветами, мыть посуду, месить тесто, печь торты, делать сладости. Много сил уходит на то, чтобы соблюдать чистоту - чисто одевать мужа, стирать, убирать, гладить, - и это постоянная работа: чуть насорили - сразу подмести, помыть, соскрести грязь с полов и обуви...А также обязательные заготовки на зиму, например, - варить варенье, в количестве которого хозяйки негласно соревнуются. Однако от женщины зависит семейная атмосфера, многие могли бы повторить слова нашей респондентки: Забочусь, чтоб ели вместе всей семьей, готовлю вкусные завтраки, обеды и ужины. Важная часть домашней работы заключается в воспитании детей - делать уроки, читать с детьми; вменяется женщине и забота о старших, например, мыть ноги отца.

Все опрошенные женщины хорошо представляли свою роль в семье, которая в целом соответствует традиционной, но все же несет на себе печать модернизации. Как считали респондентки, роль женщины в семье: в первую очередь - уважать, любить мужа, во вторую - воспитывать детей... И эта роль женщины не последняя - домохозяйка, но равноправная... Роль средняя, но, смотря в каком вопросе, не главная, но считаются... Важная, со мной все советуются, что дети, что муж - я в курсе всех событий, контролирую ситуацию... Женщина должна быть преданной, скромной, не предавать своего мужа... Хранительница очага и домашнего уюта. Кроме того, должна держать семью на высоте, поддерживать престиж, уважать его стариков и родню, поддерживать мир и покой в семье.

Женщине вменяется не просто быть рачительной хозяйкой, а как бы вести хозяйство на показ, при этом ее приватная сфера также становится публичной. Женщина должна не просто уложиться в бюджет, а умудриться приобрести все необходимое и при этом сэкономить, не просто постирать белье, а постирать образцово и вывесить во дворе так, чтобы каждому входящему было видно, какая хозяйка здесь живет. Если же она недостаточно расторопна и бережлива, не стремится соответствовать традиционной гендерной роли, ее осуждающе могут назвать *q̄l̄t̄q̄' ʒh* - «не женщина».

Как и после всякой войны, в Арцахе стало больше вдов. Вдовство в этом регионе считается почетным статусом, и

государство много делает для женщин, потерявших своих мужей на войне. Часто пособие по потере кормильца и другие материальные выплаты являются единственным средством существования вдовы и ее семьи. Благодаря социальной поддержке вдовы порой оказываются в лучших условиях, нежели полноценные семьи, в которых кормилец не имеет работы. Статус вдовы в этом обществе так высок, что ни одна из них не намерена выйти замуж повторно, считая, что риск слишком велик: неизвестно, будет ли новый брак удачным, но отношения с обществом и детьми могут быть испорчены надолго. Поэтому женщине — вдове приходится все виды работы делать самой, поскольку внешняя помощь не регулярна. *Все делаю я, отношусь к этому спокойно, судьба у меня такая. Отвезти зерно на мельницу, купить распиленные дрова, если таковых нет — сама колю.*

Лидерство в семье. — номинальное и реальное Практически все опрошенные замужние женщины без колебаний называли супруга лидером в брачном партнерстве. Однако в дальнейшем разговоре выяснялось, что мужское доминирование нередко бывает номинальным, но женщина всячески поддерживает статус мужа как главы семьи перед обществом. Это делается постольку, поскольку это отвечает принятым нормам и иное распределение ролей обществом осуждалось бы, а это бы сказывалось на отношении не только к мужу — подкаблучнику, но и ко всей семье в целом, включая детей. Любые признаки заботливого отношения к жене, проявляемые публично, также могут восприниматься со стороны как доминирование женщины в семье. *Распоряжаемся вместе, но последнее слово — за ним. По хозяйству бюджетом распоряжаюсь в основном я.* Безработица в этих местах приводит к тому, что часто единственным работающим членом семьи и регулярно приносящим деньги в дом оказывается жена. Муж при отсутствии постоянной работы имеет сезонные заработки (перегон водки из туты и др. фруктов) и ищет любую возможность заработать (например, собирает цветной металл на руинах и сдает). Нестабильность заработков мужа приводит к некоторому выравниванию статусов мужчины и женщины, хотя патриархатная модель продолжает сохранять свое влияние. Отношение к мужу в большинстве семей формулировалось осознанно традиционно. Нередко жена была готова приукрасить реальную роль мужа в семье, таким образом, защищая престиж семьи. *По обычаю и по моему мнению также я должна внушать к нему уважение, возвышать его, всячески*

поднимать престиж, чтобы он чувствовал себя мужчиной. Главное — уважать его и держать на высоте.

Соотношение с традицией. Гендерное распределение в карабахских семьях продолжает оставаться традиционным, но в рамках этой традиции статус женщины стал выше, она себя чувствует более уверенно. Сравнивая супружеские отношения в родительской семье и в своей, женщины в наши дни более довольны своим статусом, и не хотели бы оказаться на месте матери. Как правило, они предпочитают жить в малой индивидуальной семье: "у меня плохо то, что я живу со свекровью". В то же время мужчины, наоборот, хотели бы установить в своих семьях те же отношения между супругами, что и в семьях своих родителей.

Атмосфера в моей семье спокойная, хорошая, а моя мать была вынуждена уйти от отца, не выдержав деспотизма свекрови... В моей семье больше свободы. Мама боится моего отца... Моя семья мне кажется лучше. Мои родители жили вместе из-за детей, взаимопонимания не было, много споров и разногласий... В моей родительской семье отец довлел над матерью, попивал, ревновал, иногда бил... В моей семье муж не бьет, но тоже ревнует, не позволяет общаться со старыми друзьями, не дает спокойно говорить и смеяться с посторонними, зато заботливый и нежный семьянин... Несмотря на отсутствие образования, семья моих родителей была спокойная, дружная, мирная. Но, по-моему, моя семья удалась больше. Мы с мужем более открытые, современные и создали более демократичную атмосферу для наших детей. Я — больше опора для своего мужа, помощница, сподвижница, чем моя мать была для моего отца...

Родители, признавая, что их семьи живут по традиции, понимают, что не считаться с требованиями времени невозможно, и жизнь у детей будет другая. Но в этой будущей жизни для родителей важно, чтобы традиции не были забыты, потому что верность обычаям — это и залог их спокойной старости. Многие родители оставляют за своими детьми право выбора, не ставят им столько жестких условий, какие в свою очередь ставились им их родителями. Дети пусть сами выбирают, что им приносит больше счастья, это уже будет другая семья, и как там сложится, пусть так и будет... Хотела бы для детей сочетания — одежда и взгляды современные, но и традиции чтоб не забывали, уважали супругов и старших... Более современно одеваться — не подходит к нашей жизни. Не обязательно в одежде короткие юбки. Но чтоб компьютеры были. Скромность, воспитание — по традиции, одежда, веселье, бытовой комфорт — по современному... Я бы

хотела, чтоб в образовании, в быту, в одежде дети жили бы по-современному. В то же время свадьбы, обручения и похороны делали по традиции... Хочу, чтобы мои дети жили в лучших условиях, в лучшем месте, но в более традиционной среде, чем городская....

Изучая реальное соотношение полов в арцахских семьях, мы убедились, что гендерные стереотипы более консервативные, нежели существующая практика. Опрошенные женщины не хотели жить по семейным моделям своих матерей, но в приверженности своих детей к традициям видели залог стабильности и порядка. Хотя полоролевые стереотипы остаются в данном регионе в рамках генерального гендерного контракта, само соотношение полов стало менее жестким и конструируется более гибко, нежели предписывает канон, ориентируясь на вызовы жизни.

Ավետիանա Պողոսյան
ՀԱԻ

ԱՇԽԱՏՈՂ ԿԻՆՆ ԱՐԴԻ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ (նախնական դիտարկումներ)

Այրական կողմնորոշում ունեցող հայ հասարակությունում կնոջ կյանքում շարունակվում է առաջնահերթ համարվել ընտանիքը և ոչ թե աշխատանքն ու կարիերիան: Ավանդական հասարակությունում կանանց պարտականությունների շրջանակը սահմանափակվում էր տնային տնտեսությամբ և գյուղատնտեսական մթերքների մշակմամբ: Հայոց ընտանեկան համայնքում աշխատանքային փոխհարաբերությունները հստակ կանոնակարգված էին, աշխատանքի բաժանումն արվում էր ըստ սեռային և տարիքային սկզբունքի:¹ Կինը տան ներսի պատն էր, տունը՝ նրա տարածքը, իսկ գլխավոր խնդիրը՝ ընտանիքի, օջախի պահպանությունը, երեխաների խնամքն ու դաստիարակությունը: Խորհրդային շրջանում կանանց զանգվածային ներգրավումը հասարակական աշխատանքային ոլորտ սկսել էր 1930-ական թթ: Կանայք գրավում էին երկրորդական սոցիալական կարգավիճակ մասնագիտական կառույցներում²:

Արդի հասարակությունում, կապված կնոջ սոցիալ-տնտեսական, ընտանեկան կարգավիճակի փոփոխությունների հետ, դիտվում են այլ մի-

¹ Э. Карапетян, Армянская семейная община, Ер., 1958, с. 81-82

² И.И. Чернова, Женщина и работа: мнения россиян и канадцев.-Соц. Исследования, 1999, 12, с. 108.

տումներ, որոնք որոշ կանանց մղում են առաջնահերթ պլան: Տնից դուրս կնոջ աշխատանքը, դրամ վաստակելն ու տնտեսական անկախությունը նրան տալիս են ավելի բարձր սոցիալ-ընտանեկան, տնտեսական կարգավիճակ, փոխում նրա սոցիալական դերը:

Մեր իրականության մեջ դեռևս կանանց զգալի մասը համոզված է, որ իրենց տեղը ընտանիքն է, խոհանոցը, դերը՝ երեխա ունենալն ու դաստիարակելը, ամուսնու հոգսը հոգալը: Ըստ հոգեբանական ուսումնասիրությունների, սոցիալական դերերի հարցում կանայք ավելի նախապաշարված են, նրանց ավանդական կարծրատիպերն ավելի կայուն են, քան տղամարդկանցը³: Ահա ինչու շատ կանայք միտումնավոր հրաժարվում են հասարակական, տնտեսական ակտիվությունից՝ վախենալով չհամապատասխանել կանացիության իդեալին և նվազ չափով կանացի երևալ: Փաստորեն մեր հասարակության մեջ որպես կանացի իդեալի կրողներ շարունակում են մնալ «Աստվածամայր», «Խնամակալ մայր» տիպերը⁴:

Աշխատաշուկայում այսօր գործազուրկների զգալի մասը կանայք են: Առանց աշխատանքի մնացած բարձրագույն կրթությամբ կանայք իրենց կյանքը լիարժեք չեն համարում, քանի որ նրանց համար աշխատանքը բազմագործառությանն նշանակություն ունի: Մի կողմից՝ այն ընտանիքի ֆինանսական աջակցությունն է, մյուս կողմից՝ ինքնարտահայտման միջոց, և «մարդամեջ դուրս գալը», մարդկանց հետ հաղորդակցվելը համարում են անձի կայացման պարտադիր պայման: Գործազուրկ կանանց 60%-ը պատկանում է 30-50 տարիքային խմբին, որոնք աշխատաշուկայում քիչ պահանջարկ ունենալու պատճառով հաճախ վերածվում են մարգինալ խմբերի: Հասարակության մեջ աշխատանքի նկատմամբ հատուկ պաշտամունք կա, անկախ զբաղվածության հանգամանքից, շատ է կարևորվում աշխատանքի սոցիալական արժեքը: Չաշխատող մարդը՝ կին, թե տղամարդ, իրեն «ոչ-ոք» է զգում, համալրելով մերժվածների շահերը: Աշխատող տղամարդկանց մասին սովորաբար ասում են, որ «ընտանիք են պահում», իսկ աշխատող կանանց, մայրերի համար՝ «երեխա են պահում»:

Աշխատող կանանց վարքագծում, որոնք հաջողել են աշխատանք ձեռք բերել և խուսափել գործազուրկի կարգավիճակից, ուշագրավ փոփոխություններ են դիտվում: Նրանց մեծ մասը զբաղված է ցածր վճարվող «կանացի» գործերով (գրասենյակային աշխատանքներ, մեքենագրուհիներ, ներկայումս՝ նաև համակարգչային օպերատորներ, սա ևս զուտ կանացի աշխատանքի համարում ունի, մինչդեռ ծրագրավորողները գրեթե բացառապես տղամարդիկ են, տղաներ): Կնոջ աշխատանք են

³ Ալբերդ Նալչաջյան, Իշխանության կառավարման ոճեր, կանացի ավտորիտարիզմ.- «Համալսարանական կրթությամբ կանայք», 4, 1999, էջ17:

⁴ Ս. Պողոսյան, Կանանց տիպերն ըստ Թոմի Գրանտի.- Հայաստանի աշխատավորուհի, 1997, 5-6, էջ3:

համարվում ուսուցչությունը, բժշկական առաջնահերթ սպասարկումը (բուժքույրություն, գթության քույր, սպասարկման ուղորտ):

Առողջապահության ասպարեզում կանայք գերազանցապես զբաղվում են ավելի ցածր վճարվող և, հետևաբար, ոչ հարգարժան համարվող ծնուղերով (մանկաբուժություն, հոգեբուժություն, սանիտարական սպասարկում), բժշկուհիներն ավելի հաճախ աշխատում են համաբուժարաններում, քան հիվանդանոցներում: Բարձր արհեստավարժություն պահանջող և հեղինակավոր համարվող վիրաբուժության մեջ տղամարդիկ բացահայտորեն գերակշռող են: Տղամարդկային հասարակությունում կանանց աշխատանքն ավելի ցածր է գնահատվում: Կանայք ավելի քիչ են ձգտում նյութական և արհեստավարժ առաջընթացի, կինը լավագույն դեպքում կարող է զբաղեցնել միջին պաշտոն, լինել տեղակալ, գործերի կառավարիչ: Կանանց ամենաբարձր պաշտոնը մանկապարտեզի վարիչն է կամ դպրոցի տնօրենը: Բացառիկ դեպքերում զբաղվում են ձեռներեցությամբ: Իշխանության բարձրագույն ատյաններում կանայք առավելն գրավում են միջին օղակները:

Չայ կանայք աշխատաշուկայում բախվում են մի շարք հիմնախնդիրների՝ աշխատանքի վարձատրման տարբերություններ, սահմանափակումներ աշխատանքի տեղավորվելիս, կարիերայի և մասնագիտական աճման հետ կապված դժվարություններ, խնդիրներ, որոնք լուծված չեն նույնիսկ զարգացած երկրներում⁵:

Մեր հասարակությունում շարունակում են նախընտրել կանանց համեմատաբար համեստ դիրքը: Կանանց ներկայացուցչությունը Հայաստանի օրենսդիր և գործադիր իշխանության կառույցներում ունի հետևյալ պատկերը: Աժ պատգամավորներից միայն չորսն է կին, ՍԴ անդամներից՝ մեկը, I և II ատյանի դատարանների 123 դատավորից՝ 27-ը, մինչդեռ 1919թ. Առաջին Հանրապետության խորհրդարանում կար երեք կին անդամ, 30 երեսփոխան: Ներկայիս կառավարության կազմում ոչ մի կին նախարար չկա, աշխատում է ընդամենը երկու կին փոխնախարար: Միջին օղակի 455 ղեկավարից (պետ, տեղակալ, վարիչ, բաժնի վարիչ, տեղակալ) 77-ն է կին⁶: Կանայք խուսափում են մուտք գործելու, տղամարդկային համարվող ոլորտ, քանի որ նրանց խանգարում է «հատողության վախի» սինդրոմը, երբ կանայք համոզված են, որ աշխատանքային հաջողությունները չեն զուգակցվի անձնական կյանքի կայացմանը: Պաշտպանության նախարարությունում ղեկավար պաշտոններում բացառապես տղամարդիկ են, գիտության, կրթության, մշակույթի բնագավառներում ևս տղամարդիկ կրկին գերակշռում են, թեև կին աշխատակիցները կազմում են շուրջ 50%:

Կին քարտուղարները գործերի կառավարիչներ սանդղակով ավելի դանդաղ են բարձրանում, բայց դրա փոխարեն նրանք ձեռք են բերում

⁵ *Տատյանա ժուրժենկո*, Տնտեսագիտական տեսությունը և ֆեմինիզմը.- Ֆեմինիզմի տեսություն և պատմություն, Եր., 1999, էջ 213:

⁶ Համալսարանական կրթությամբ կանայք, Եր., 14, 1999, էջ 10.

ազդեցիկ պետի հովանավորությունը և որոշակի իշխանությունն աշխատակիցների վրա: Այդ կանայք հիմնականում վահանի դեր են կատարում և պաշտպանում իրենց անմիջական ղեկավարին՝ «շեֆին» այցելուների հոսքից՝ օտարներին անմատչելի ամրոց դարձնելով «սեփական» պետի աշխատասենյակը: Գործերի կառավարիչ քարտուղարուհիների (հիմնական պարտադիր պայման է՝ բարետես արտաքինը, խնամված-հարդարված ներկայանալը) «պոստը» բավական եկամտաբեր է, քանի որ նրանք են կարգավորում մարդկանց մուտքն աշխատասենյակ: Գործազուրկ աղջիկների, կանանց մեջ քիչ տոկոս են կազմում 18-25 տարեկանները (18-22-ը՝ 8.1%, 22-30-ը՝ 21.9%)⁷:

Երիտասարդ, բարձրագույն կրթությամբ և օտար լեզվի տիրապետող, համակարգչային հմտություններ ունեցող աղջիկներն ու կանայք, ոչ առանց ծանոթների հովանավորության, աշխատանքի են տեղավորվում գրասենյակներում, շատ արագ ձեռք բերելով «օֆիսային կերպար»՝ սառը, անհաղորդ դեմք: Ինչպես ընդունված է Արևմուտքում, խուսափում են խոսել աշխատավարձի չափի մասին: Արտասահմանյան գրասենյակներում աշխատող աղջիկների, կանանց դիմահարդարանքը հիմնականում պարզ է (երբեմն՝ անխնամ լինելու աստիճանի), հագուստը՝ գործնական, մարզական: Տեղական գրասենյակներում աշխատողների մեծ մասը (մինչև 30 տարեկան) ունի վառ արտահայտված դիմահարդարանք, կարճ փեշ: Երիտասարդ այս աղջիկները ստանալով տեղական չափանիշներով բարձր աշխատավարձ (սկսած 250-300\$) շատ արագ գերազնահատում են սեփական սոցիալական դերը՝ ձեռք բերելով կամ ցույց տալով սոցիալապես կայացածի կերպար ու վարքագիծ: Տնտեսապես ապահովված լինելը, աշխատանքային փորձի պակասն անտարբեր են դաժնում միջավայրի նկատմամբ: Ոմանք, նույնիսկ բաց հասարակության, քաղաքացիական հասարակության գաղափարներ տարածելու առաքելություն ունեցողները, գերազնահատում են իրենց իրական կարգավիճակը, դերը և դիրքը: 18-25 տարեկան բարետես աղջիկները, կանայք մեր աշխատաշուկայում մեծ վարկ ու պահանջարկ ունեն, ինչին մեծապես նպաստում են համապատասխան բովանդակությամբ գովազդները: Տարիքային այս խումբն անփոխարինելի է համարվում սպասարկման ոլորտում, նրանցից շատերը վարձվում են որպես մատուցողներ, վաճառողներ: Տարիքային ավելի բարձր խումբը (մինչև 45 տարեկան) որպես հավաքարարներ, լվացարարներ աշխատանքի են վերցվում բարերում, ռեստորաններում, խանութներում և այլուր: Մինչդեռ ոչ վաղ անցյալում (խորհրդային շրջանում) այս ոլորտներում աշխատում էին տարեց, վաթսուներկու և անց կանայք: Բարձրագույն կրթությամբ, 40-45 տարեկան կանանց մի խումբ աշխատանքի է անցնում սփյուռքահայերի, արտասահմանցիների և «նոր հայերի» տնե-

⁷ Ըստ այնքան էլ ոչ արժանահավատ վիճակագրական տվյալների՝ կանայք կազմում են գործազուրկների 64,4%.- Հայստանի հանրապետության սոցիալ տնտեսական վիճակը: Եր., 2000, էջ 79-80:

րում, կատարելով տնային ծառայողի, դայակի պարտականություններ: Միջնակարգ-արհեստավարժ և բարձրագույն կրթությամբ կանանց մի մասը զբաղված է մանր առևտրով ու վերավաճառքով:⁸

Մեր հասարակությունում աշխատանքային գործունեության մեջ հաջողություն ձեռք բերած կանանց լավագույն դեպքում որակում են որպես «տղամարդ-կին»: Կին-ղեկավարների մասին այն կարծիքը կա, թե ավելի խիստ են, մանրախնդիր և կպչող: Սկզբնական շրջանում աշխատողները փորձում են շրջանցել ղեկավար-կնոջ առաջարկներն ու հրահանգները, քանի դեռ այդ նույն հրահանգները չեն ստանում տղամարդ-գործընկերոջից: Կին-ղեկավարները, ի տարբերություն տղամարդկանց, գերադասում են համատեղ խմբային վճիռներ կայացնել, որը նպաստում է խմբի համերաշխությանն ու համախմբվածությանը: Որոշ ուսումնասիրողներ⁹ գտնում են, որ կին-ղեկավար ունենալու դեպքում աշխատակից տղամարդն իրեն ճնշված է զգալու ինչպես աշխատանքի վայրում, այնպես էլ տանը՝ չկարողանալով կատարել իր բնական սոցիալական դերը: Ոմանք էլ առաջարկում են կանանց վերադարձնել խոհանոց, որովհետև այնտեղ է նրանց անելիքը: Կարծիք կա, որ դրանով կլուծվի հանրապետության սուղ աշխատատեղերի խնդիրը, կկարգավորվի աշխատաշուկան:

Ամփոփելով նշենք, որ գենդերային գործընթացներն այս ասպարեզում ընթանում են տղամարդկանց և կանանց միջև սոցիալական տարածության կրճատմամբ: Կանանց երիտասարդ տարիքային խմբի աշխատանքն արժեք է, որ մի կողմից՝ կատարում է ընտանիքի ֆինանսական աջակցության խնդիրը, մյուս կողմից ինքնադրսևորման, ինքնարտահայտման միջոց է և տնտեսական կարգավիճակի ապահովում: Աշխատող կանանցից շատերի աշխատանքը վերածվել է ընտանիքը նյութապես ապահովելու միջոցի, որպես գոյատևման ռազմավարության մի ձև:

⁸ Ս. Պողոսյան, Հայ կնոջ իդեալը և սոցիալ-տնտեսական փոփոխությունն անցման շրջանում. Արդի եթնոմշակութային գործընթացները Հայաստանում. Հայ ժողովրդական մշակույթ, IX, զեկուցումների հիմնադրույթներ, Եր., 1997, էջ 33-35:

⁹ Վ. Միրզոյան, Հայոց ընտանեկարության սկզբունքների շուրջ. - Հայ ընտանիքի խնդիրները, Եր., 1996, էջ 21-22: Գեոֆ. Ղենջ, Տղամարդկանց ձևափոխումը, Եր., 2000, էջ 147, 166-169:

ԽՈՒՍԱՓՈՒՄՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՄՈՒՍԱԿԱՆ ՄՏԵՐՄՈՒԹՅՈՒՆԸ
ՔՈՂԱՐԿԵԼՈՒ ՁԵՎ

19-րդ դ. վերջերին - 20-րդի սկզբներին Կովկասի ժողովուրդների մեջ լայն տարածում ուներ ընտանիքի անդամների միջանձնային հարաբերությունները կարգավորող ավանդական բարքերի մի համակարգ, որը հայտնի էր խուսափումների սովորույթ անվամբ: Խուսափումները կիրառվում էին՝ ա) կնոջ և ամուսնու ազգականների, բ) ամուսնու և կնոջ ազգականների, գ) ամուսինների, դ) ծնողների և զավակների միջև:

Խուսափումների սովորույթին անդրադարձել են խորհրդային մի շարք ազգագրագետներ, որոնցից յուրաքանչյուրը յուրովի է մեկնաբանել դրանց ծագումն ու կենցաղավարման պատճառները: Այսպես, Յա. Սմիռնովան և Ա. Պերշիցը դրանք դիտում էին մայրիշխանությունից հայրիշխանությանն անցնելու վերապրուկ¹: Ս.Ա Տոկարևն այդ երևույթը համարում է սոցիոնորմատիվ մշակույթի բաղկացուցիչ մաս՝ որպես ժամանակի չգրված, սակայն օրենքի ուժ ստացած վարվելաձև, որի նպատակը հարգանք, վախ առաջացնելն էր²: Ս.Ա. Հարությունովը նորահարսի խուսափումները բացատրում է հայրատեղային ընտանիքի կառուցվածքով, ուր հարսը, որն իր վրա էր կրում հայրական ընտանիքի պաշտամունքային սրբազան ուժը, հեռու էր պահվում նոր ընտանիքի նախնիների ոգիների հետ շփվելուց և խուսափում էր հատկապես ամուսնու ընտանիքի ավագ անդամներից, որոնց վրա նախնիների սրբազան ուժն առավել չափով էր արտահայտված³: Գ.Ե. Մարկովն այդ ինստիտուտը համարում է աշխատանքի սեռատարիքային բաժանման և սոցիալ-տնտեսական հարաբերությունների ծնունդ⁴: Բ.Խ. Բզաժնոկովը խուսափումները համարում է վարքի սոցիալ-սովորույթային ձև⁵:

Նշված տեսակետներն ամբողջացնում և բացահայտում են խուսափումների ինստիտուտի առաջացման ու կենցաղավարման պատճառները, միաժամանակ դրանք դիտելով որպես ժամանակի ընդունված վարվելակարգ: Սակայն, վերոհիշյալ հեղինակների վերլուծությունները, տարբեր սերունդների ազգագրագետ բանահավաքների, ինչպես նաև Հայաստանի տարբեր պատմազգագրական մարզերից մեր հավաքած դաշտային ազգագրական նյութերի ուսումնասիրությունը թույլ է

¹ Я. С. Смирнова, А.И. Першиц., Избегание: формационная оценка или этнический нейтралитет.- Советская этнография (далее СЭ), 1978, 6, с. 62.

² С. А. Токарев, Избегание и этикет, - СЭ, 1979, 1, с. 72.

³ С. А. Арутюнов, Анализ и оценка избегания, - Там же, с. 54.

⁴ Г.Е. Марков., Обычай избегания и проблема "пережитков", -Там же, с .66.

⁵ Б.Х. Бгажноков, О значении этической позиции ученого в этнографическом изучении, -Там же, с.59.

տալիս ամուսինների խուսափումները դիտարկել մեկ այլ տեսանկյունից ևս, այն է՝ որպես նրանց միջև առկա մտերիմ, սեռական կապերը քողարկելու միջոց: Հենց այս առումով էլ սույն հոդվածում քննարկման առարկա են դարձել խուսափումների այն խմբերը, որոնք առավել ցայտուն են ներկայացնում այդ քողարկումները: Դրանք են՝ ա) ամուսինների փոխադարձ, բ) ծնողների և զավակների խուսափումները:

Հայոց մեջ ամուսինների խուսափումներն սկսվում էին ամուսնության առաջին իսկ օրերից, ինչը բնորոշ դրսևորում է ստացել «ոտնլվայի» ծեսում. «պսակից 3-4 օր անցնելուց հետո հարսը ջուր է տաքացնում և լվանում սկեսրայրի և տեգրերի գլուխներն ու ոտները»⁶: Է.Տ. Կարապետյանը նույնպես հիշատակելով վերոնշյալը, ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ նորահարսը, բացի իր ամուսնուց, լվանում էր տան բոլոր տղամարդկանց ոտքերը⁷: Խ. Սամվելյանը «ոտնլվայի» սովորություն տեսնում է այդ մարդուն կնոջ պատկանելության և վերջինիս կողմից նրա հետ մերձենալու խորհուրդ:⁸ Իսկ այն հանգամանքը, որ նորահարսն ամուսնուց բացի, լվանում էր նրա տղամարդ ազգականների (սկեսրայր, տեգր) ոտքերը, «պարփակված է այն գաղափարը, թե հարսը ոչ միայն իր մարդուն է պատկանում, այլ նրա հորը, եղբայրներին»:⁹ Այդպիսի փաստեր հանդիպում ենք 19-20րդ դդ. ազգագրական նյութերում¹⁰, ինչը բնորոշ է եղել խառնամուսնությունների դարաշրջանին: Ըստ հայոց մեջ ընդունված ընտանեկան բարքերի, «ամուսինների փոխադարձ հարաբերություններն ամոթ է համարվում, որ մեղմ և սիրային լինին»:¹¹ Նրանք տան անդամների ներկայությամբ իրավունք չունեին ուշադրություն ցուցաբերելու միմյանց նկատմամբ և, ինչպես վկայում է Ե. Լալայանը, «ամուսինը դեպի կինն ավելի պակաս հարգանք պետք է ցույց տա, քան դեպի մյուս հարսները, կինը նույնպես ավելի հարգանք է ցույց տալիս դեպի տեգրերը, քան դեպի ամուսինը»:¹² Ի լրումն այս ամենի, բերենք Տավուշում մեր գրառած մի ուշագրավ փաստ ևս՝ նորահարսը, իր ամուսնու հագուստից բացի, լվանում էր տան մյուս տղամարդկանց հագուստները, իսկ ամուսնունը լվանում էր տան հարսներից մեկ ուրիշը:¹³

Խուսափումներն առավել ցայտուն արտահայտվում էին հատկապես նորապսակների հարաբերություններում, ինչը պայմանավորված էր նրանց ամուսնական առաջաստիճանի գտնվելու հանգամանքով և ինչը ոչ

⁶ Ե. Լալայան, Նոր-Քայազետի գավառ կամ Գեղարքունիք.-Ազգագրական հանդես (այսու՝ ԱՀ), գիրք 16, Թիֆլիս, 1907, էջ 29:

⁷ Ջ.Տ. Կարապետյան, Армянская семейная община, Ер., 1958, с. 126:

⁸ Խ. Սամվելյան, Մայրական իրավունքը.-ԱՀ, գիրք 19, Թիֆլիս, 1910, էջ 79:

⁹ Անդ:

¹⁰ Դաշտային ազգագրական նյութեր (այսու՝ ԴԱՆ), Լոռի, 1983, տետր 6, էջ 12:

¹¹ Ե. Լալայան, Սիսիան.-ԱՀ, գ. 1, Թիֆլիս, 1898, էջ 235:

¹² Անդ:

¹³ Ա. Սարգսյան, ԴԱՆ, Տավուշ, 1978, տետր 2, էջ 25:

միայն ենթագիտակցաբար, այլ փաստացի գիտեին շրջապատում: Այդ էր պատճառը, որ քառասունքից մինչև առաջին երեխայի ծնունդը նորապսակներն անմաքուր էին համարվում, որովհետև այդ ընթացքում նրանք ադամական մեղքը կրողներն էին: Հետևաբար, փոխադարձ խուսափումներից մինչև անգամ իրար հանդեպ կոպտության հասնող վերաբերմունքով՝ նրանք ջանում էին իրենցից «շեղել» տան անդամների ուշադրությունը: Խուսափումների մյուս ձևերից էին միմյանց ձեռք չբռնելը, իրար կողքով չքայլելը՝ ամուսինը միշտ առջևից էր քայլում, կինը՝ ետևից և այլն:

Ամուսինների խուսափումների նման զուգահեռների և ավելի խիստ օրինակների կարելի է հանդիպել Հյուսիսային Կովկասի ժողովուրդների բարքերում, ինչը Յա. Սմիռնովային թույլ է տվել ասելու, որ այդ սովորույթը ծագել է հենց այնտեղ, հատկապես աղոյների ու կաբարդինների մեջ, որոնցից էլ անցել է տարածաշրջանի մյուս ժողովուրդներին:¹⁴

Այսպես, օսերի մեջ, անգամ ցերեկվա ժամերին, ամուսիններին արգելվում էր գտնվել տան նույն մասում, նրանք իրավունք չունեին միասին հյուր գնալ, երևալ գյուղի փողոցներում, նրանց միասին տեսնելն ամոթ և անպատվություն էր համարվում:¹⁵

Ինչպես տեսնում ենք, այսպիսի արտաքին անտարբերության քողի տակ ամուսիններն աշխատում էին «թաքցնել» սեռական հարաբերությունների առկայությունն իրենց միջև, ինչն էլ հենց խուսափումների իմաստիտուտի դրդապատճառներից էր նշված ժողովուրդների մեջ: Որ հենց սեռական կապը թաքցնելու խորհուրդն էր ընկած խուսափումների հիմքում, առավել բացահայտորեն երևում է ծնողների և զավակների խուսափումների բազմաթիվ օրինակներից, որոնք արտահայտվում էին այն բանում, որ երեխայի ծնվելու օրվանից մինչև մի քանի տարեկան դառնալը, հայրն ու մայրն ամոթ էին համարում ցույց տալ, թե իրենք վերջինիս ծնողներն են: Ե. Լալայանը վկայում է, որ «ամոթի քողը պատռած կլինեի եղբայրներեն կամ ամուսնացած որդիներեն մեկը, եթե տան սպիտակ մորուքի ներկայությամբ որդին գիրկն առնե և մեծավորի առաջ կանգնի»:¹⁶ Ջանգեգուրում «մայրն իր պատրոնին՝ սկեսրայրին, նույնիսկ իր հորը տեսնելուն պես երեխային գրկիցը վայր էր դնում, կարծես իրանը չէր: Երեխայի հայրն էլ իր հոր տուն մտնելը տեսնելուն պես դադարում էր իր երեխային ծնկան վրա նստեցրած խաղացնել և անմիջապես իջեցնում էր նրան, կարծես թե իրանը չէր»:¹⁷ Երեխային հոգ տանելու արգելքն այն աստիճան ծայրահեղության էր հասնում, որ մայրն իրավունք չունեի մոտենալ և կերակրել օրորոցում լաց լինող

¹⁴ Я. С. Смирнова, Некоторые количественные показатели отхода от обычаев избегания у кабардинцев и балкарцев, - СЭ, 1977, 2, с. 77:

¹⁵ Я. С. Смирнова, Семья и семейная община народов Северного Кавказа, М., 1983, с.38:

¹⁶ Ե. Լալայան, Ջավախք.-ԱԶ, գ. Ա, Շուշի, 1896, էջ 276:

¹⁷ Ստ. Լիսիցյան, Ջանգեգուրի հայերը, Եր., 1969, էջ 218:

երեխային, մինչև սկեսուրը չթույլատրեր, այլապես խիստ հանդիմանանքի կարժանանար:¹⁸

Ծնողների և որդիների, ինչպես նաև ամուսինների փոխադարձ խուսափումները դարձյալ առավել խիստ էր արտահայտված հյուսիսկովկասյան ժողովուրդների կենցաղում:¹⁹ Յա. Սմիռնովան վկայում է, որ նրանց մեջ երեխային գրկած ժամանակ եթե տան մեծերից որևէ մեկը ներս էր մտնում, ծնողներն իսկույն գցում էին նրան որտեղ պատահեր:²⁰ Ծնողների կողմից նման վերաբերմունք հիշատակում է նաև Ա. Ավդալն Անդրկովկասի քրդերի կենցաղից:²¹ Ինչո՞վ էր բացատրվում այսպիսի վարվելակարգը: Ե՛վ հայերի, և՛ հիշատակված ժողովուրդների սովորութային իրավունքը խուսափումների այս խումբը պատճառաբանում է մեկ բացատրությամբ, այն է՝ ամոթ: Իսկ ինչու՞ էր ամոթ, ինչու՞ էին ծնողներն այլոց ներկայությամբ խուսափում իրենց մանկահասակ երեխաներին գուրգուրելուց: Ստ. Լխիցյանն այդ երևույթին տալիս է հետևյալ շատ բնորոշ մեկնաբանությունը. «թե՛ կինը և՛ թե՛ տղամարդն ամոթ էին համարում և խույս էին տալիս ցույց տալու, թե իրենք ունեցել են սեռական մերձեցում, որի հետևանքն ու կոնկրետ ապացույցն է ծնված երեխան»:²² Առավել համոզիչ բացատրություն հոգուտ վերն ասված դրույթի հնարավոր էլ չէր պատկերացնել: Վերոհիշյալի օգտին է վկայում նաև ամուսինների խուսափումների մեկ այլ խումբ ևս՝ միմյանց անունները տալու ծիսարգելքը, որը շարունակվում էր ողջ ամուսնական կյանքի ընթացքում:

Այսպես. իրար դիմելիս ամուսիններն ուշադրություն էին հրավիրում «տո», «էհե՛յ», «ա՛», «էհի՛», «քեզ հետ եմ», «ախչի» արտահայտություններով:²³ Ուրիշների հետ ամուսնու մասին խոսելիս կինն արտահայտվում էր այլաբանորեն, ինչպես՝ «մեր հայը, Առաքելիս ապերը»,²⁴ «ինքը», «Արուսիկնի տղեն», «մեր մարդը», «մեր հայը»,²⁵ իսկ ամուսինը՝ «մեր հարսը», «մեր խիզանը, մեր տանըցին»,²⁶ «Սուրբաթի ախչիկը»²⁷ և այլն: Ինչպես տեսնում ենք, ամուսնու կամ կնոջ մասին հոգնակի կերպով արտահայտվելու այս ձևերից, ամուսինները դարձյալ խուսափում էին ցույց տալու, թե իրենք որևէ առնչություն ունեն միմյանց հետ: Այսպիսով, Կովկասի, աշխարհի շատ ժողովուրդների, ինչպես նաև հայոց մեջ ընդունված ամուսինների, ծնողների և երեխաների խուսափումների գրեթե նույնատիպ կիրարկման օրինակները թույլ են տալիս

¹⁸ *Բենսե*, Բուլանդիս կամ Զարք գավառ.-ԱԳ, գ. Ե, Թիֆլիս, 1899, էջ 146:

¹⁹ Народы Кавказа, т. I, М., 1960, т. II, М., 1962:

²⁰ Я. С. Смирнова, указ. раб., с. 38:

²¹ Ա. Ավդալ, Անդրկովկասյան քրդերի կենցաղը, Եր., 1958, էջ 37:

²² Ստ. Լխիցյան, անդ., էջ 218:

²³ Ա. Սարգսյան, ԴԱՆ, Տավուշ, 1978, տետր 1, էջ 70:

²⁴ Ե. Լալայան, Սիսիան, էջ 236:

²⁵ Ե. Լալայան, Վարանդա,-ԱԳ, գիրք Բ, Թիֆլիս, 1897, էջ 155:

²⁶ Ե. Լալայան, Սիսիան, էջ 236:

²⁷ Ա. Սարգսյան, ԴԱՆ, Լոռի, 1983, տետր 6, էջ 25:

պնդելու, որ դրանք ունեին ընդհանուր դրդապատճառ և հետապնդում էին ամուսինների միջև առկա մտերիմ կապերը քողարկելու նպատակ:

Իսկ ինչո՞վ է բացատրվում, որ նորահարսն ու նորափեսան չէին տալիս նաև միմյանց ազգականների անունները, կինը՝ ամուսնու, ամուսինը՝ կնոջ: Ըստ իս, դա պայմանավորված էր այն բանով, որ վերջիններս իրենցից տարեց էին և անհարգալից կլինեին նրանց անուններով դիմելը (փոքրահասակների անունները տալիս էին): Ուշադրության արժանի է հատկապես նաև այն, որ հարսի համար թաբու էր սկեսրայրի և տեգրերի, իսկ փեսայի համար՝ զոքանչի և քենիների անունները, ինչը վաղեմի ամուսնական կապերի վերապրուկի վկայություներ են վերջիններիս միջև և ինչը վկայում են 19-րդ դարավերջին-20-րդ դարասկզբին դեռևս նախնադարյան կենցաղով ապրող ժողովուրդների համապատասխան նյութերը:²⁸

Ինչ վերաբերում է անունների ծիսարգելքին ընդհանրապես, ամուսնու խուսափումներին կնոջ ազգականների հետ և հակառակը, չխոսկանության սովորույթին (տե՛ս Ա. Սարգսյան),²⁹ առօրյա և ծիսական հացկերությամբ կիրառվող խուսափումներին, ապա դրանց քննարկումը մեկ այլ հաղորդման թեմա է:

Այսպիսով, բերված օրինակները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ 19-րդ դ. վերջերին - 20-րդ դ. սկզբներին հայերի մեջ կենցաղավարող ամուսինների խուսափումների սովորույթը լինելով ժամանակի ընդունված վարվելակարգ, միաժամանակ նրանց մտերմիկ կապերը քողարկելու միջոց էր: Դրանք արտահայտում էին նաև հնագույն ժամանակներում կնոջ՝ ամուսնու ազգականների և ամուսնու՝ կնոջ ազգականների հետ ունեցած սեռական կապերի խորհուրդը, ինչն առանձնապես առկա է հարս-սկեսրայր, հարս-քավոր, փեսա-զոքանչ հարաբերություններում, որը, նույնպես քննարկման այլ նյութ է:

Գերդաստանների վերացման հետ միաժամանակ, կենցաղավարման անհրաժեշտ հող չունենալով, աստիճանաբար դուրս մղվեցին շատ ավանդույթներ, ըստ այդմ՝ նաև խուսափումները: Ինչ վերաբերում է դրանց գոյությանն այսօր, պետք է ասել, որ խուսափումների մի խումբ, ինչպես, օրինակ՝ փոխադարձաբար անուններ չտալու, միմյանց մասին հոգնակի արտահայտվելու, միմյանց հանդեպ հոգատարությունը քողարկելու ամուսինների սովորույթներին, ապա դրանք, որպես վերապրուկ շարունակում են պահպանվել բնակչության 60-ից բարձր տարիքային խմբերում (մանավանդ գյուղաբնակների մեջ): Մինչդեռ, երիտասարդ զույգերը ոչ միայն լիովին հեռացել են ավանդական բարքերից, այլ, ընդհակառակը, առանց կաշկանդվելու ընդգծում են իրենց ամուսիններ լինելու հանգամանքը, ինչը ոչ միայն ժամանակի,

²⁸ Փ. Рамцель, Народоведение, т.1, СПб., 1902, 2. *Ֆրեգեր*, Ոսկե ճյուղը, Եր., 1989:

²⁹ Ա. Սարգսյան, Զխոսկանության սովորույթը հայոց մեջ. - Երիտասարդ գիտնականների 7-րդ կոնֆերանս, զեկուցումների թեզիսներ, Եր., 1986., էջ 29:

այլև այլ բարքերի ազդեցության հետևանք է, որի քննարկումը, սակայն, դուրս է սույն հաղորդման շրջանակներից:

*Արմենուհի Ստեփանյան
ՅԱԻ*

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԻ ԵՆԹԱԵՆՈՒԿ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԴՐՍԵ- ՎՈՐՈՒՄՆԵՐՆ ԱՄՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՊԵՐՈՒՄ

Սփյուռքի գաղթօջախներում այլեթնիկ միջավայրում ապրող հայն օժտված էր էթնիկ ինքնագիտակցությամբ, ինչին խորապես նպաստում էին ազգապահպանման գործին լծված մշակութային հիմնարկները, ինչպես նաև եկեղեցին:

Հայրենադարձության նախաշեմին, իր բոլոր փուլերում և հատկապես 1946-1948 թթ. մեծազանգված ներգաղթի նախօրեին, ողջ Սփյուռքը, բռնկված հայրենասիրության ոգով, առաջնորդվելով «մեկ ազգ», «մեկ հայրենիք»¹ կարգախոսով՝ միաձուլվելու, մեկտեղվելու, նաև Հայաստանում ընտանիք կազմելով՝ «բոլորովին հայ ըլլալու» երազանքն ուներ:

Սակայն հայրենի հողի վրա ոտք դնելուց ամնիջապես հետո ներգաղթած և տեղացի խմբերում փոխընկալման խոչընդոտներ հանդես եկան, որոնք պայմանավորված էին մշակութակենցաղային, լեզվական, մտածելակերպի, հոգեբանական և այլ բնույթի տարբերություններով: Ինչպես նշում է տարեց մի հայրենադարձ, «կփորձեինք մեր երազած հայրենիքի կարգ ու սարքին, սովորություններուն, մեզի խորթ առօրյային, կյանքի ընթացքին և լեզվական կառույցին հարմարվել»²: Ստեղծված իրավիճակը նպաստեց հայրենադարձների օտարացմանը՝ ենթաէթնիկ առանձնացմանը, որի ձևավորման գործընթացը սկսվել էր դեռևս 1920-ականներից, ավարտական փուլին հասնելով 1940-ականների Մեծ Ներգաղթից հետո:

Տեղացիների և հայրենադարձների միջև անջրպետի խորացմանը նպաստեց նաև ի վերուստ սերմանված ընդհանուր անհանդուրժողականության մթնոլորտը, երբ վերջիններս համարվում էին «անվստահելի»՝ բառի լայն առումով, դրանից բխող բոլոր աղետալի հետևանքներով: Այս պարագան իր հերթին հիմք հանդիսացավ ենթաէթնիկ ինքնագիտակ-

¹ *Գաղմիկ Սվազյան*, Ո՞ր օրվան կսպասենք. «Արև» օրաթերթ, Գահիրե, 1932, դեկտեմբերի 16-ի համարում: Հոդվածը վերատպվել է «Հայրենիքիս համար» գրքույկում (կազմող և խմբագիր՝ Վ.Սվազյան), Եր., 1965, էջ 20-25:

² *Ա.Ստեփանյան*, Դաշտային ազգագրական նյութեր (այսու՝ ԴԱՆ), 1974, Եր., ասացող՝ բուլղարահայ Սիրարփի Ֆիդանյան, 1946թ., ներգաղթած:

ցության ձևավորմանը՝ հայ, բայց ոչ հայաստանցի, «օտար իր հայրենիքում, հարազատ ժողովրդի ներսում»³:

Ձևավորված ենթաէթնիկ ինքնագիտակցությունը բազմազան դրսևորումներ ու անդրադարձումներ ունեցավ փոխադարձ շփումներում, մեծապես խոչընդոտելով կենցաղամշակութային փոխներթափանցմանը և հիմք ծառայելով յուրօրինակ բարոյական օրենսդրությանը կենցաղում, որին հայրենադարձներն աշխատում էին խստորեն հետևել հատկապես ամուսնական-ընտանեկան հարաբերություններում:

Նրանք, ովքեր դեռևս Սփյուռքում երազում էին հայաստանցու հետ ամուսնացնել իրենց զավակին, խուսափելով օտարի հետ ընտանիք կազմելու հեռանկարից, ստեղծված իրավիճակում, դեմ առ դեմ հանդիպելով իրենց միանգամայն անհասկանալի օտարոտի, արհամարհական, որոշ դեպքերում՝ նաև թշնամական վերաբերմունքի, տրամագծորեն փոխում են դիրքորոշումը, կտրականապես մերժելով և բացարձակորեն անհնար համարելով նման կապերը: «Մենք տեղացիի աղջիկ տվողը չենք» ասելով, միաժամանակ տեղացիներին բնութագրում էին իբրև «կոշտ-կոպիտ, վայրենի»: Քանի որ խորթացումը երկկողմանի էր, ապա տեղացիներն էլ իրենց հերթին էին խուսափում նման կապերից, հայրենադարձներին բնորոշելով իբրև «սև ջուր (սուրճ) խմողներ» կամ «հում միս (բաստուրմա) ուտողներ»⁴: Այս մտածելակերպով էր պայմանավորված ներէթնիկ խմբում ներտոհմ (էնդոգամ) ամուսնական կապեր հաստատելու ձգտումը:

Ասվածից, ինչ խոսք, չի հետևում, թե խառնամուսնությունները բացառվում էին: Անշուշտ, տեղացիների և հայրենադարձների միջև ամուսնական կապեր հաստատվում էին, սակայն յուրաքանչյուր առանձին դեպքում, երբ հայրենադարձի զավակը ցանկություն էր հայտնում տեղացի աղջկա հետ ամուսնանալու, դա ընտանեկան վեճերի և անարխորժությունների տեղիք էր տալիս: Նման ընտրություն կատարած երիտասարդի ընտանիքը մեծ մասամբ չէր ընդունում և չէր ուզում ճանաչել տեղացի հարսին, ինչն իր հերթին բացառում էր ընտանիքների միջև խնամիական փոխհարաբերությունների կայացումն ու կարգավորումը:

Ինչ վերաբերվում է հայրենադարձ, մասամբ և տեղացի աղջիկներին, ապա նրանք գրեթե լիովին հնազանդ էին ծնողների կամքին, ի տարբերություն տղաների, որոնք համեմատաբար ազատ էին ընտրության հարցում, հետևաբար ամուսնանում էին ենթաէթնիկ խմբի ներսում:

Ամուսնական հարաբերությունների վերը քննարկվող սահմանափակումները գործում էին և տարբեր երկրներից եկած հայրենադարձների խմբերի միջև, որոնք ունեին կենցաղամշակութային շեշտված տարբերություններ: Այսպես՝ ֆրանսահայերը գերադասում էին ամուսնական

³ Մովսես Բազարյան, Նամակներ սովետական դրախտից, Եր., 1997, էջ 12:

⁴ Ա.Ստեփանյան, ՂԱՆ, Եր., 1977, ասացող Արշալույս Ղաֆեջյան, ռումինահայ, 1948, ներգաղթած:

կապեր հաստատել իրենց խմբի ներսում կամ բալկանահայերի հետ: Կենցաղով ու սովորույթներով իրար ավելի մոտ ռումինահայերն ու բուլղարահայերն առավելությունը տալիս էին միմյանց կամ ֆրանսահայերին՝ խուսափելով Սիրիայից ու Լիբանանից եկած հայերից, քանի որ նրանք «հայերեն չէին խոսեր»: Իրանահայերի խումբն այս և այլ առումներով մնում էր լրիվ մեկուսացած, քանի որ նրանք արևմտահայ չէին, բայց և օտար էին տեղացիներին:

Սա նշանակում է նաև, որ հայրենադարձների ենթաէթնիկ խումբը միատարր չէր և բաժանվում էր ավելի փոքր միավորների, որոնց մեջ նույնպես ձևավորված էր ենթաներէթնիկ ինքնագիտակցություն, ինչն իր հերթին անդրադառնում էր միմյանց հետ ունեցած փոխհարաբերությունների վրա:

Հայրենադարձների դիրքորոշումը տեղացիների հետ ունեցած ամուսնական կապերի հարցում կարճընթաց փոփոխություն կրեց այն ժամանակամիջոցում (1949-50-ական թթ.), երբ նրանք համարվեցին «անվստահելի» և ծայր առան քաղաքական հետապնդումները: Այդ ընթացքում շատերը փորձում էին տեղացու հետ ամուսնանալ, հուսալով ինչ-որ կերպ ազատվել «անվստահելություն» որակումից և գեթ մասամբ խուսափելու հալածանքներից:

Ինչ վերաբերում է խառնամուսանական ընտանիքներին, ապա բնութագրական է, որ նման դեպքերում ձևավորվում էր անհատի ենթաէթնիկ ինքնագիտակցություն: Կինը կամ տղամարդը դառնալով երկակի (հայրենադարձի և տեղացու) մշակույթի կրող, միաժամանակ նաև՝ իր սեփական ենթաէթնիկ մշակույթի կրողն ու պահպանողն է:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ խառնամուսնական ընտանիքներում ծնված երեխաների կողմնորոշումը սովորաբար դեպի տեղացի ծնողն է, քանի որ տան պատերից դուրս, հասակակիցների միջավայրում, որպես հայրենադարձի զավակ նա կարող էր օտարվել, արհամարհվել, ծանակվել՝ «ախպարի ճուտ» որակումով:

Հետագա տարիներին, հայրենադարձների վարկանիշի փոփոխման հետ միաժամանակ, երկուստեք փոփոխություն է կրում և դիրքորոշումն ամուսնության հարցում:

Հետիստունականներին ծնված, ամուսնության տարիքի նոր սերունդն արդեն ձերբազատված է այդ բարդույթից:

Հայրենադարձների վարկանիշի բարձրացման հետ մեկտեղ փոփոխություն է կրում և հետագա տարիների հայրենադարձների ենթաէթնիկ ինքնագիտակցությունը:

Հարկ է նշել, սակայն, որ մեր օրերում Հայաստանից մեկնած հայերն աշխատում են ամուսնական կապեր հաստատել իրենց՝ հայաստանցիների ենթաէթնիկ խմբում, մինչդեռ՝ սփյուռքահայերը չեն առարկում հայաստանցիների հետ նման կապերի հաստատմանը:

ՄԱՆԿԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ Մ.Թ.Ա. II-I
ՀԱՋԱՐԱՄՅԱԿՆԵՐԻ ԽՄԲԱՅԻՆ ԹԱՂՈՒՄՆԵՐՈՒՄ

Վերջին երկու տասնամյակներում Սևանի ավազանում (Նորատուս, Գավառ, Մոթբի ձոր, Ներքին Գետաշեն, Վերին Գետաշեն, Քանազեղ, Գեղիովիտ) կատարված հնագիտական աշխատանքները ի հայտ են բերել Միջին բրոնզի – Վաղ երկաթի շրջափուլերին վերաբերող, միաժամանակյա ակտով արված խմբային թաղումներով դամբարանային անխաթար համալիրներ,¹ որոնցից ստացված փաստացի տեղեկատվության համակողմանի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում մի շարք վերակազմություններ անել Հայկական լեռնաշխարհի այս հատվածի (Սյունիք աշխարհի Գեղարքունիք գավառ) մ.թ.ա. II-I հազարամյակների պատմամշակութային և էթնոսոցիալական գործընթացների, ծիսապաշտամունքային արարողությունների և հոգևոր ընկալումների ոլորտում:

Խնդրո առարկա խմբային թաղումներով դամբարանները բազալտե քարաբեկորներից կազմված, արևելք-արևմուտք կամ հյուսիս-հարավ կողմնորոշմամբ, 3-10 հսկայական ծածկասալերով հիմնահողային կամ քարարկղային կառույցներ են, որոնցից յուրաքանչյուրի հատակին, առանձնացված տեղամասում (կենտրոնում, արևելյան, արևմտյան, հյուսիսային կամ հարավային հատվածում) գետեղվել է աջ կողքին կծկված վիճակում պառկած կամ նստած տարեց (40 տարեկանից բարձր) տղամարդու դի, իսկ դամբարանախցի մյուս հատվածում՝ նրան ուղեկցող անձնակազմ: Ըստ որում, վերջիններիս մարմինների և՛ դասավորությունը, և՛ սեռա-տարիքային կազմը, ամեն առանձին դեպքում որոշակի և ինքնուրույն համաչափություն ունի:

¹ *Ա.Փիլիպոսյան*, Հետախուզական պեղումներ «Մոթբի ձոր» դամբարանադաշտում. - Հայաստանի Հանրապետությունում հնագիտական հետազոտությունների արդյունքների նվիրված գիտական նստաշրջան, գեկ. թեզ., Եր., 1991, էջ 29-31: *Ա.Փիլիպոսյան*, *Վ.Հովհաննիսյան*, Պեղումներ Ներքին Գետաշեն գյուղում, Անդ, էջ 33-35: *Ա.Փիլիպոսյան*, *Լ.Խաչատրյան*, Գեղիովտի վանտոսայան վիմափոր դամբարանը. - Հայաստանի հնագիտական հուշարձաններ, դ. 16, Եր. 1995, էջ 80-91: *Ա.Փիլիպոսյան*, *Ռ.Մկրտչյան*, Գեղիովտի վանտոսայան (ուրարտական) քարայր-դամբարանը. - Հայաստանի հնագիտական հուշարձաններ, դ. 18, Եր., 2001: *А.Пилипосян, Р.Мкртчян*, Историко-антропологический анализ коллективных погребений некрополя Неркин Геташен. - Археология Кавказа: новейшие открытия и перспективы, тез. докл., Тбилиси, 1997, с. 103-105; *А.Пилипосян, Р.Мкртчян*, Моги́льник Мртби Азор. - Археологическая конференция Кавказа I, тез. докл., Тбилиси, 1998, с. 101-103.

Այս դամբարաններում, սովորաբար, դամբարանախուց իջեցված գույքակազմի հիմնական մասը (զենքեր, խեցանոթներ, աշխատանքային գործիքներ, իշխանության խորհրդանշաններ, պերճանքի առարկաներ և այլն) ու զոհաբերած կենդանիների մնացորդները դրված են նշված տղամարդու մոտ: Թաղման համախմբի տրամաբանական դասավորվածությունը, պեղածո նյութերի անխաթար վիճակը, գույքակազմի որակի, չափի, ձևի, պատրաստման և նախշազարդման մանրամասների ընդհանրությունը վկայում են դամբարանախցի հատակին միաժամանակյա թաղման մասին, իսկ հանգուցյալների կմախքների հիերարխիկ դասավորվածությունը թույլ է տալիս ենթադրելու, որ այստեղ գործ ունենք տվյալ հասարակության մեջ որոշակի դիրք ու կարգավիճակ ունեցած տարեց տղամարդու և նրա ստորադասների թաղման արարողության հետ:² Բննարկվող դամբարաններից յուրաքանչյուրում հայտնաբերված մարդաբանական նյութերի ներխմբային ուսումնասիրությունը ցույց է տալիս որոշակի ձևաբանական համասեռություն և մատնանշում ազգակցական մերձավոր կապ: Այս ամենը թույլ է տալիս եզրակացնելու, որ վերոհիշյալ յուրաքանչյուր դեպքում առկա է ազգակցական-արենակցական կապերի առումով միմյանց մերձ և սեռա-տարիքային որոշակի համամասնությամբ ընտրված անձանց խումբ, որի յուրաքանչյուր անդամը որպես թաղման քննարկվող արարողակարգի վաղօրոք ընտրված մասնակից և անդրաշխարհի արդեն կանխորոշված ուղեկից-զոհ, բռնությամբ (կամ ինքնակամ) սպանվել ու դամբարանախուց է իջեցվել սոցիալական բարձր դիրք ունեցող տղամարդու՝ գերդաստանի մեծի, մահվան առթիվ: Մեր նախորդ հրապարակումներում նման բարձր կարգավիճակ ունեցող տարեց տղամարդկանց արդեն որակել ենք «նահապետ» եզրույթով: Վերջինս կազմված է «նահա-» (հնդիրանական «nafā-», «nafō-»՝ «պորտ, ցեղ») և «-պետ» (հնդեվրոպական «photi», «pet», «pat»՝ «պետ, ցեղ») և «-պետ» (հնդեվրոպական «photi», «pet», «pat»՝ «պետ, ցեղ») և «-պետ» (հնդեվրոպական «photi», «pet», «pat»՝ «պետ, ցեղ») և «-պետ» (հնդեվրոպական «photi», «pet», «pat»՝ «պետ, ցեղ») արմատներից,³ բառացիորեն՝ «ցեղի սկիզբ, պորտի սկիզբ, տոհմի տեր, ցեղի հայր» իմաստային ծանրաբեռնվածությունն է կրել և, ըստ այդմ էլ, առավել ամբողջական է ներկայացնում խմբային թաղումների տարեց տիրոջ բարձր դիրքն ու գերդաստանի մեծի կարգավիճակը:

Հայաստանի (մասնավորապես Գեղարքունիքի մարզի) Միջին բրոնզի – Վաղ երկաթի շրջափուլերի միաժամանակյա ակտով խմբային թաղումների այս վերակազմությունը, առասպելաբանական սկզբնաղբյուրների համատեքստում կարող է համադրվել ու մեկնաբանվել

² Ա.Փիլիպոսյան, Ռ.Սկրտչյան, Նահապետի ֆեոմենն ըստ հնագիտական և մարդաբանական տվյալների - Հին Հայաստանի մշակույթը, XI, Հանրապետական գիտական նստաշրջան, զեկ. թեզ., Եր., 1998, էջ 66-67:

³ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Եր., 1977, էջ 420-421:

հայկական (Արտաշես թագավորի թաղումը),⁴ հնդկական (Պուռուշասուկտային),⁵ հունական (Աքիլլեսի և Պատրոկլոսի թաղումները),⁶ սկյութական (զոհաբերություններ Արես աստծուն և սկյութական արքայի թաղման արարողությունը),⁷ հռոմեական (Դիոնիսոսին),⁸ սկանդինավյան (Օդինին),⁹ գերմանական (Նաննային)¹⁰ և այլ ժողովուրդների ավանդություններում հանդիպող մարդկային զոհաբերությունների նկարագրությամբ:

Նույն համատեքստում տեղին է անդրադառնալ նաև նահապետի հետ միևնույն դամբանախուցն իջեցված ուղեկից-զոհերի ազգակցական-սոցիալական կարգավիճակն իմաստաբանորեն ճիշտ ներկայացնող եզրույթի սահմանմանը: Այս առումով, մեր կարծիքով, նպատակահարմար է «նահատակ» եզրույթի կիրառումը: Այն ևս կազմված է հնդիրանական «nafā-», «nafō-»՝ «պորտ, ցեղ» և «tak», «tag»՝ «ցածր, վերջին, ստորին, տակ» բառարմատներից¹¹ և, ըստ այդմ էլ, հնում նախապես նշանակել է «ցեղի ստորադաս անդամ, ցածրածին, ստորածին, աղախնածին, հարճորդի, ընդոծին, ցածր կարգավիճակ ունեցող արյունակից-ցեղակից»: Սրանք, ըստ ամենայնի, տոհմի նահապետի և նրա աղախինների կապից ծնված այն երեխաներն էին՝ ընդոծիները, որոնց մի մասը հայր-տիրոջ մահվան դեպքում, խմբային թաղման արարողակարգի համաձայն, ուղեկից-զոհերի՝ նահատակների դերն է ստանձնել:¹² Հարյուրամյակներ շարունակ կիրառված հնամենի այս սովորույթը, ինչպես նաև ժողովրդի հիշողության մեջ ու բանավոր զրույցներում պահպանված դրա արձագանքներն են թերևս պատճառը, որ հետագա շրջանի հայերենում (անշուշտ նաև քրիստոնեական գաղափարախոսության ազդեցության շնորհիվ) «նահատակ» բառը վերափոխատավորվել է «սուրբ գործի համար զոհված մարդ» հասկացության և հոմանիշ դարձել «մարտիրոս» եզրույթին:

⁴ Սովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Եր., 1981, էջ 203-205:

⁵ М.Элиаде, Священные тексты народов мира, М., 1998, с. 222, текст N 101.

⁶ Р.Грейвс, Мифы Древней Греции, М., 1992, с. 520-521.

⁷ Հերոդոտոս, Պատմություն, ինը գրքից, Եր., 1986, էջ 241:

⁸ Р.Грейвс, указ. раб., с. 185, примечание 5.

⁹ Словарь Мифов (под ред. П.Бентли), М., 1997, с. 230-232.

¹⁰ Там же, с. 212.

¹¹ Հր. Աճառյան, անդ. հ. 4, Եր., 1979, էջ 360-361:

¹² Այն, որ «նահատակ» բառը հայերենում նախապես ունեցել է «ցածր կարգավիճակ ունեցող արյունակից-ցեղակից» իմաստը, մեր կարծիքով, մատնանշում է հայերեն մեկ այլ բառարմատ՝ «հպատակ»-ը: Վերջինս բաղկացած է «հուպ-» և «-տակ» արմատներից, որոնցից առաջինը ծագում է հնդեվրոպական «sub-»՝ «մոտ, մերձ, քով», իսկ երկրորդը՝ հնդիրանական «tak, tag»՝ «ցածր, վերջին, ստորին, տակ» արմատներից և բառացիորեն նշանակել է «հատակին մոտ, ցածրամերձ, ցածրակարգ, ստորակարգ»: Սրանք հավանաբար նահապետի այն ստորադասներն էին, որ նահատակների կարգավիճակն ունենալով հանդերձ, արենակցական կապի մեջ չէին տիրոջ հետ և, ըստ ամենայնի, այդ իրավիճակում էին հայտնվել գերության, պատանդության, ստրկավաճառության և նմանատիպ այլ գործողությունների հետևանքով:

Վերոհիշյալ խմբային թաղումներում նահապետին ուղեկցող նահատակների սեռա-տարիքային առանձնահատկությունները քննելիս աչքի է զարնում մի ուշագրավ հանգամանք ևս: Բանն այն է, որ գրեթե բոլոր դեպքերում, նահապետին ուղեկցողների մեջ հանդիպում են նաև բռնությամբ սպանված նորածիններ, երեխաներ և պատանիներ:

Այսպես՝ մ.թ.ա. XVI դ. թվագրվող Ներքին Գետաշենի թիվ 21 միջինբրոնզիդարյան դամբարանում մինչև 6 ամսական և 1,5 – 2 տարեկան երկու երեխայի ներքին ծնոտները տեղադրվել են մոտ 50 տարեկան նահապետի ոտքերի տակ՝ զոհաբերված կենդանիների (գառնուկ, լոր, կզաքիս, աղվես, ցուլ) ոսկորների հետ միասին:¹³

Մ.թ.ա. XV-XIV դդ. թվագրվող Քանազեղի թիվ 3 ուշբրոնզիդարյան դամբարանի թիվ 2 դամբանախցում բացված խմբային թաղման մեջ, 60 տարեկանից բարձր նահապետին ուղեկցող և դամբանախցի արևմտյան հատվածում երեք շարքով իրար վրա թաղված ուղեկիցների մեջ, յուրաքանչյուր շարքում, առկա են 5-6 տարեկան երեխայի մեկական գանգ և կմախքի մնացորդներ, իսկ անմիջապես նահապետի ոտքերի տակ՝ ևս 5-6 տարեկան երեխա:

Մ.թ.ա. XIV-XIII դդ. թվագրվող Ներքին Գետաշենի թիվ 20 ուշբրոնզիդարյան դամբարանի ստորին թաղման մեջ ևս 60-65 տարեկան տղամարդու ուղեկիցների մեջ, կզաքիսի և կրիայի ոսկորների հետ միասին, խառնիխուռն վիճակում, հայտնաբերվել են 1-2 և 6-7 տարեկան երկու երեխաների գանգեր և կմախքի մնացորդներ:

Մ.թ.ա. XII-XI դդ. թվագրվող Մոթքի ձորի թիվ 3 վաղերկաթիդարյան դամբարանում, մոտ 65 տարեկան նահապետի ոտքերի տակ, ոչխարի ոսկորների մոտ, դամբանախցի հյուսիսային անկյունում զետեղված էր նորածնի կմախք:

Մ.թ.ա. XII-XI դդ. թվագրվող Մոթքի ձորի թիվ 5 վաղերկաթիդարյան դամբարանում, մոտ 45 տարեկան նահապետին ուղեկցող անձնակազմի անդամներից մեկի՝ հյուսիսային պատի տակ նստած կնոջ մոտ (չի բացառվում նաև գրկում), նորածնի գանգի բեկորներ են բացվել:

Մ.թ.ա. IX-VIII դդ. թվագրվող Ներքին Գետաշենի թիվ 12 դամբարանում, հասուն տղամարդուն ուղեկցող անձնակազմի մեջ առկա էին 1-2 տարեկան երեխայի կմախքի մնացորդներ:

Մ.թ.ա. VIII-VII դդ. սահմանագծով թվագրվող Գեղիովտի վանտոսայան (ուրարտական) քարայր-դամբարանում ևս խմբային թաղումն ուղեկցվում էր 1-2 ամսական, մինչև 2 ամսական և 2-3 ամսական նորածինների գանգերի մնացորդներով:¹⁴

¹³ Բ.Մկրտչյան, Ա.Փալիպոսյան, Ա.Փալիպյան, Коллективное погребение эпохи средней бронзы Неркин Геташена (социокультурная характеристика), "Вестник общественных наук", 1, 1997, с. 130-131.

¹⁴ Ա.Փիլիպոսյան, Ռ.Մարտչյան, Գեղիովտի վանտոսայան (ուրարտական) քարայր-դամբարանը, Եր., 2001, էջ 59:

Ավելացնենք նաև, որ վերը նշված տարիքային սահմաններին համապատասխանող մանուկների զանգեր հայտնաբերվել են նաև Ներքին Գետաշենի միջինբրոնզիդարյան թիվ 35 (1-2 տարեկան), թիվ 24 (5-6 տարեկան), ուշ բրոնզիդարյան թիվ 18 (9-10 տարեկան), թիվ 23 (8-10 տարեկան) և վաղերկաթիդարյան թիվ 40 (5-6 տարեկան) խմբային թաղումներ պարունակող դամբարանային համալիրներում:

Խմբային թաղումների և մասնավորապես նորածինների ու երեխաների զոհաբերման փաստերով դամբանախցեր այս տարածաշրջանում արձանագրել է նաև Ե.Լալայանը դեռևս 1905-1908 թթ. պեղումների ընթացքում:¹⁵

Միաժամանակյա ակտով արված խմբային թաղումների և վերջիններում մասնավորապես մանուկների զոհաբերման երևույթը բավական հին արմատներ ունի և հայտնի է Մերձավոր Արևելքի և հարակից շրջանների Բրոնզի-Երկաթի դարաշրջանների մի շարք հնավայրերից (Նատուֆ, Երիքով, Գեգեր, Շոշ, Խաթուշաշ, Թել Բեյդար և այլն):¹⁶ Երեխաների զոհաբերման կամ մանկասպանության մոտիվը լավ ներկայացված է նաև քննարկվող տարածաշրջանի առասպելներում ու բանավոր գրույցներում: Մասնավորապես, նման հատկություններ են վերագրվում շումերական Դիմմեին, արքաական Լամաշտուին և Շեդուին, պաղեստինյան Լիլիթին, հունական Ուրանոսին և Քրոնոսին, էգեյան Մելիկերտեսին, հռոմեական Սատուրնոսին, սենական Ադրամելեքին, իրանական Տիտան, Հապետոսթե և Ջրվան եռյակին և այլն:¹⁷ Ըստ ամենայնի, վերոհիշյալ և՛ փաստացի հնագիտական համալիրներում, և՛ առասպելական սյուժեներում, գործ ունենք մեկ ընդհանուր և չափազանց արխաիկ սովորույթի հետ, ըստ որի, երեխայի կամ երեխաների (մասնավորապես նորածինների) զոհաբերությունը կարևոր դեր ուներ ամրոցաշինության հաջող ավարտի, ռազմական ներխուժմանը դիմակայելու, մոտալուտ տարերային աղետը կանխելու, իշխանությունն ու կառավարումը հաստատ պահելու և մահացած նահապետի (նաև՝ աստծու) վերածնունդն ապահովելու գործում: Այս համատեքստում Գեղարքունիքի մ.թ.ա. II-I հազ. խմբային թաղումների և դրանցում «սրբազան մանկասպանության» փաստը, թերևս, կարող է

¹⁵ Ե.Լալայան, Պեղումներ Նոր Բայազետի գավառում 1908թ., - «Ազգագրական հանդես», գիրք XIX, 1, Թիֆլիս, 1910, էջ 65-67: Ե.Լալայան, Դամբանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Եր., 1931, էջ 75-76:

¹⁶ Всемирная история, т. 1, М., 1955, с. 394. Дж. Маккуин, Хетты и их современники в Малой Азии, М., 1983, с. 135. М.Элиаде, Азиатская алхимия, М., 1998, с. 128. М. Хлобыстина, Биритуальные погребения Евразийской степи в Бронзовом веке.- КСИА, 193, М., 1988, с. 20-27; Հերոդոտոս, անդ, էջ 243-245: Զ. Ֆրեգեր, Ոսկե ճյուղը, Եր., 1989, էջ 138:

¹⁷ Мифы народов Мира, т. 2, М., 1991, с. 36, 55, 641. Р.Грейвс, указ. раб., с. 24-29; Զ. Ֆրեգեր, անդ, էջ 346-347, 349: Дж. Комей, Кто есть кто в Ветхом Завете, М., 1998, с. 45; Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Եր., 1968, էջ 80; Э.Церен, Лунный бог, М., 1976, с. 234; S. Piggot, Ancient Europe, Edinburgh, 1965, p. 40-41:

բացատրվել հատկապես վերջին (նահապետի վերածննդին նպաստելու) հանգամանքով: Դրա առասպելաբանական բանսձեր թերևս առավել ցայտուն արտահայտված է հունական Քրոնոս և հռոմեական Սատուրնուս աստվածներին առնչվող առասպելաբանական սյուժեներում, երբ սեփական երեխաների սպանությունը (կլանումը) իշխանության պահպանման, վերածնվելու և հարատևման պայման է: Առասպելական այս բանաձևը Քրոնոսի պարագայում մատնանշում է նախաստեղծ արարչի (տվյալ դեպքում՝ ժամանակի աստծու) կողմից ստեղծվածի սկիզբն ու ավարտը հենց նույն անմահ նախաստեղծի (ժամանակի) մեջ, իսկ Սատուրնուսի (բնության ու զարթոնքի աստծու) դեպքում՝ բուսական աշխարհի գարնանային զարթոնքի ու աշնանային մահվան անհրաժեշտ հերթափոխությունը հայր բնության վերածննդի համար:

Նահապետի ու նահատակների փոխհարաբերությունների ու սերնդափոխության կոնկրետ փաստերն էլ, ինչպես նաև վերջինիս առասպելական տարաբնույթ դրսևորումները (սրբազան մանկասպանություն, հայրերի ու որդիների հակադրություն ու հակամարտություն, ազգակցական-արենակցական ինցեստ և այլն) ժամանակի ընթացքում սոփոկլեսյան ձևակերպում են ստացել, ինչն էլ Չ.Ֆրեյդին¹⁸ և նրա դպրոցի ներկայացուցիչներին (Գ.Յունգ, Օ.Ռանկ) հոգեբանական ուսումնասիրությունների և վերակազմությունների հիմք է տվել:

¹⁸ 3. Фрейд, Два фрагмента об Эдипе (в сб. "Между Эдипом и Озирисом: Становление психоаналитической концепции мифа"), из серии "Археология Сознания", Львов.-М., 1998, с. 39-62.

ՏՂԱՆԵՐԻ ԵՎ ԱՂՋԻԿՆԵՐԻ ԱՐԴԻ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ
ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐՆ ՌԻՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

Չնայած գիտության մի շարք բնագավառներ՝ հոգեբանություն, սոցիոլոգիա, ազգաբանություն, ժողովրդագրություն մասնակցում են այդ հիմնախնդրի լուսաբանմանը, սակայն, առ այսօր, կնոջ և ամուսնու կերպարների վերաբերյալ անձի գիտակցության մեջ ձևավորված պատկերացումները համեմատաբար սակավ են ուսումնասիրված: Հայտնի է, որ անձի գործունեության կառավարման կարևորագույն մեխանիզմների թվում առկա են վաղօրոք ձևավորված կերպարներ,¹ որոնք հասարակական լայն առումով էական սոցիալական և հոգեբանական նշանակություն ունեն: Կերպարների ազդեցությունը դրսևորվում է ինչպես ամուսնությանը և ընտանիքին առնչվող հարցերում, այնպես էլ բազմաթիվ այլ ոլորտներում՝ տնտեսություն, սոցիալական ապահովություն, առողջապահություն, բարոյականություն, քրեական իրավիճակ և այլն:

Իդեալական կնոջ և ամուսնու կերպարների, ինչպես նաև տղաների ու աղջիկների բացասական հատկանիշների ձևավորման վերաբերյալ մի քանի առանձնահատկություններ բացահայտելու նպատակով, սոցիոլոգիական հարցումներ անցկացվեցին Երևանի ուսանողության միջակայքում՝ ՀԴԾՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի ուսանողների ուժերով, այդ նույն բուհի և Վ. Բրյուսովի անվ. օտար լեզուների ինստիտուտի ուսանողների մեջ 2000թ. հարցման է ենթարկվել 82 ուսանող, 76 տոկոսը՝ աղջիկ, 24-ը՝ տղա:

Ստացված բաղձալի կնոջ և ամուսնու հատկանիշները բավական մեծ թիվ են կազմում, որը վկայում է անձի առօրյա հոգեբանական գիտելիքների դերը, որոնք անձն օգտագործում է սոցիալական իրականության տարբեր երևույթներ նշելու ընթացքում: Բաղձալի ամուսնու հատկանիշները նշվել են 111, իսկ կնոջը՝ 117 բառով և բառակապակցությամբ: Այդ բառերի մի մասը հոմանիշներ են կամ իմաստային բովանդակությամբ համընկնում են: Գործնական առումով կարևոր է տղաների և աղջիկների մեջ ձևավորված կերպարների համեմատական վերլուծությունը, քանի որ դրանց միջև անհամապատասխանությունն է, որ կարող է հանգեցնել բացասական սոցիալական հետևանքների: Նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ

¹ См. Б. Ф. Ломов, Е.Н. Сурков. Антиципация в структуре деятельности. М., 1980. Польша Фресс, Жан Пиаже. Экспериментальная психология. Вып. VI, М., 1978, с.43-46.

և՛ տղաների, և՛ աղջիկների պատկերացումներում հիմնականում պահպանվել են այն հատկանիշները, որոնք գոյություն ունեին շուրջ 15 տարի առաջ: Իդեալական կնոջ հիմնական հատկանիշներն են՝ հավատարմությունը, ընտանիքին նվիրվածությունը, համբերատարությունը, համեստությունը, հոգատարությունը, աշխատասիրությունը և այլն: Իդեալական ամուսու հատկանիշներն են՝ հոգատարությունը, ընտանիքին նվիրվածությունը, ուշադրությունը, աշխատասիրությունը, խելքը, հարգանքը կնոջ նկատմամբ և այլն: Սակայն, ամուսնու թվարկված հատկանիշների ցանկում այժմ տարբերությունն այն է, որ առաջին կարգ է բարձրացել աշխատասիրությունը, որն արդի սոցիալ-տնտեսական իրավիճակի արգասիք է:

Գործնական և գիտական առումներով հույժ կարևորվում է նաև ժամանակակից տղաների ու աղջիկների բացասական հատկանիշների վերլուծությունը: Այդ կարծիքների մի մասը ստերեոտիպային բնույթ ունի, խիստ սխեմատիկ է, հուզական մեծ լիցքով, ուստի կարող է էապես ազդել ինչպես երիտասարդ տղաների ու աղջիկների նախամուսնական շփման, փոխադարձ ընկալման, այնպես էլ ամուսնության գործընթացի վրա:

Ուսանողների նշած բացասական հատկանիշների ցանկը նույնպես բավական ընդարձակ է և կազմում է շուրջ 90 բառ ու բառակապակցություն: Աղջիկների 10 բացասական հատկանիշների թվում են՝ անհամեստությունը, թեթևամտությունը, գոռոզությունը, շահամոլությունը, բարդույթներ ունենալը, կեղծավորությունը, անպարկեշտությունը, փողասիրությունը, անգսպությունը և գռեհիկ խոսելաձևը: Տղաների առավել հաճախ նշվող 10 բացասական հատկանիշներն են՝ մեծամտությունը, անլրջությունը, կոպտությունը, գռեհկությունը, եսասիրությունը, անհավատարմությունը, «ռաբիս» լինելը, ծուլությունը, շահամոլությունը, կնամոլությունը: Նշված հատկանիշները, ըստ երևույթին, տարաբնույթ են և ունեն ձևավորման սոցիալական ու հոգեբանական առանձնահատկություններ:

Նյութերի քննությունը ցույց է տալիս, որ միջանձնային ընկալման և գնահատման գործընթացում տղաների և աղջիկների մեջ գոյություն ունեն որոշակի առանձնահատկություններ: Սոցիալ-հոգեբանական հետազոտություններից հայտնի է, որ դերային բաղդատումներում ավելի դյուրին են ընկալվում տարանջատող հատկանիշները, այսինքն՝ այլոց կերպարը, քան միավորողները՝ սեփական խմբինը: Ընդհանուր առմամբ, մեր նյութերում նույնպես նկատվում է այս օրինաչափությունը: Ե՛վ աղջիկների, և՛ տղաների պատասխաններում սեփական դերային բացասական հատկանիշների տեսականին փոքր է դիմացինի համեմատ: Սակայն, եթե աղջիկների պատասխաններում այդ տարբերությունը կազմում է ընդհանուր հինգ բառ, ապա տղաների պատասխաններում այն խիստ զգալի է և մեծ է շուրջ երկու անգամ: Այս երևույթին կարելի է տարբեր բացատրություններ տալ: Սակայն փաստ է,

որ տղաների կարծիքն աղջիկների մասին ավելի բացասական է, քան աղջիկներինը՝ տղաների մասին:

Ներկայում տղաների ու աղջիկների կարծիքները միմյանց մասին լուրջ ուշադրության չեն արժանանում, որով թերի են մնում ընտանիքի և ամուսնության մի շարք հիմնախնդիրների լուսաբանումները: Ավելին, դիտարկումները ցույց են տալիս, որ դրանք վարքի կարևոր, դրդապատճառներ են և կարող են ունենալ բացասական հետևանքներ:²

² О. А. Лебедь. Социальный портрет семьи в современном фольклоре. — Соц. исследования. 1999, 1, с. 137.

Հ ա պ ա վ ու ն ն ե ր

ԱՄԻ – ՈՂ ԳԱ Ազգաբանության և մարդաբանության ինստիտուտ
«Էթնոս» ԳՀԿ - էթնո-մշակութային գիտ. հետազոտությունների կենտրոն
ԵՊՀ - Երևանի պետական համալսարան
ԵՊՊԹ - Երևանի քաղաքի պատմության պետական թանգարան
ԿՊՀ – Կուրանի պետական համալսարան
ՀԱԻ – ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՊՃՀ – Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան

С о к р а щ е н и я

ГИУА – Государственный инженерный университет Армении
ГМИЕ – Государственный музей истории г. Еревана
ЕГУ – Ереванский государственный университет
ИАЭ – Институт археологии и этнографии НАН РА
ИЭА – Институт этнологии и антропологии РАН
КубГУ – Кубанский государственный университет
"Этнос" – Центр этно-культурных научных исследований

ABBREVIATIONS

"Ethnos" – Center of Etno-Cultural Scientific Studies
IAE – Institute of Archaeology and Ethnography of the National Academy of Sciences of Armenia
IEA – Institute of Ethnology and Anthropology of the Academy of Sciences of Russia
KSU – Kuban State University
SEUA – State Engineering University of Armenia
SMHY – State Museum of the History of the City of Yerevan
YSU – Yerevan State University

Բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ու ն

<i>Վարդանյան Լիլյա, ԶԱԻ, Վարդումյան Դերենիկ, ԶԱԻ,</i> Էմմա Կարապետյանի կյանքն ու գործունեությունը (գիտնականի բնութագրության փորձ)	5
<i>Պողոսյան Սվետլանա, ԶԱԻ,</i> Հայ ազգագրության մեծ տիկինը. դիմագիծ	10
<i>Աբրահամյան Լևոն, ԶԱԻ,</i> Ազգ-պետություն, թե՞ ընտանիք պետություն. Հայ ինքնության ընտանեկան առանձնահատկությունները	12
<i>Անտոնյան Յուլիա, ԵՊՀ,</i> Հայոց ընտանիքում գուշակության (բուժման) «շնորհի» ժառանգական ծևերի փոխանցման հարցի շուրջ (ռուս.)	17
<i>Գաբրիելյան Մխիթար, ԶԱԻ,</i> Կնոջ դերը ժամանակակից հայկական գյուղական ընտանիքում.....	22
<i>Գալստյան Միհրան, ԶԱԻ,</i> Ընտանիքի հիմնախնդիրները տնտեսական տեղաշարժերի համատեքստում	27
<i>Գրիգորյան Ռոզա, ԶԱԻ, Սելիք-Մուրադյան Երանուհի, ԶԱԻ,</i> Մոր դերը մանկան դաստիարակության նախնական փուլում (ըստ հայ մանկական բանահյուսության նյութերի).....	30
<i>Դուժենկո Իրինա, ԶԱԻ,</i> Հայաստանի ասորիների ընտանեշինության որոշ հարցեր (ռուս.)	39
<i>Զաքարյան Թամար, ԶԱԻ, Սարգսյան Համլետ, ԶԱԻ,</i> Հայ կնոջ գլխի հարդարանքի առանձնահատկությունները և տարածման շրջանները (19-րդ դ.-20դ. կեսեր)	45
<i>Խառատյան Լուսինե, ԶԱԻ, Շազոյան Գայանե, ԶԱԻ,</i> «Ընտանիք»-ն արդի հասարակական կազմակերպությունների համատեքստում.....	49
<i>Կարապետյան Ռուբեն, ԶԱԻ,</i> Հայոց ընտանիքը անցումային շրջանի համատեքստում (ռուս.)	54

<i>Հմայակյան Սիմոն, ՀԱԻ,</i> Ուրարտուհին.....	59
<i>Մարգարյան Հասմիկ, ՀԱԻ,</i> Գոտին հայոց տարագի համալիրում	67
<i>Մարգարյան Նիկոլ, ՀԱԻ,</i> Անվանակոչության որոշ յուրահատկություններ հայոց ընտանիքում	70
<i>Մկրտչյան Սամվել, ՀԱԻ,</i> Ընտանիքն ու ազգակցական-բարեկամական միջավայրը տոների ավանդույթացման համատեքստում.....	75
<i>Շահնազարյան Նոնա, ԿՊՀ, Գուլիստվա Էլզա-Բաիր, ԱՄԻ,</i> Արցախահայերի գենդերային ստերեոտիպերը (ռուս.).....	81
<i>Պողոսյան Սվետլանա, ՀԱԻ,</i> Աշխատող կինն արդի հայ հասարակությունում (նախնական դիտարկումներ).....	87
<i>Սարգսյան Արմինե, ԵՊՊԹ,</i> Խուսափումները որպես ամուսնական մտերմությունը քողարկելու ձև.....	92
<i>Ստեփանյան Արմենուհի, ՀԱԻ,</i> Հայրենադարձների ենթաէթնիկ ինքնագիտակցության դրսևորումներն ամուսնական կապերում	97
<i>Փիլիպոսյան Աշոտ, ՀԱԻ, «Էթնոս» ԳՀԿ, Մկրտչյան Ռուզան, ՀԱԻ,</i> Մանկասպանությունը Գեղարքունիքի մ.թ.ա. II-I հազարամյակների խմբակային թաղումներում.....	100
<i>Օհանջանյան Ռուբեն, ՀԱԻ, ՀՊԵՀ,</i> Տղաների և աղջիկների արդի բացասական հատկանիշների պատկերացումներն ուսանողության միջավայրում	106

С о д е р ж а н и е

<i>Варданын Лилия, ИАЭ, Вардумян Дереник, ИАЭ,</i> Жизнь и деятельность Эммы Тиграновны Карапетян (опыт характеристики ученого).....	5
<i>Погосян Светлана, ИАЭ,</i> Старейшина армянской этнографии. Штрихи к портрету.....	10
<i>Абрамян Левон, ИАЭ,</i> Нация-государство или семья-государство. Семейные особенности армянской идентичности.....	12
<i>Амаякян Симон, ИАЭ,</i> Женщина в Урарту.....	59
<i>Антонян Юлия, ЕГУ,</i> К вопросу о наследственных формах передачи "дара" гадания /целительства в семье у армян.....	17
<i>Габриелян Мхитар, ИАЭ,</i> Роль женщины в современной армянской сельской семье.....	22
<i>Галстян Мигран, ИАЭ,</i> Проблемы семьи в контексте экономической миграции.....	27
<i>Григорян Роза, ИАЭ, Мелик-Мурадян Ерануи, ИАЭ,</i> Роль матери на начальном этапе социализации ребенка (по материалам армянского детского фольклора).....	30
<i>Долженко Ирина, ИАЭ,</i> Некоторые вопросы семейного строительства у ассирийцев Армении.....	39
<i>Закарян Тамар, ИАЭ, Саргсян Гамлет, ИАЭ,</i> Особенности головного убора армянской женщины и ареалы его распространения (XIX — половина XX вв.).....	45
<i>Карапетян Рубен, ИАЭ,</i> Армянская семья в контексте переходного периода.....	54

<i>Маркарян Асмик</i> , ИАЭ, Пояс в комплексе армянской традиционной одежды.....	67
<i>Маркарян Никол</i> , ИАЭ, Некоторые особенности имянаречения в армянской семье.....	70
<i>Мкртчян Самвел</i> , ИАЭ, Семья и родственная среда в контексте традиционализации праздничной культуры.....	75
<i>Оганджян Рубен</i> , ИАЭ, ГИУА, Современные представления об отрицательных качествах юношей и девушек в студенческой среде.....	106
<i>Пилипосян Ашот</i> , ИАЭ, "Этнос", <i>Мкртчян Рузан</i> , ИАЭ, Детоеубийство в коллективных захоронениях II-I-тыс. до н.э. в Гехаркунике.....	100
<i>Погосян Светлана</i> , ИАЭ, Работающая женщина в современном армянском обществе /предварительные заметки/.....	87
<i>Саргсян Армине</i> , ГМИЕ, Избегание как завуалированная форма супружеских отношений.....	92
<i>Степанян Армине</i> , ИАЭ, Проявление субэтического самосознания репатриантов в брачных отношениях армян.....	97
<i>Харатян Лусине</i> , ИАЭ, <i>Шагоян Гаяне</i> , ИАЭ, "Семья" в контексте современных общественных организаций.....	49
<i>Шахназарян Нона</i> , КубГУ, <i>Гучинова Эльза-Баир</i> , ИЭА, Гендерные стереотипы армян Арцаха.....	81

CONTENTS

<i>Vardanyan, Lilya and Vardumyan Derenik</i> , IAE, The Life and Work of Emma Karapetyan (An Attempt of a Scientist's Description).....	5
<i>Poghosyan, Svetlana</i> , IAE, The Grand Lady of Armenian Ethnography: A Sketch.....	10
<i>Abrahamian, Levon</i> , IAE, Nation State or Family State? Family Characteristics of the Armenian Identity.....	12
<i>Antonyan, Yulia</i> , YSU, On Hereditary Forms of Transferring the Gift of Prophecy/Healing in the Armenian Family (in Russian).....	17
<i>Dolzhenko, Irina</i> , IAE, Some Problems of Family Building among the Assyrians of Armenia (in Russian).....	39
<i>Gabrielyan, Mkhitar</i> , IAE, Woman's Role in the Contemporary Armenian Rural Family.....	22
<i>Galstyan, Mihran</i> , IAE, Family Problems in the Context of Economic Migrations.....	27
<i>Grigoryan, Rosa and Melik-Muradyan, Yeranuhi</i> , IAE, Mother's Role in the Preliminary Period of Child Nurturing (on the Materials of the Armenian Folklore of Childhood).....	30
<i>Hmayakyan, Simon</i> , IAE, The Woman in Urartu.....	59
<i>Karapetyan, Ruben</i> , IAE, Armenian Family in the Context of Transition Period (in Russian).....	54
<i>Kharatyan, Lusine and Shagoyan, Gayane</i> , IAE, "Family" in the Context of Contemporary Non-Governmental Organizations.....	49
<i>Margaryan, Hasmik</i> , IAE, The Belt in the Traditional Armenian Costume.....	67

<i>Margaryan, Nikol</i> , IAE, Some Features of Children's Naming in the Armenian Family.....	70
<i>Mkrtchyan, Samvel</i> , IAE, Family and Kin Network in the Context of Traditionalizing the Festivities.....	75
<i>Ohanjanyan, Ruben</i> , IAE, SEUA, Modern Images on Negative Characterization of Guys and Girls in Students Environment.....	106
<i>Philiposyan Ashot</i> , IAE, "Ethnos" and <i>Mkrtchyan Ruzan</i> , IAE, Infanticide in the Group Burials of the 2-nd - 1-st Millenia in Gegharkunik.....	100
<i>Poghosyan, Svetlana</i> , IAE, The Working Woman in Contemporary Armenian Society (Preliminary Observations).....	87
<i>Sargsyan, Armine</i> , SMHY, Avoidance as a Latent Form of Marital Relations.....	92
<i>Shahnazaryan, Nona</i> , KSU, and <i>Goutchinova, Elza-Bair</i> , IEA, Gender Stereotypes among the Artsakh Armenians (in Russian).....	81
<i>Stepanyan, Armenuhi</i> , IAE, Manifestation of Subethnic Identity in Marital Relations of the Repatriate Armenians.....	97
<i>Zakaryan, Tamar</i> and <i>Sargsyan, Hamlet</i> , IAE, Details of the Armenian Female Headdress and It's Areal Dessimation (in 19-th – mid 20-th centuries).....	45

ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
Հանրապետական գիտաժողովի նյութեր

Проблемы исследования семьи
Материалы республиканской научной сессии

Համակարգչային տեքստը հավաքված է ՀՀ ԳԱԱ հնագիտության և
ազգագրության ինստիտուտում
Տեքստի համակարգչային ծնավորումը՝ Վարդ Ամիրխանյան

ՆՇՈՒՄ ՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԳԱՍ Հիմնադրադ գիտ. գրադ.



FL0065836

[400 pp.]

A $\bar{11}$
86670